# ԳԻՐՔ

Գաւազան թղթոյ

Աշակերտացն Ճշմարիտ Բանին Քարոզութեան։

Աս զմասնաւորն իշխա-
նութի որ է չորս աստիճան
գաւազանի։ Եւ ապա ըղ
ծայրագոյնն որ է տասն աս-
տիճան։ Որ լինի բոլորն չո-
րեքտասան աստիճան Վար-
դապետական Ծայրագոյն
Իշխանութի։

Արարեալ եւ յօրինեալ սըր-
բոյն Գրիգորի Տաթեւացւոյ
գերազանց գիտնականի,
Ճշմարտուն վարդապետի,
Գերահանճար հռետորի եւ

անյաղթ ախոյանին մեր հաւատոյ
Աշակերտի մեծին Յօհաննու
Որոտնեցւոյ անհամեմատ գիտ-
նականի։ Ի լուսազարդ բանից
ածաբան մարգարէին եսայեայ՝
լուսաւոր մտօք մեկնօղօրէն իմ
տեսութեամբ կարգաւորեալ։

Եւ Տպեցեալ ՚ի Կոստանդնու-
պօլիս։ Հրամանաւ և արդ-
եամբ նորին գրասէր Պատրի-
արքի Գէորգ Լծաբան
Վարդանի Գա-
փանցւոյ։

Կանոն Մանկանց Խաչկալութեան տալոյ
Սաղմոսերգացն Ընթերցողութեան. որ է
չորս աստիճանն գաւազանի։

Այս է արարողութիւնն ըստ
ուղղափառ Հայաստանեայց եկե-
ղեցւոյ։

Առաջին Աստիճանն դռնապանութեան յա-
ռաջին նուիրոց եկեղեցւոյն
սաղմոսի բերեն։

# ԱԾԵՆ ԶԸՆ

ծայեալն առաջի բեմին. և
նստի եպիսկոպոսն յաթոռ. և ըն-
ծայեալն ՚ի ծունկս չոքի առաջի
նորա։ Եւ զարդարեն զգաւազանն



և

և տան 'ի ձեռն պատուաւոր քա-
հանայի, և կամ աւագ սարկաւագի.

Նաև տուն շարական ձկ.

Աշակերտուրք քո՝ Ե՛ւ առ տ՛մ տի՛
եղե՛րս առաքեալք. բարեխօսե
ցէ՛ք առ տէ՛ր վասըն մեր. Որք ա-
ռի՛ք ը՛ղ պատուէ՛ր քարոզե՛լ աներ
կի՛ւղ ըղ բանի՛ն կենա՛ց յաշխար
հի. բա". Որք արժանի եղէ՛ք
տեսանե՛լ մարմնով զորդի՛ն Ա՛յ
յայտնապէս. բարե".

Որ սփռօղդէք արարչի՛ն արա՛րա
ծոց քե՛ սուրբ առաքե՛լք. բա.
Որ քարոզդ էք ընդ հանուր տի
եզերաց. քե՛ սուրբ առաքեալք.
բա. Որ պըսակդ էք Ա՛մ եկեղե
ցեաց. քե՛ սբ՛ առա".

Նաև տուն խորհրդականին երկնայինք
տէր պաշտօնէիցն,

Հրամայեա՛ տ՛ր. օրհնութի՛ւ ասել.



Նա՟

Սա. Սարկաւագն ասէ։

Օրհնեսցէ՛ զձեզ տէր ՚ի յերկնէ, և՛ ՚ի յերկրէ։ Դպ. Ձէ. Ժողովուրդն։

Հրամայեա՛ տէր. օրհնութիւն ասել։

Սարկաւագն։

Օրհնեսցէ՛ զձեզ տէր ՚ի սիօնէ. այն որ բնակեալն է յեղէմ։

Ժողովուրդն։

Հրամայեա՛ տէր. օրհնութիւն ասել։

Սարկաւագն։

Հրամայեալ է ձեզ ՚ի տնէ խօսիլ։

Ժողովուրդն։

Շնորհազարդ սբ. Հայրապետ. որ ես հաստատեալ հովիւ հօտին քո. խնդրեմ ՚ի քէն մայրս մեր սբ. եկեղեցի հանդերձ ամենայն ուխտիւս. զի կոչեսցես (այս անուն) բանի սպասաւոր, ՚ի պաշտօն և յաստիճան մասնաւոր վարդապետութեան։

Հարցանէ Սարկաւագն և ասէ։

Ունի՞ զուսումն Վարդապետութեան և զգիտութիւն հին և նոր



կտ

ա̄ծային կտակարանացն ս̄բց . և զդաւանութիւն ուղղափառ խոստովանութեան հաւատոյ 'ի ս̄բ Երրորդութին և'ի մարդեղութին քի ա̄յ մերոյ . և հրաժարիմ յա̄մ հերձուածողաց աղանդից։

Ասէ խոստովանողն։

Ես հայր ս̄բ . ունիմ լիովին զուսումն վարդապետութեան և զգիտութին հին և նոր ա̄ծային կտակարանացն ս̄բց . և զդաւանութին ուղղափառ հաւատոյ . և խոստովանիմ զսուրբ զԵրրորդութին զՀայր և զՈրդի և զս̄բ Հոգին համագոյ և միասնական։ Եւ զմարդեղութին քի ա̄յ մերոյ ընդ սուրբ հայրապետացն ուղղափառաց ։

Եւ Եպիսկոպոսն ասէ։

Պարտ է քեզ որդեակ հրաժարիլ յա̄մ աղանդոյ հերձուածողաց . որք ընդ դէմ խօսեցան ուղղափառ հաւատոյն քի ա̄յ մերոյ։



Եւ

Նոյն աւուր Պաշտօնէութեան յայնիւ.
անաւթիւմս. նուագեալ երգցի.

Նախ եպիսկոպոսն հրաժարեցուցանէ զըն-
ծայեալն յամ՟ հերձուածողաց. եւ ապա ըն-
թանու զմբ աղաչական հայրապետին
որ գրեալէ ՚ի ծայրագունին.

Նախ ասէ եպիսկոպոսն.

Հոգին սբ ած ճշմարիտ որ էջ ՚ի յորդանան եւ ՚ի վերնատունն. եւ յայտնեաց զքո ածութիւնն. Նոյն հեղումն շնորհաց սուրբ հոգւոյն իջցէ եւ ծաւալեսցի ՚ի վր քո ՚ի ճանաչումն ածութեն քո Ըստ որում ոչ ոք կարէ ասել տր զյս, եթէ ոչ հոգւով սրբով. Նա՛ պայծառացուսցէ զմիտս քո ՚ի դաւանութի ուղղափառ հաւատոյ ընդ հայրապետացն ուղղափառաց.

Նոյն պաշտօնէութեան եւ ձայնաւորաց աւուր
Նմին երգցի երգցի.
Նոյն ասէ աւուր. ալէլուիայ ալէլ՞.
Խնդրեա յինէն եւ տաց քեզ զժղ

հեթանոսս 'ի ժառանգութ̃ի եւ յիշ
խանութ̃ի ընդ ա̃մ ծագս երկրի.
Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք. եւ
ժողովուրդք խորհեցան խնոտիս

### Ընթերցուած Ելից.

Եւ ասէ տ̃ր ցՄովսէս. եւ արդ
ե՛կ առաքեցից զքեզ առ փա
րաւոն արքայ եգիպտացւոց. եւ
հանցես զժողովուրդ իմ զորդիսն
իՙէլի յերկրէն եգիպտացւոց.
Եւ ասէ Մովսէս ցտ̃ր. ո՞վ եմ ես
զի երթայցեմ առ փարաւոն ար
քայ եգիպտացւոց եւ հանիցեմ
զորդիսն իՙէլի յերկրէն եգիպտա
ցւոց. Եւ ասէ, ես եղէց ը̃ն քեզ:
Եւ այս եղիցի քեզ նշան թէ ես
առաքեցի զքեզ հանել զժողո
վուրդ իմ յեգիպտոսէ. եւ պաշ
տեսջիք զա̃ծ 'ի լերինս յայսմիկ.
Եւ ասէ Մովսէս ցտ̃ր, աՀա ես եր
թամ առ որդիսն իՙէլի եւ ասիցեմ
ցնո̃, Ա̃ծ հարցն ձեր առաքեաց
զիս առ ձեզ. եւ հարցանիցեն զիս
թէ զինչ է անուն նր̃, զի՞նչ ասա

ցից ցն՟ա։ Եւ ասէ ա՟ծ ցմովսէս,
ես եմ ա՟ծ որ էնն։ Եւ ասէ, այսպ՟
ասասցես որդւոցն ի՟էլի․ որ էնն
առաքեաց զիս առ ձեզ։ Եւ ասէ
դարձեալ ա՟ծ ցմովսէս․ այսպէս ա-
սասցես որդւոցն ի՟էլի, տ՟ր ա՟ծ
հարցն ձերոց՝ ա՟ծ աբրահամու,
ա՟ծ իսահակայ, և ա՟ծ յակոբայ
առաքեաց զիս առ ձեզ․ այս է ա-
նուն իմ յաւիտենական․ և յշ՟տկ
իմ յազգաց յազգս։ Արդ՝ եր
թեալ ժողովեսցես զծերակոյտ
որդւոցն ի՟էլի և ասասցես ցն՟ա,
որ ա՟ծ հարցն ձերոց երևեցաւ
ինձ․ ա՟ծ աբրահամու, ա՟ծ իսա
հակայ, և ա՟ծ յակոբայ և ասէ,
այցելութեամբ այց արարի ձեզ․
և որ ինչ անցք անցին ընդ ձեզ
յեգիպտոս։ Եւ ասեմ, հանից
զձեզ յերկրէն չարչարանաց ե-
գիպտացւոցն յերկիրն քանանա
ցւոց և քետացւոց և ամորհացւոց
և փերեզացւոց և գերգեսացւոց
և խևացւոց և յեբուսացւոց․ յեր
կիր որ բղխէ զմեղր և զկաթն․

և լուիցեն ձայնի քում։ Այո՛ մտ
ցես դու և ծերակոյտ որդւոյն
իէլի առ փարաւօն արքայ եգիպ
տացւոց և ասասցես ցնա, տր ած
եբրայեցւոց կոչէ զմեզ առ ինքն.
արդ՝ երթիցուք մեք երից աւուրց
ճանապարհ յանապատ, զի զոհես
ցուք տն այ մերում։ Այո՛ ես գի
տեմ եթէ ոչ թողուցու զձեզ ար
քայն եգիպտացւոց գնալ. եթէ
ոչ հզօր ձեռամբ։ Այո՛ ձգեալ
զձեռն իմ հարից զեգիպտոս ամ
ղքանչելեօք իմօք զոր արարից ՚ի
նմ. և արձակեսցէ զձեզ. և տաց
զշնորհս ժողովրդեան իմոյ առա
ջի եգիպտացւոցն։ Այո՛ յորժամ
ելանիցէք, մի՛ ելանիցէք դատարկ
այլ խնդրեսցէ կին ՚ի դրացւոյ
և յերդակցէ իւրմէ անօթս ոսկւոյ
և անօթս արծաթոյ՝ և հանդերձս.
և զարդարեսջիք զուստերս և զդ
ստերս ձեր. և դաւաճանեսջիք
զեգիպտացիսն ։ Պատասխանի ետ
Մովսէս և ասէ, եթէ ոչ հաւատայցեն

 ինձ

ինձ և ոչ լուիցեն ձայնի իմում,
քանզի ասիցեն թէ չիք երևեալ
քեզ ա̄ծ՝ զինչ ասացից ցնոսա։
Ասէ ցնա տ̄ր, զինչ է այդ որ 'ի
ձեռին քում է. և նա ասէ՝ գա
ւազան. և ասէ, ընկեա՛ զդա 'ի
գետին. և ընկէց զնա 'ի գետին
և եղև օձ. և փախեաւ Մովսէս 'ի
նմանէ։ Եւ ասէ տ̄ր ցՄովսէս,
ձգեա՛ զձեռն քո և բո՛ւռն հար
զորտանէն. և ձգեաց զձեռն իւր
և բուռն էհար զտտանէն և եղև
գաւազան 'ի ձեռին ն̄ր. զի հաւա
տասցեն քեզ ասէ՝ եթէ երևեալ է
քեզ տ̄ր ա̄ծ հարցն ն̄ց. ա̄ծ աբ
րահամու ա̄ծ իսահակայ և ա̄ծ
յակոբայ։ Եւ ասէ ցնա դարձ̄լ
տ̄ր, արկ զձեռն քո 'ի ծոց քո. և
էարկ զձեռն իւր 'ի ծոց իւր և
էհան զնա 'ի ծոցոյ իւրմէ. և եղև
ձեռն նորա բորոտ իբրև զձիւն։
Եւ ասէ, արկ զձեռն քո 'ի ծոց
քո. և էարկ զձեռն իւր 'ի ծոց
իւր և եհան զնա 'ի ծոցոյ իւրմէ


և

և հաստատեցաւ ՚ի գոյն մարմնոյ
իւրոյ։ Եթէ ոչ հաւատայցեն քեզ
ասէ և ոչ լուիցեն ձայնի առաջ
նոյ նշանին, հաւատայցեն քեզ
ձայնի երկրորդի նշանիդ։
Եւ եղիցի եթէ ոչ հաւատասցեն
երկոցունց ևս նշանացդ այդոցիկ
և ոչ լուիցեն ձայնի քում, առ
ցես ջուր ՚ի գետոյն և հեղցես ՚ի
ցամաքի. և եղիցի ջուրն զոր առ
նուցուս ՚ի գետոյ անտի՝ արիւն
՚ի ցամաքի։ Եւ ասէ մովսէս ցՏր.
աղաչեմ զքեզ Տր, չեմ բաւական
ոչ թէ յերեկէ և յեռանդէ և
ոչ յորմէհետէ սկսար խօսել ընդ
ծառայի քում. զի նրբաձայն և
ծանրալեզու եմ ես։ Եւ ասէ
Տր ցմովսէս, ով ետ բերան մար
դոյ. կամ ո՞ արար զխուլն և ըզ
համրն. զականին և զկոյրն.
ոչ ապաքէն ես Տծ։ Եւ արդ՝
երթ և ես բացից զբերան քո.
և խելամուտ արարից զքեզ զոր
պարտ իցէ խօսել։ Եւ ասէ,


աղա

աղաչեմ զքեզ տր, առ քեզ 'ի ձեռն
զայլ ոք զօրաւոր զոր առաքիցես.
Եւ բարկացաւ տր սրտմտութե
իվր̄ մօսէսի և ասէ, ո՞չ ա՛ւանիկ
կայ ահարոն եղբայր քո ղեւտացի.
գիտեմ զի խօսելով խօսիցի նա
ընդ քեզ. և ահա նա ելցէ ընդ
առաջ քո. և 'ի տեսանելն զքեզ
բերկրեսցի 'ի միտս իւր. և խօ
սեսցիս ընդ նմա և տացես զպատ
գամս իմ 'ի բերան նր. և ես բա
ցից զբերան քո և զբերան նորա.
և խրատեսցից զձեզ զինչ
առնիցէք. Եւ նա եղիցի քեզ բե
րան. և դու եղիցիս նմա յածա
կոյս կողմանէ. Եւ զգաւազանդ
որ դարձաւ յօձ, առցես 'ի ձեռին
քում որով արասցես նշանս.

## Ընթերցուած Առակաց.

Ճանաչել զիմաստութի և զխրատ. իմանալ զբանս հանճարոյ. ընդունիլ զդարձուածս բանից. 'ի միտ առնուլ զարդարութի ճշմ



մա

մարդիտ և ուղղել զկրաւնումս. զի
տացէ անմեղաց զխորագիտութի.
մանկանց տղայոց զմիտս և զհան
ճար. Որոց իբրև լուիցէ իմաս
տունն՝ իմաստնագոյն լիցի. իսկ
որ հանճարեղն իցէ՝ զառաջնոր
դութի ստասցի. Իմա առցէ զա
ռակս և զբանս խորինս. զճառս
իմաստնոց և զառակս նոցա.
Սկիզբն իմաստութե՝ երկիւղ տն.
հանճար բարի ամցուն որք առ
նեն զնա. պաշտօն բարի առ ած՝
սկիզբն զգօնութե. զիմաստութի
և զխրատ՝ ամբարիշտք անգոսնեն.
Լուր որդեակ խրատու հօր քո.
և մի՛ մերժեր զօրէնս մօր քո. զի
պսակ շնորհաց ընկալցիս ՚ի գլուխ
քո և մանեակ ոսկի ՚ի պարանոցի
քում.

Ընթերցուած Յեսայեայ Մարգ.

Եւ եղև յամին յորում մեռաւ
Ոզիա արքայ՝ տեսի զՏր նստեալ
յաթոռ բարձրութե և վերացելոյ.
և լի՛ էր տունն փառօք. և սե

րօբէքն կային շուրջ զնովաւ ։
Վեց թեւք միոյ եւ վեց թեւք միոյ · երկուքն ծածկէին զերեսս իւրեանց · եւ երկուքն ծածկէին զոտըս իւրեանց · եւ երկուքն թռուցեալք աղաղակէին մի առ մի եւ ասէին, ս̃բ ս̃բ ս̃բ տ̃ր զօրութե̃նց · լի՛է ա̃մ երկիր փառօք նորա ·
Եւ վերացաւ դրանդն ՚ի ձայնէն զոր աղաղակէին · եւ տունն լի եղեւ ծխով ։ Եւ ասեմ, վայ է ինձ · ես այր տառապեալ զիարդ կամս հիացեալ · զի մարդ եմ եւ պիղծ շրթունս ունիմ եւ ՚ի մէջ պղծաշուրթն ժողովրդեան բնակեալ եմ ես · եւ զտ̃ր զօրութե̃նց տեսի աչօք իմօք ։ Եւ առաքեցաւ մի ՚ի սերօբէից անտի · եւ ՚ի ձեռին իւրում ունէր զկայծակն · զոր առել ունելեօք ՚ի սեղանոյն՝ եբեր մերձեցոյց ՚ի բերան իմ եւ ասէ, ահաւադիկ մերձեցաւ այդ ՚ի շրթունս քո, եւ հանցէ զանօրէնութիւս քո, եւ զմեղս քո սրբեսցէ ՚ի քէն ։



Եւ

Տէ՛ր լո՛յս զուարթարար տն որ ա-
սէր, զո՞ առաքեցից և կամ ո՞ եր-
թիցէ առ այն ժողովուրդ։
Տէ՛ր ասեմ, ահաւասիկ ես · առա-
քեա՛ զիս։ Տէ՛ր ասէ, երթ և ասա՛
ցժողովուրդն ցայն · լսելով լսի-
ջիք և մի՛ իմասջիք · և տեսանելով
տեսջիք և մի՛ գիտասջիք · զի թանձ-
րացաւ սիրտ ժողովրդեանդ այ-
դորիկ և ականջօք իւրեանց ծա-
նուանս լուան և զաչս իւրեանց
կափուցին · զի մի՛ երբէք տեսա-
նիցեն աչօք, և լուիցեն ականջօք
և իմանայցեն սրտիւք · և դառ-
նայցեն և բժշկեցից զնոսա։

## Ընթերցուած Յերեմիայ Մ՟ր՟։

Պատգամն տն որ եղև ի վր Երե-
միայի քեղկեայ ՚ի քահանայից ան-
տի որք բնակեալ էին յանաթօթ
յերկրին բենիամինի։ Որ եղ-
և բան տն յաւուրս յովսիայ որ-
դւոյ ամօնայ արքայի հրէաստա-
նի՝ յերեքտասաներորդի ամի թա-

գաւորութեան նո՛ր։ Եւ եղև յա՛ւ-
ուրս յովակիմայ որդւոյ յովսիայ
արքային հրէաստանի մինչև 'ի վախ-
ճան մետասաներորդ ամին սեդե-
կիայ որդւոյ յովսիայ արքային յու-
դայ ցգերութիւն երեմի յամսեանն
հինգերորդի։ Եւ եղև բան տ̅ն
առ իս և ասէ, մինչչև ստեղծեալ
իմ էր զքեզ յորովայնի՝ գիտեմ
զքեզ. և մինչչև ելեալ էիր յար-
գանդէ՝ սրբեցի զքեզ. մարգարէ
'ի հեթանոսս եդի զքեզ։ Եւ
ասեմ՝ որ էդ տ̅ր տ̅ր, ահաւա-
սիկ խօսել իսկ ոչ գիտեմ զի մա-
նուկ եմ ես։ Եւ ասէ ցիս տ̅ր,
մի՛ ասեր թէ մանուկ եմ ես. զի
առ ա̅մնեան առ որս առաքեցից
զքեզ երթիցես. և ըստ ա̅մի զոր
հրամայեմ պատուիրեցի քեզ խօ-
սեսցիս։ Մի՛ երկնչիցես յերեսաց
նոցա. զի ես ընդ քեզ եմ 'ի փրկել
զքեզ ասէ տ̅ր։ Եւ ձգեաց տ̅ր
զձեռն իւր առ իս և մերձեցոյց 'ի
բերան իմ և ասէ ցիս, ահաւետու

զբանս իմ 'ի բերան քո · ահա կա-
ցուցի զքեզ այսօր 'ի վ̃ր ազգաց
և թագաւորութ̃ե · խլել և բրել ·
կործանել և յատակել · շինել
և տնկել ։ Եւ եղև բան տ̃ն ա-
ռիս և ասէ , զի՞նչ տեսանես երե-
միա · և ասեմ , գաւազան ընկու-
զի տեսանեմ · և ասէ ցիս տ̃ր ,
բարւոք տեսանես · զի զարթուն̃
եմ 'ի բանս իմ առնել զն̃ս ։

Ընթերցուած 'ի գործոց առաքելոց ։

Բառնաբաս և սօղոս դարձան
յերէմ իբրև կատարեցին զպաշ-
տօնն · առեալ էր ընդ իւրեանս
և զյօհաննէս որ կոչեցեալն էր
մարկոս ։ Էին ոմանք յանտիոք
ըստ եկեղեցւոյն մարգարէք և
վարդապետք · բառնաբաս և շմա-
ւօն կոչեցեալն նիգէր · և ղու-
կիոս կիւրենացի · և մանայէն
դայեակ որդի հերովդի չորրորդա-
պետի և սօղոս ։ Մինչդեռ 'ի պաշ-
տամանն տ̃ն կային և պահէին ,


ասէ

ասէ հոգին սբ , որոշեցէ՛ք ինձ
զբառնաբաս և զսօղոս 'ի գործ՝
յոր կոչեցեալ է իմ զդոսա :
Յայնժամ պահեալ և աղօթս ա
րարեալ՝ եդին զձեռս 'ի վր նց
և արձակեցին · Եւ նոքա առա
քեալք 'ի հոգւոյն սբյ՝ իջին 'ի
սելևկիա · և անտի նաւեցին 'ի
կիպրոս · և հասեալ 'ի սաղամինա
պատմէին զբանն այ 'ի ժղվրդս
հրէից · ունէին և զյօհաննէս
պաշտօնեայ · Եւ շրջեալ ընդ ամ
կղզին մինչև 'ի պափոս · գտին
անդ զայր ոմն մոգ սուտ մարգա
րէ հրէայ · որում անունն էր բա
րեյեսու · որ էր ընդ փոխանակ
բդեշխին սերգեայ՝ պօղոսի առն
իմաստնոյ · Նորա աղաչեալ զբառ
նաբաս և զսօղոս՝ խնդրէր լսել
զբանն այ · Ընդդէմ եկաց նոցա
եղիմաս մոգ · քանզի այնպ թարգ
մանի անուն նր · խնդրէր շրջել
զփոխանակ բդեշխին 'ի հաւատոց
Իսկ սօղոս որ և պօղոսն՝ լցեալ

 հո

հոգւով մտօք, հայեցաւ 'ի նա և
տես, որ լի էր նենգութե՛ և խո
րամանկութե՛. որդի սատանայի.
թշնամի ամ արդարութե. ոչ լռես
'ի թիւրելոյ զճանապարհս տն զու
ղիղս: Եւ արդ ահա ձեռն տն
ի վր քո. և դու եղիցիս կոյր չը
տեսանել զարև մինչև 'ի ժամա
նակ մի: Եւ անդէն անկաւ 'ի
վր նր մէգ և խաւար. և շրջեալ
խնդրէր առաջնորդս: Յայնժամ
տեսեալ փոխանակն բդեշխին զիրսն
որք եղեն, հաւատաց. զարմացեալ
ընդ վարդապետութի՛ նր:

Պօղոսի առաքելոյն 'ի Կորնթացւոց Ա՛.

Եւ զորս եդ Ած յեկեղեցւոջ՝
այս են: Նախ զառաքեալս.
երկրորդ զմարգարէս. երրդ ըզ
վարդապետս. ապա զօրութիս.
ապա շնորհս բժշկութե. օգնութիս
վարիչս. ազգս լեզուաց. թարգ
մանութիս լեզուաց: Միթէ ամե
նեքին առաքեա՞լք իցեն. մի թէ


ամե

ամ̃քին մարգարէք իցեն · մի թէ ամ̃քին վարդապետք իցեն · մի թէ ամ̃քին շնորհս բժշկութե̃ ունիցին · մի թէ ամ̃քին զօրութիք իցեն մի թէ ամենեքին թարգմանիցեն Բայց նախանձաւոր լերուք շնորհացն որք լաւ̃քն են·

Ալէլու" ալէլ"· Գաւազան զօրութե առաքեսցէ քեզ տր̃ ՚ի սիոնէ · և տիրեսցես դու ՚ի վերայ թշնամեաց քոց·

## Ս̃ Աւետարան ըստ Մատթէոսի։

Ահաւասիկ ես առաքեմ զձեզ իբրև զոչխարս ՚ի մէջ գայլոց եղերուք այսուհետև խորագէտք իբրև զօձս , և միամիտք իբրև զաղաւնիս · Զգոյշ լինիջիք ՚ի մարդկանէ · զի մատնեսցեն զձեզ յատեանս · և ՚ի ժողովուրդս իւրեանց տանջեսցեն զձեզ · և առաջի դատաւորաց և թագաւորաց տանիցեն զձեզ վասն իմ ՚ի վկայութիւն նց̃ և հեթանոսաց·

Այլ յորժամ մատնեսցեն զձեզ՝ մի՛ հոգայցէք թէ զի՞րդ կամ զինչ խօսիցիք. զի տացի ձեզ ՚ի ժամուն յայնմիկ զոր ինչ խօսիցիք. զի ո՛չ եթէ դուք իցէք որ խօսիցիքն , այլ Հոգին Հօր ձերոյ խօսեսցի ՚ի ձեզ. Մատնեսցէ՝ եղբայր զեղբայր ՚ի մահ . եւ հայր զորդի . եւ յարիցեն որդիք ի վր հարց եւ ըսպանանիցեն զնս . եւ եղիջիք ատեցեալք յամենեցունց վս անուան իմոյ. իսկ որ համբերեսցէ ի սպռ՝ նա կեցցէ. Այլ յորժամ հալածիցեն զձեզ ՚ի քաղաքիս յայսմիկ , փախիջիք ՚ի միւսն. Ամէն ասեմ ձեզ , ո՛չ սպառեսջիք զքաղաքս Իսրայէլի մինչեւ եկեսցէ որդի մարդոյ. Ո՛չ է աշակերտ առաւել քան զվարդապետ իւր . եւ ո՛չ ծառայ քան զտէր իւր . Շատ իցէ աշակերտին եթէ եղիցի իբրեւ ըզվարդապետ իւր, եւ ծառայի իբրեւ զտէր իւր . Եթէ զտանուտէրն բեհեզղեբուղ կոչեցին , որչափ



եւ

եւ առաւել զընտանիս նորա։ Մի՛ այսուհետեւ երկնչիցէք 'ի նոցանէ. զի ոչ ինչ է 'ի ծածուկ որ ոչ յայտնեսցի, եւ գաղտնի որ ոչ ծանիցի։ Զոր ասեմ ձեզ 'ի խաւարի, ասացէք 'ի լոյս. եւ զոր լը սէք յունկանէ, քարոզեցէք 'ի վր տանեաց։

Մէ խաչիւ. Պահպանիչ.
Հայր մեր.

Կատարեցաւ Առաջին Աստիճան Մասնաւոր Իշխանութեն Վար դապետութեն. որ տրի 'ի կողմն արեւելից առաջի բեմին։



Կանոն Երկրորդ աղօթիցն Սրբազանուր իշխանութեն ։ Որ պաշտել լինի ի խորհ արփիութեան։ Նա՛ և ասի շարականն անդ ի կոչումն առաւօտեան. գձ։

Ո՛ր խնկոյ բղխեալ գաւազանին յեսսեայ հանգեր եօթն արփեան շնորհօք. հոգի՛ աստուածոյ և խորհրդոյ. հոգի՛ հեզութեան և զօրութեան. հոգի իմաստութեան և գիտութեան. հոգի երկիւղի՛ ածպաշտութեան. աղաչեմ զք շնորհեա՛ և մեզ ողորմէ՛ ի քոց պարգևացդ. Ո՛ր զգուշակեալըն քո եսայեաւ է՛լից օծեալն ի քէն մարմնով. ասէ՝ հոգի տն ի վերայ իմ. զո՛ր ի տնօրէնութե՛ըն խոնարհութե՛ ընթերցեալ ո՛ր վասն իւր զբա՛ն մարգարէին. աղաչ։ Ո՛ր զառաքելումն առ ի հօրէ՝ և ի



հո

հոգւոյդ բանին յաշխարհ · մար-
գարէիւքն ծանուցեր՝ զոր խմի
մաց մարդացելոյն բարբառիւք
առ մարդկութիւ՝ ո̅ր ո̅ր առաքեց
զիս և հոգի նորա՝ · ամղաչէ ·

Ալէլու" ալէլ"։ Տ̅Ր տացէ ըղ
բան ոչք աւետարանեն զօրութե̅
բազմաւ։ Յարիցէ ա̅ծ և ցրուես
ցին ա̅մ թշնամիք ն̅ր · փախիցեն
ատելիք ն̅ր յերեսաց նորա։

## Գիրք Թուոց։

Եւ էջ տ̅ր ամպով և էառ 'ի
հոգւոյն որ 'ի նմա, և եարկ
զեօթանասուն արամբքն զծերոցք
Իբրև հանգեաւ հոգին 'ի վ̅ր ն̅ց
և մարգարէացան 'ի բանակին ·
և այլ ոչ ևս յաւելին։ և մնացին
երկու արք 'ի բանակին · անուն
միոյն Ելդադ, և անուն երկրոր-
դին Մովդադ · և հանգեաւ 'ի վ̅ր


ն̅ց

ոց հոգին։ և նոքա էին 'ի գրե֊
լոց անտի և ոչ եկին 'ի խորանն
և մարգարէանային 'ի բանակին։

## Ընթերցուած Յեսայեայ մար"։

Հոգի տ̅ն 'ի վ̅ր իմ. վ̅ն որոյ և
էօծ իսկ զիս. աւետարանել աղ֊
քատաց առաքեաց զիս. բժշկել
զբեկեալս սրտիւք. քարոզել գե֊
րեաց զթողութի̅ և կուրաց տեսա֊
նել։ Կոչել ամ տ̅ն ընդունելի և
որ հատուցման ա̅յ մերոյ. մխիթա֊
րել զա̅մ սգաւորս. տալ սգաւո֊
րաց սիօնի փառս։ Փոխանակ մոխ֊
րոյն՝ օծումն ուրախութե̅. և սը֊
գաւորացն հանդերձ փառաց՝ փո֊
խանակ ոգոյն վհատութեան.
Եւ կոչեսցին նոքա ազգք արդա֊
րութե̅ տունկք տ̅ն 'ի փառս. և
շինեսցեն զաւերակսն յաւիտե֊
նից. և զյառաջագոյն աւերեալսն
կանգնեսցեն. և նորոգեսցեն ըզ֊
քաղաքս աւերեալս յազգաց մին֊
չև յազգս։ Եւ եկեսցեն օտա֊



րա

րածինք հովուաց խաշանց քոց և
պղպղելք մաճակալք են այդէ
գործք քո. բայց դուք քահա
նայք տն կոչեսջիք և պաշտօնեայք
այ մերոյ անուանիջիք. զզօրութիս
ազգաց կերիջիք և մեծութ նոցա
զքանչելի լինիջիք.

## Ընթերցուած Յամովսայ մար"։

Պատասխանի ետ ամովս և ասէ
ցամասիա. ես ոչ մարգարէ էի և
ոչ որդի մարգարէի. այլ հովիւ
էի և թութ քաղէի. և էառ զիս
տր ՚ի հօտից և ասէ ցիս, գնա՛ դու
և մարգարէա՛ց ի վր ժողովրդեան
իմում իէլի. Եւ արդ՝ լո՛ւր բն
պատգամս տն. և դու ասես մի՛
մարգարէանալ ՚ի վր իէլի և մի՛
ժողովս ժողովել ՚ի վր տանն յա
կոբայ. Վն այդորիկ այսպ ասէ
տր տր. կին քո ՚ի քաղաքիդ պոռ
նըկեսցի. և ուստերք քո և դըս
տերք քո ՚ի սուր անկցին. և ժո
ղովուրդ քո լարաբաժին բաժա


նես

նեայի . և դու յերկրի պղծութեան վախճանեցիս . և ինձ գերելով գերեցի յերկրէ իւրմէ :

Ա՛յսպէս եցոյց ինձ տր տր . և ահա՛ գործի հաւորսաց : Եւ ա՛սէ ցիս տր, զի՞նչ տեսանես ամովս և ասեմ, գործի հաւորսաց : և ասէ ցիս տր . հասեալ է վախճան ժողովրդեան իմոյ իսրլի .

Պօղոսի առաքելոյն 'ի տիմոթէոսի բն''

Ա՛յլ դու զհետ եկիր վարդապետութեան իմոյ . առաջնորդութեան յօժարութեան . հաւատոյ . երկայնմտութեան . սիրոյ . համբերութեան . հալածանաց . չարչարանաց, որպիսիք եղեն ինձ յանտիոք և յիկոնիոն և՛ 'ի լիւստրա . ո՛րպիսի հալածանս համբերի . և յամէ փրկեաց զիս տր : Եւ ամէքեան որք կամին ածպաշտութբ կեալ 'ի քս յս, 'ի հալածանս կայցեն : Ա՛յլ մարդիք չարք և կախարդք՝ յառաջ եկեսցեն 'ի չար անդր . մոլորեալք



և

և մխլորեցուցանիցեն։ Այլ դու
հաստատուն կաց յորս ուսար և
հաւատարիմ եղեր։ Գիտես ուս
տի ուսար. զի ՚ի մանկութէ ըզ
գիրս սուրբս գիտես. որք կարողք
են իմաստուն առնել զքեզ ՚ի փր
կութի ՚ի ձեռն հաւատոյն որ ՚ի
քս յս։ Ամենայն գիրք ածաշունչք
և օգտակարք՝ ՚ի վարդպտութի են
և յանդիմանութի և յուղղութի
և ՚ի խրատ արդարութե. զի կատա
րեալ լիցի մարդն այ յամ գործս
բարութե հաստատեալ։ Ո՛ այս վը
կայութի գնեմ առաջի այ և յի քի
որ դատելոց է զկենդանիս և ըզ
մեռեալս ՚ի յայտնութե իւրում և
յարքայութե։ Դու՛ դու քարոզեա՛
զբանն. հա՛ս իւր ժամու և տարա
ժամու. յանդիմանեա՛ սաստեա՛
մխիթարեա՛ ամ երկայնմտութբ
և վարդապետութեամբ.

Ալէլուիայ. ալէլ".

Ընդ ամ երկիր ել բարբառ նց.
մինչև ՚ի ծագս աշխի են խօսք նց.

Եւ յերեկոյի շաբաթուջ աւուրն դրօքն փակելովք ուր էին աշակերտքն ժողովեալք վն ահին Հրէից՝ եկն յս և եկաց ՚ի մէջ նց և ասէ ցնս, ողջոյն ընդ ձեզ։ Իբրև զայս ասաց, եցոյց նց ըզ ձեռս և զկողս իւր. և խնդացին աշակերտքն իբրև տեսին զտր։ Ասէ ցնս դձլ՝ ողջոյն ընդ ձեզ. որպ առաքեաց զիս հայր իմ, և ես առաքեմ զձեզ։ Եւ զայս իբրև ասաց, փչեաց ՚ի նոսա և ասէ, առէ՛ք հոգի սբ. եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի նց. և եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի։

Եւ ասեն Շարական ԷԿ.

Երրորդութիւն անբաժանելի և զօրութիւն երկնային լոյս ծագեալ յաշխարհ՝ . Նորմա ՁՁ հանեցուք զօրհնութիւն երգով.

Որ էջըն յերկնից այսօր և հան
գեաւ յառաքեալսըն Ճշմրիտ մէ
հոգին. ողորմեա ՁՁ հանցուք.
Որ ի խորհուրդըս փրկական նա
այսօր ընդ իջանել յառաքեալսն
ծանուցաւ մարգարէից ն. ողորմեա.

Սէ Խաչի. Պահպանիչ.
Հայր Գր.

Կատարեցաւ երկրորդ աստիճան
Վարդապետական Սանաւոր
Իշխանութեան . որ տրի 'ի կողմն
արևմտեան.

Յաւ՛ [illegible] չորրորդ [illegible] ի հետ [illegible] [illegible] [illegible] եկեղեցւոյն. Յաւ՛ [illegible]

Շարական [illegible]:

Այսօր երկնայնոցն ընդ մեզ տօնախմբելով զյիշատակ սուրբ հայրապետացն. որք լուսաւորեցին զհաւատոյ մանկունս եկեղեցւոյս. և ընդ հրեշտակացն դասս վերակարգեցան: Այսօր առաքելոց և մարգարէիցն դասք. տօնակից գոլով դստեր վերին Սիոնի. ի յիշատակի սրբ. վարդապետացն. որք իմաստից նոցին խորոց յայտնեցին զխորհուրդ: Այսօր քահանայք և պաշտօնեայք սրբ. եկեղեցւոյ՝ վերապատուեն զյիշատակ սրբ. վարդապետացն. որովք

զարդարեցա՛ն երկնային շնոր-
հօ՛քն · երգեն ը՛նդ նմա՛ն
զփառըս յա՛ւիտեա՛ն։

Ալէլու″ ալէլ″։ Հոգի քո սբ եւ
բարի՛ առաջնորդեսցէ ինձ՛ի յեր
կիր ուղիղ։ Տէր լուր աղօթից ի-
մոց · ունկն դիր խնդրուածաց
իմոց ճշմարտութբ քով ·

Ընթերցուած Յովելեայ Մրգ″ ·

Այն եղիցի յաւուր յայնմիկ բղ-
խեսցեն լերինք քաղցրութի
եւ բլուրք յորդեսցեն զկաթն · եւ
ամ աղբիւրք յուդայ բղխեսցեն
ջուրս · եւ աղբիւր 'ի տանէ տն
ելցէ եւ արբուսցէ զձորն վիմա
ցաց · Այն եգիպտոս յապականու-
թիւն եղիցի եւ եդոմ դաշտ ապա
կանութե վասն անիրաւութեանց
որդւոցն յուդայ · փոխանակ զի
հեղին արիւն արդար իմէջ իւր
եանց · Այլ հրէաստան յաւի
տեան բնակեսցէ , եւ յերուսաղէմ

յազգաց յազգս․ և խնդրեսցից զա
րիւն նց̅ և ոչ արարից անպարտ․
և տր̅ բնակեսցէ ՚ի սիոն։

Պետրոսի առաքելոյն ՚ի կաթողիկէն։

Պատրաստ լերուք տալ պտ̅սխնի
ամ̅ի որ խնդրիցէ ՚ի ձէնջ որէ
վասն յուսոյն ձերոյ․ այլ հեզութ̃
և երկիւղիւ։ Խ̂ ունիցիք բարս
քաղցունս․ զի որով չարախօսի
ցեն զձէնջ, յամօթ լիցին որք
բամբասեն զձեր բարուք գնացս
՚ի քս̅․ զի լաւ̂ է բարեգործացն
(եթէ կամիցին ըստ այ̅ կամացն)
չարչարիլ, քան չարագործացն․
զի և քս̅ միանգամ վասն մեղաց
իւր̅ ձեր մեռաւ․ արդարն իվերայ
անարդարոց․ զի զձեզ մերձեցուս
ցէ առ այ̅․ Թէպէտ և մեռաւ
մարմնով, այլ կենդանի է հոգւով։
Որով և հոգւոցն որք էին ՚ի բան
տին, երթեալ քարոզեաց․ եր
բեմն ապստամբելոցն յորժամ նե
րէր նոցա այ̅ երկայնմտութիւնն

 յա̂

յաւուրս նոյի յորս տապանն կազ-
մէր։ Յորս նաւապանք՝ այսինքն
հոգիք իբրև ութ ապրեցան ՚ի
ջրոյ անտի։ Որ և զձեզ ըստ նմին
օրինակի կեցուցէ մկրտութիւն.
ոչ զմարմնոյ աղտն իբաց ընկեն-
լով, այլ զբարւոք մտացն հանդէս
առ ած ՚ի ձեռն յարութեննյի քի.
որ է ընդ աջմէ այ երթեալ յեր-
կինս ՚ի հնազանդել նմա հրշտկաց
իշխանութեց և զօրութեց։

Աղէլու՛ ալէ՛. Օրհնեցէ՛ք զած
՚ի սրբութե նր. օրհնեցէ՛ք զնա ՚ի
հաստատութե զօրութե նր։

Աւ Աւետարանս ըստ Ղուկասու։

Նա կոչեալ զերկոտասան առա-
քեալսն՝ ետ նց զօրութիւն և
իշխանութի ՚ի վր ամ դիւաց և
բժշկել զհիւանդութիւս. և առա-
քեաց զնս քարոզել զարքայութին
այ և բժշկել զախտաժետս։
Եւ ասէ ցնս, մի ինչ բառնայք
՚ի ճանապարհի. մի գաւազան.

մի՛ մախաղ․ մի՛ արծաթ․ և մի՛ երկուս հանդերձս ունիցիք։ Եւ՛ յոր տուն մտանիցէք՝ անդ ագջիք և անտի գնայցէք։ Եւ՛ որք ոչ ընդունիցին զձեզ, յորժամ ելանիցէք ՚ի քաղաքէն յայնմանէ, զփոշի ոտից ձերոց թօթափեսջիք ՚ի վկայութի՛ն նց։ Եւ՛ ելեալ շրջէին ընդ քաղաքս և ընդ գիւղս․ աւետարանէին և բժշկէին ընդ ամենայն տեղիս՛։

Եւ սարկաւագն ասէ,

Եւ՛ ևս խաղաղու"․ Օրհնեա՛ տր։
Եւ Սարկաւագն ասէ․ Օրհնութի՛ և փառք Հօր և Որդւոյ և Հո՛"։

Եւ ասեն շարականն և գայ ՚ի յետն
հրաւիրելոյն ասելով,

Ս՛ա զերրորդ աստիճան մասնաւոր վարդապետութն կարողութե Հոգւոյն սբյ․ կոչել յապաշխարութի զմեղուցեալսն․ որք ՚ի կամաց և յակամայ և որք գիտութե


և

և անգիտութե՛ անկեալ իցեն ՚ի յաղբս չարին․ դարձուցանել զնո՛ յա՛մ չարեաց որո՛վ դարձումն անառակ որդւոյն․ Թողլով զա՛մ մեղս նց և տալով զպատմուճանն առաջին։ Իսկ դու յերևիլ հովուապետին՝ ընկալջիր զանթառամ փառաց պսակն։

ԱԷ Խոչիւս։ Գոհգոնէչ․
Հույ Գլ։

Կատարեցաւ երրորդ աստիճան Վարդապետական Աստուածոր Իշխանութե․ որ տրի ՚ի հիւսի սայլին կողմն եկեղեցւոյն։

Յաւ. տօնականին շնորհաւորք Աստուածածնին Ծննդե-
ան յին հոգւոյն եկեղեցւոյն. Յաւ. աւուն
Ճաշոյն գձ.

Երանելի՛ որ առաքելք հրաւի-
րելք իսկզբանէ ընտրելք
յորովայնէ սպասաւորք և բարե-
կամք և վկայք մ͞ծ որդւոյն.
բարեխօսեցէ՛ք առ տէր վ͞ս ան-
ձանց մերոց: Որք առիք իշխա-
նութի՛ ի վերայ ազգի՛ մարդկան՝
կապել և արձակել ի յերկինս և
ի յերկրի՝. արձակեցէ՛ք զմեզ
ի կապանաց մեղաց մերոց:
Խաչակցեալք ընդ քի՛ և ընդ
նմին թագաւորեալք. ի միւսան-
գամ գալըստեան նորա՛ նըստե-
լոց էք դատաւորք. Թողութի՛ն
շնորհեցէ՛ք և մեզ մեղաւորացս:

Օ մարգարէ՛ բարձրելո՛յն և ըղ
թագաւորին զինաւոր. որ և՛ի
ծընունդըս կանանց մեծ կոչե
ցաւ. յօրհնութիւնս հոգևորըս պատ
ուեսցուք. Օ մածնին կարա
պետ և՛ըղ բանին ըղձայն. որ
յորովայնէ զքո՛ յատա՛ջ գուշա
կեաց. յօր. Օ յանապատի բը
նակիչ և շընորհացըն քարոզող.
որ և՛ի դըժոխս ըզփըրկութի՛ն
քարոզեայց. յօրհնութիւ.

Այսօր զուարճասցէ՛ն տօնեն երկ
նայի՛նքն ընդ մարդկան. պա
րակից եղեալ փըրկութեա՛ն մե
րոյ. քանզի յայտնեցաւ մեզ հօ
դևօր գանձըն լուսոյ արևել
եա՛ն արեգականըն ձայնագայթ
եւըն ներքուստ. բարեխօսութբ
սորա տէր ամենայնր պարգևեա՛ ըզ


խա

խաղաղութի հայաստանեայց աշ
խարհի ։ Նայսօր վերընտրին նո
րոգեցաւ քահանայականին զա
ւազանն՝ գեղեցկապէս ծաղկեալ
պայծառութեամբ ։ քանզի շնորհե
ցաւ հովուին քաջ բանաւոր
հօտի՝ յարմարոյ լուսաւորչին՝
բողբոջ բուսեալ մերն նորա ։
բարեխօսութեամբ սրբոյ ամմր
հաստատեա իշխանութի հայրա
պետական աթոռոյ ։ Նայսօր
մեծապէս փառօք ցընծայ թագա
ւորական գաւազանն ընդ հաշ
տուն սիրոյ մեր հայրապետին ։
քանզի էհաս ի յօգնութի օրհնեա
դրօշն թագաւորաց ։ մարտա
կից զինուորակին գաւառն մերն
նորաէս ։ բարեխօսութեամբ սրբոյ
ամմր բարձրացո իշխանու
թի թագաւորական աթոռոյ ։



Նմա

Սրմանեալ մօսէսն տէր վար
դապետ բերելով լ ըղ գին
օրինաց ի Հայաստան աշխարհս.
որում ... լուսաւորեցին ազգ
որդւոց Թորգոմայ. Բանի
նա արժանաւորեցաւ կալ՝ ի սե-
նեակն փառաբանութեանն.
և ընկալեալ ... պատգամըս կեն
դանի ս տայր խորհրդեան բա
նակին. որում ... լուսաւորե
ցան ազգ որդւոց յաբեթայ։
Որդ աղաչեմք ըղ քոյին հեղու-
թիւդ տէր վարդապետ. բարե-
խօսեա ... առ Հայր ի յերկինս
վասն քո ... տօնողացս. քանզի
քեզմով ... լուսաւորեցան ման
կունք ... եկեղեցւոյ։
Վարդապետ սուրբ և անբիծ և
ընտրեալ յորովայնէ. սքանչելա
գործ վըկայ և պարծանք ազգի
մարդ-

մարդկան՝ · առ քո՛ ՜ բարեխօսեա՛
վա՛սըն մեր քո տօ՛նողացս։ Հօ՛վիւ
հո՛գևո՛ր բանաւո՛ր հօտի՝ · լո՛ւսա
ւո՛րի՛չ տիեզերաց սիւն լուսո՛յ
կանգնեալ իմէջ եկեղեցոյ · առ ·
Հաստատո՛ւն հաւատոյ պըսա՛կ
իղլուխ եկեղեցւո՛յ · պայծառ քա
րո՛ղ տիե՛զերա՛ց և պարծանք ազ
գի՛ մարդկան՝ · առ"։ Ն՛տաճարի
քում սըրբութե՛ երկըրպագամք
քոյ նը՛շխարաց · փառաւո՛րեմք զօր
յի՛շատակի՛ կատարման քոյ հան
գըստեան · առ քո՛ ՜ բա"։

Այսօր սըրբո՛ց հայրապետացըն
ժողովեալք իմի՛ասին · Է՛դի՛ն
հաստատութե՛ ըզ հիմունըս հա՛
ւատոյ · ՚Ի՛կո՛ հիման առաքելո՛ց
և մարգարէից։ Այսօր ըզ բանն
իսկըզբանէ քարոզեցին մե՝ հա՛յ
րապետքն · յանաչ քան զյաւի
տեանս

տեանս ի հօրէ ծընունդ անճառ
արարիչ գոլով յաւիտեանց ընդ
հօր էակից հոգւոյն։ Լ՟յոր
զհոգին ճշմարտութեն դաւանե
ցին մեք հայրապետքն․ ծագումն
առ ի հօրէ յառաջ բըղխեալ ան
հաստաբար․ ընդ նըմին յաւէտ
մըշտընջենաւոր փառակից
որդւոյ․

Որդիդ ճըշմարիտ՝ որ զա՟ծայ
ին ըղ հըրամանսըն քո զաւա
ծըն դաւթեան լըցեր․ արբուցա
նելով աշակերտացն զպարարտու
թին քո իւր վերնատանն․ ողո
՟րմեա։ Որ առաքեցար ի հօրէ
կենդանարար վըտակ և լոյս ճըշ
մարիտ․ արբուցանելով նոքօք
որդւոց սիոնի զուղխըս փափկու
թեն․ ողո՟։ Որ կատարեցեր ըղ
փափագ ցանկութե սըրտից նո

 ցա

ցա․ որք ըսպասեալ մնային մե
ծի գալըստեանն քո ի սուրբ վեր
նատանն․ որոց օրհնեա։

Զծնեալն ի սուրբ կուսէն ըն
կալցուք ի սիրտս մեր
հաւատով․ որ երբեմն ի գիրկ
սըն Սիմէօնի․ Օրհնեսցուք զա-
ռաքեալն ի Հօրէ՝ որ ի խանձարու
րըս պատեցաւ և փառքն մեր․
Եփրկեաց զմեզ յանիծիցն ա-
դամայ։ Ուրախ լեր անապատ
ծարաւի և ծաղկեա հաւատով
երանութեամբ յայսմ հետէ․
քանզի քրիստոս յոյս յայտնե-
ցաւ հեթանոսաց։

Այսօր ուրախացեալ ցնծան
երկնայինք բազմութիւքն․ ի նա
ւակատս սուրբ եկեղեցւոյ․
քանզի շնորհեցաւ մեզ քահանայա
պետ յաւիտենից․ ի լուսաւորել



զկա

զկաթուղիկէ ս՟բ զեկեղեցի ·
փա՟ւրք գալըստեան քոյ տէր ·
Այսօր սիւն լուսոյ հովանի՛ է
զե՛ ըմբ՟իղ իբարձանց · քանզի
թագաւորն երկնաւոր եկաւորի
ի ս՟բ եկեղեցի · Եւ զօ՟րք
հրեշտակաց ծառայեալ տօնեն
ընդ մարդկան · փա՟ւրք ·
Այսօր քահանայապետ ճը՟շմա
րիտ ա՟ծային օրինօքըն պա
տուել · կանգնէ՛ ըզ քառանկիւն
սեղա՟ն խաչին · արժանապէս պա
տարագել բաշխէ զմարմին և
զարիւնըն ա՟ն · մաքրապէս մեր
ձեռացրուք փրկեալք նո՛ր ժո
ղովուրդք · և հայցեցէք ի քէն է
զի՛ շնորհեսցէ՛ ըզ սա մեղ՟ ընդ
երկայն աւուրս ·

Ս՟տել՟ աւէ"։ Փոքր ինչ խոնարհ
արարեր զնա քան զհրեշտակս քո·



փա

փառօք և պատուօք պսակեցեր ըզ
նա․ և կացուցեր զնա 'ի վ̃ր ա̃մ
ձեռակերտաց քոց։ Տ̃ր տ̃ր մեր՝
զի սքանչելի է անուն քո 'ի վ̃ր
ա̃մ երկրի։

### Գիրք Առաջին Թագաւ.

Եւ ասէ տ̃ր ցՍամուէլ․ արի՛ օծ զդաւիթ զի դա՛ է բարի․ և էառ Սամուէլ զեղջիւրն իւղոյ և էօծ զնա 'ի մէջ եղբարց իւրոց․ և խաղաց հոգի տ̃ն 'ի վ̃ր դաւթի յօրէ յայնմանէ և առ յապայ․ և յարեաւ Սամուէլ և գնաց յարեմաթեմ։

### Ընթերցուած Յովնանու Մարգ.

Եւ եղև բան տ̃ն առ յովնան որդի Ամաթեայ և ասէ, արի՛ և գնա՛ 'ի Նինուէ քաղաք մեծ և քարոզեսջիր անդ․ զի ել աղաղակ չարութ̃ե ն̃ց առաջի իմ։ Եւ յարեաւ յովնան փախչել 'ի Թարսիս յերեսաց տեառն․ էջ 'ի յոպպէ


և

և եգիտ նաւ որ երթայր ՚ի Թարսիս. ետ գինս և եմուտ ՚ի նաւն երթալ ընդ նոսա ՚ի Թարսիս յերեսաց տ՟ն: Այլ տ՟ր յարոյց զհողմ ՚ի ծովուն և նաւն ՚ի վտանգի կայր ՚ի խորտակիլ. և երկեան նաւավարքն յերկիւղ մեծ. և աղաղակէին առ իւրաքանչիւր ա՟ծս իւրեանց. և ընկեցին զկարասին ՚ի ծով անդր զի թեթևասցուցեն յինքեանց.

Յովնա առաքելոյն ՚ի Նինուէ:

Մ՞ի բազում վարդապետք լինիլ եղբարք իմ. գիտասջիք զի մեծ դատաստան ընդունելոց եմք. քանզի բազում ինչ յանցանեմք ամենեքեան: եթէ ոք բանիւ ոչ յանցանիցէ՝ նա՛ է մարդ կատարեալ որ կարող է սանձահարել զա՟մ մարմին իւր: Տես զի ձիոց սանձս ՚ի բերան դնեմք առ՚ի անսալոյ ն՟ց մեզ և զա՟մ մարմինս ն՟ց նուաճեմք: Ահաւասիկ և նաւք



որ

որպիսի ինչ են, և 'ի սաստիկ հող
մոյ վարին․ և փոքր թևոմն շրջին
յոր կոյս և միտք ուղղչին կամ
ցին։ Այնպէս և լեզու փոքր
ինչ անդամ է և զմեծամեծս բար
բառի․ ահա և սակաւ ինչ հուր
որպիսի անտառս հրդեհէ․ և լե
զու զարդ անիրաւութե։ Լեզու
հաստատեալ է յանդամս մեր որ
զամ մարմինն ապականէ և վառէ
հրով զանիւ ծննդեանն և բոր
բոքեալ տոչորի 'ի գեհենի։ Ամե
նայն բնութի գազանաց և թռչ
նոց և սողնոց և որք 'ի ծովու են,
հնազանդեալք են և հնազանդին
մարդկեղէն բնութես․ բայց ըզ
լեզու մարդկան ոչ ոք կարէ հնա
զանդել զչարն և զանկարգ և լը
լի թունոք մահաբերին։ Նովաւ
օրհնեմք զՏէր և զՀայր․ և նովաւ
անիծանեմք զմարդիկ որ ըստ նը
մանութե այ արարան։ 'Ի նմին բե
րանոյ ելանեն օրհնութիւնք և ա
նէծք․ Ոչ է պարտ եղբարք իմ

այամ այսպէս լինիլ . մի թէ աղ
բիւր անդստին 'ի մի ականէն բղ
խիցէ՞ զքաղցր և զդառն . մի թէ
մարթ ինչ իցէ եղբարք իմ, թզե
նոյ ձէթ բերել կամ որթոյ թուզ
և ոչ աղտաղտին տեղւոջ ջուր
քաղցր առնել:

Ալէլ" ալէլ" : Կացուցես զնս
իշխանս ըն ամ երկիր . և յիշեսցի
անուն քո յազգաց մինչև յազգս:

Աէ Աւետարան ըստ Մարկոսի :

Յարուցեալ Յս յառաւօտուն
առաջին միաշաբաթին երևե-
ցաւ Մարիամու Մագդաղենացւոյն
յորմէ հանեալ էր զեօթն դևսն,
և նա երթեալ պատմեաց այնոցիկ
որք ընդ նմայն էին մինչ դեռ
լային և սգային: Նոքա իբրև
լուան թէ կենդանի է և երևե-
ցաւ նոցա, ոչ հաւատացին:
Յետոյ երևեցաւ այլում կերպարա-
նաւ որք երթային յանդաստան:
Նոքա չոգան պատմեցին այլոց . և

ոչ նց հաւատացին։ Յետոյ մինչ
դեռ բազմեալ էին մետասանքն,
երեւեցաւ նոցա և Թշնամանեաց
զանհաւատութիւն նց և զխստա
սրտութի. զի որ երեւեցաւ նոցա
յարուցեալ ՚ի մեռելոց և ոչ հա
ւատացին։ Եւ ասէ ցնոսա, եր
թայք յաշխարհ ամ և քարոզեցէք
զաւետարանն արքայութե ամ արա
րածոց։ Որ հաւատասցէ և մկր
տեսցի՝ կեցցէ. և որ ոչն հաւա
տասցէ՝ դատապարտեսցի։ Նշանք
այնոցիկ որք հաւատան՝ երթիցեն
զհետ այնոցիկ. յանուն իմ դեւս
հանցեն. լեզուս խօսեսցին. ՚ի
ձեռս իւրեանց օձս բարձցեն, և
եթէ մահացու ինչ դեղ արբցեն՝
նց ինչ ոչ վնասեսցէ։ ՚Ի վերայ
հիւանդաց ձեռս դնիցեն և բը
ժշկեսցեն։ Եւ ինքն տր յս յետ
խօսելոյն ընդ նոսա, համբարձաւ
յերկինս և նստաւ ընդ աջմէ հօր։
Եւ նոքա քարոզէին ընդ ամ եր
կիր տն գործակցութե. և զբանն


հան

հաստատէին ամենայն նշանօք
որք երթային զհետ նոցա։

Աշ. Վերջաբանն ո՞րն է,

Ա՛ւեւս խաղաղու՛՛. Օրհնեալ տէր.
Աշ. Մարգարէին ո՞րն է. Օրհնութի՛
և փառք Հօր և Որդւոյ և Հո՛՛.

Աշ. Անուն զգաստացանն և այլ'ի յետն
հրաժարելոյն ո՞րն է,

Մ՛ւ սրբեալ և զչորրորդ աստի-
ճան վարդապետութեան. և իմաս
ջիր թէ վերաձայնեաց զքեզ մար-
գարէն եսայիաս ձայն բարբառոյ
յանապատի ասելով. Մասն որոյ
պարտէ քեզ նախ մեղաւորաց ոչ
գիտաց և անհաւատից քարոզել.
Երկրորդ համարձակ քարոզել
առանց երեսաց և առանց ակն-
առութեանց. Երրորդ աներկիւղ
քարոզել. Չորրորդ պարզ և յըս-
տակ քարոզել. Հինգերորդ իմաս-
տութեամբ և գիտութեամբ քարոզել.
Վեցերորդ կշտամբել յանդիմա-
նել

նել և մխիթարել. Յանապատ և յաւեր տեղիս քարոզել. այսինքն անապատացելոցն և աւերելոցն հոգւոյ: Նա տ՜րն մեր յ՜ս ք՜ս լուսաւորեսցէ զաչս մտաց քոց. լուսաւոր առնել 'ի քեզ զլոյս գիտութեան և անուանիլ 'ի տ՜նէ թէ դուք էք լոյս աշխարհի. և դարձեալ թէ՝ ոչ գոյ 'ի քեզ մասն խաւարի. զի բոլորն ամենայն լոյս եղիցի. Նա՛ իբրև զարեգակն ծագեսցիս յարքայութեանն երկնից ընդ ա՜մ ս՜բս ըստ հրամանի տ՜ն յի՜ քի՜ փրկչին մերոյ. Որում է՜ հօր և ս՜բ հոգւոյն փառք իշխանութի՜ և պատիւ. այժմ և միշտ":

Ա՜Է խուչինա. Պոհոանէհ'.

Հայր Դր.

Կատարեցաւ Չորս Աստիճան Մասնաւոր Իշխանութե Հոգևոր Կարգապետութե.

# ԿԱՆՈՆ

Ընդհանրական Իշխանութեան տալոյ
Վարդապետացն Ճշմարիտ Բանին
Քարոզութեան։ Որ է տասն Աստիճան
Ընդհանրական Գաւազանի։

Տպեցեալ ՚ի Ընդհանրական Հայրապե-
տութեան սբյ գերագոյն դահին
Էջմիածնի բղխողի սրբալոյս Լուսոյն
մեռոնի՝ Տեառն Սիմէոնայ Ինքնա-
գլուխ Արքեպն և Ճարտարաբան Կթղկսի
ամ Հայոց։

Եւ ՚ի Պատրիարգութեան Տնօրինակառար
ցանկալի Երկրին Եդեմ՝ Տեառն
Յակոբայ Ճարտարաբան Վարդապետի։
՚Ի Կոստանդնուպօլիս քաղաքի։

Հրամանաւ և հաճանութեամբ նորին
Պատրիարգի Տեառն Գէորգայ՝
Գրասէր և Ճարտարաբան Վարդա-
պետի Սիւնեցւոյ։
՚Ի Թուին Հայոց ռ̄ է̄ ճ̄ա։

Մ՟ Ծայրագոյն իշխանութ տա
լոյ Մարդպետացն Ռանին Պետ
րոլութեան։

Այս այս է Աղօթողութիւն ըստ ուղղա
փառ հայաստանեայց եկեղեցւոյ։

Զարդարեն զՊատարագամն և
դնեն ՚ի սեղանն . և ապա
սկսանին զպաշտօնն ըստ
պատշաճի աւուրն։ Այս յետ վը
ճարմանն , զգենուն քահանայքն
և դպիրք . և տան մոմեղէնս ՚ի
ձեռս ամենեցուն . և սկսանին

Սաղմոսն ՃԶ։

Տրմնջափառ ամէն և մինչ բարե
խնամող որ յառաջ գիտութ ըղ
փրկութիւն հայաստանեայց ըս
կըզբնաւորեալ . ի պարթևական

մեղապարտս ազգէն լուսաւորիչ
մեզ շնորհեցէր՝ . վասն որոյ բա
րեխօսութեամբ սորա փրկիչ կեցո
ըզ մեզ՝ այժմ և ի քոյ ահաւոր
դատաստանին : Հրաշալի զարմաց
մամբ երանելին սբ. գրիգոր .
զանտանելի ըզ չարչարանս ի
յանձն էառ . և երիւք հնգօք
ամօք ի մէջ թունաւորացն բնա
կիւր անդընդային տանջանօքն
ի վիրապին . վասն որոյ : Հրաշագործ
քո բանիւդ և մեծ ողորմութեդ .
ելեալ բըժըշկէր ըզ հարուա-
ծեալսն ի դիւաբախ սաստիցն .
երկըրպագուս առնելով զամենե
սեան սբ. երրորդութեանդ .
վասն որոյ բա :

Սա երգեն ՚ի դասուն եկեղեցւոյն և ան
ուն Հայրապետն : Ձ Ձ :

Պատուական զօրութե ըզ խաչ քո


Են

ետուր մեզ քո՛ . և սովա՛ւ յաղ
թեսցուք անօրէ՛ն թշնամւո՛յն ,
Այս է՛ զէ՛ն յաղթութե՛ն սրբեա՛լ ար
եամբ որդւո՛յն ա՛յ . և սո՛վաւ ։
Այս է աթո՛ռ տրունեա՛ն և ի սմա՛
է բազմեալ քո՛ որդի՛ն ա՛յ . և սո՛ ։
Այս է սե՛ղան սրբութեա՛ն և ի
սմա՛ է պատարագեալ քո՛ գառն
ա՛յ . և սո՛վ ։ Այս է կարապետ յա՛
ւուր գալստեան փրկչին . և
պսա՛կ պարծանա՛ց հաւատացե՛
լո՛ց . և սովա՛ւ յաղ ։

Ասէ քերեն զՊատարագն , և ասէ՝
Այ խաչիւս Պահպանեա՛ ։
Ասէ ապա ւոր՛՛ ք՛ձ ։

Սրբանելի տր̃ առաքելովք հրա՛ւի
րեալք ի սկզբանէ և ընտրեալք
յորովայնէ . սպասաւո՛րք և բանի
կենաց և վկայք ա՛ծ որդւոյն .

բարեխօսեցէք առ Տէր վասն ան-
ձանց մերոց։ Որք առիք իշխա-
նութիւն ի վերայ ազգի մարդկան՝
կապել և արձակել յերկինս և
յերկրի. արձակեցէք զմեզ
ի կապանաց մեղաց մերոց։
Խաչակցեալք ընդ քեզ և ընդ
նորին Թադէոսիւք. ի միասին
գամ գալըստեան նորա նըստե-
լոց էք դատաւորք. Թողութիւն
շնորհեցէք և մեզ մեղաւո-
րացս.

Նմ. ապա ասէ Խոստովանողին։

Շնորհազարդ սբ Հայրապետ. որ էս հաստատեալ հովիւ հօտին քո. խնդրէ 'ի քէն մայրս մեր սբ եկեղեցի հանդերձ ամ ուխտիւս զի կոչեսցես (զայս անուն) բանի սպասաւորս 'ի պատիւ աստիճանի մեծի վարդապետութեան։

 Նմ.

Ա՛յլ հարցանէ Սարկաւագն Գծ.

Ունի՞ զուսումն վարդապետութեան . և զգիտութիւն հին և նոր կտակարանացն մեց . և զդաւանութիւն խոստովանութեան հաւատոյ 'ի մբ Երրորդութիւն և 'ի մարդեղութիւն քի այ մերոյ . Ա՛յլ հրաժարի՞ յամ հերձուածողաց թէ ոչ .

Ա՛յլ ասէ Խոստովանողն .

Այո հայր մբ . ունիմ լիովին զուսումն վարդապետութեան . և զգիտութիւն հին և նոր ամենայն կտակարանացն մեց . և զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ . Ա՛յլ խոստովանիմ զսուրբ զերրորդութիւնն զհայր և զորդի և զսբ հոգին համագոյ էութիւն . և զմարդեղութիւնն քի այ մերոյ ընդ մբ հայրապետացն ուղղափառաց .

Ա՛յլ հրամայէ Գծ Սարկաւագն .

Պարտ է ձեզ որդեակք հրաժարել յամենայն աղանդոյ ճծ թ հերձուածողացն . որք ընդ դէմ



խօ

խոսեցան ուղղափառ հաւատոյն
քի̃ ա̃յ մերոյ ·

Սա՛ տուէն պաշտօնէութեան,

Անաթիմա՛ · նզովեալ եղիցի ·

Հորդանէ եպսն տուեալ ·

Նզովե՞ս զայնոսիկ որք ոչ խոստովանին զյ̃ս.քս ա̃ծ և մարդ կատարեալ · և զմարդն ա̃ծացեալ · և զմ̃ն այնորիկ և ոչ ա̃ծածին զս̃բ կոյսն մարիամ։

Սա՛ տաէ հրաժարեալն չյետս վէր առնե լով, հրաժարիմ և նզովեմ։

Սա՛ պաշտօնէութեան տուէն ·

Անաթիմա · նզովեալ եղիցի ·

Սա յորդէս յանուն հրաժարման եղիցի

Հրաժարիս և նզովե՞ս զարիոս աղեքսանդրացին · որ ոչ խոստովանեցաւ զընութ̃ միանալն 'ի մարմնի բանին ա̃յ · և զնոյն մի ք̃ս ·

Հրաժարիս և նզովե՞ս զմակեդոն հայհոյիչն · որ ոչ խոստովանեցաւ զհոգին ս̃բ համագոյակից հօր և որդւոյ · այլ ըստացական և արարած ·

Հրաժարիս և նզովեմ զմարդա-
դաւանն նեստոր. որ ոչ խոստովա-
նի անձամբն զՔս յոյսն Մարիամ.
և զծնեալն 'ի նմանէ ոչ բոլորո-
վին ած. այլ սոսկ մարդ,

Հրաժարիս և նզովեմ ըզ պօղոս
սամոստացին. որ զմի քն բաժա-
նեաց յերկու դէմս և յերկու
երեսս. և միայն մերձաւորութի
պատուի և ճոխութիւն ետ նմա.
և ոչ միութի բնութե.

Հրաժարիս եւ նզովեմ զսաբէլ
լիբէացին. որ յերկու դէմս և
յերկու զօրութիս բաժանէ զբանս
սբ գրոց. զմարգարէից և զառա-
քելոց և զաւետարանչացն սբց
որ վն քն ասացեալ են. և կամ
իւր իսկ յի վն իւր. և զայնոսիկ
զոմանս մարդոյն առանձին իմա-
նայ որ 'ի մարմնի, և զոմանս՝ բա-
նին որ յայ հօրէ,

Նզովեմ զդիոդորոս տարսոնացին
և զթէոդորոս սամոստացին. եւ
զայնոսիկ որք ոչ խոստովանին ըզ



միա

միանալ բանին 'ի մարմնի · և ըզ
նոյն խոստովանիլ մի տէր մի յս՟
մի որդի այ՟ · ած՟ և մարդ կատա
րեալ · որդի այ՟ և որդի մարդոյ։
Նզովեմ զմանի հերձուածողն ·
որ ասաց երկու ած՟ · մինն բարի
և մինն չար։
Նզովեմ զեպիկիւրոս · որ ասաց
ինքնեղ զարարածս ։
Նզովեմ զսաբէլ · որ ուրացաւ
զանձնաւորութի երրորդութեն ·
և մի անձն կոչէր զերրորդութին։
Նզովեմ զսոկրատէս · որ յանէ
տակից նիւթոյ ասաց լինիլ աշ
խարհի։
Նզովեմ զգալիանոս · որ 'ի հրեշ
տակաց ասաց լինիլ և ստեղծիլ
զերևելիս։
Նզովեմ զպիղծն կապակրատոս ·
որ 'ի յոլսեփայ և 'ի մարիամայ
ասաց զքս՟։
Հրաժարիս և նզովեմ զամ՟ հերձ
ուածողսն և զապականիչսն · որք
ասացին զհոգին սուրբ օտար 'ի

բնութեն ոյ · կրասէր և պաշտօն_
ատար · և այլ բազում հայհոյու_
թիւնս խօսէին ։

Նզովեմ զմանիքեաս · որ առաջօք
ասաց զմարմնանալ բանին ։

Նզովեմ զևտիքէս · որ ուրանայր
զշնորհօքն քո արդարանալն ·

Նզովեմ զանթրովկիտոս · որ ասաց
յերկնից բերեալ զմարմինն քո ,
և եանց ընդ կոյսն որպէս ընդ
խողովակի ·

Նզովեմ զլևոն հերձուածօղն և
զպիղծ տումարն իւր զոր գրեաց
զմինն յերկուս բաժանեալ ·

Նզովեմ և հրաժարիմ միահա_
մուռ յամ չար հերձուածողացն
և յաղանդոց նոցա որք են արբա
նեակք չարին ·

Նա՛ տպս ինքն Նոյեմն առէ ·

Նզովեալ և անիծեալ եղիցին
ամ դասք հերձուածողաց , 'ի
հօրէ և յորդւոյ և 'ի հոգւոյն սբյ
ամէն ·

Նա՛ ժողովուրդն ասէն՝ եղիցի եղիցի



Նա՛

Ա՛ դարձեալ ասէ փոխադրութեան ։

Որովհետև հրաժարեցայք որ-դեակք՝ յամ չար հերձուածո-ղաց, պարտ է ձեզ այսուհետև հետևիլ և աշակերտիլ ամ ուղ-ղափառ և ամ աբան հայրապետացն ·

Ա՛ պաշտօնէութեան ասէն ։

Յաւիտենական յիշատակն ար-դարոց օրհնութեամբ եղիցի ·

Հարցանէ Եպիսկոպոսն ։

Աշակերտիս և հետևելս սրբոյն դիոնէսիոսի արիսպագացւոյն և յրուէթէոսի վարդապետին ·

Ա՛ հրաւիրեալ ասէ, Աշակերտիմ և հետևիմ ·

Պաշ՛ · Յաւիտենական յիշա՛ ։

Ա՛ այսպէս ասի յամ՛ հարցման ,

Աշակերտիս մեծին սեղբեստրոսի և աթանասի հայրապետացն ·

Աշակերտիս մեծին գրիգորի մերոյ լուսաւորչին · որդւոց և թոռանց նորին ·

Աշակերտիս մեծ թարգմանչացն



մե

մերոց սահակայ և մեսրոպայ
հայրապետացն ։

Ի շաբաթուն սբյն բարսղի կե֊
սարացւոյն և գրիգորի նիւսացւոյն ։

Ի շաբաթուն սբյն կիւրղի երու
սաղէմացւոյն և եփրեմի խո
րին ասորւոյ ։

Ի շաբաթուն սրբոյն գրիգորի
ածաբանին և եպիփանու կիպ
րացւոյն ։

Ի շաբաթուն սրբոյն յովհաննու
ոսկեբերանին , և կիւրղի աղեք
սանդրացւոյն ։

Ի շաբաթուն սբյն յակոբայ մծ
բնայ հայրապետին ․ և յակոբայ սըր
ձնեցւոյն ․ և գրիգորի սքանչելագործին

Ի շաբաթուն սբյն յօհաննու օձ
նեցւոյն , և յօհաննու որոտնեցւոյն ,
և աշակերտի նորին սրբոյն գրիգո
րի տաթևացւոյն ։

Ի շաբաթուն սբյն ստեփաննոսի
սիւնեցւոյն , և պօղոսի տարօնացւոյն

Ի շաբաթուն սբյն պարսամայ ճգ
նաւորին , և սիմէօնի սիւնակեցւոյն ։

Աշակերտին Նիկիոյ սրբ ժողո֊
վոյն, ԳՃԺԸ հայրապետացն։
Աշակերտին Կոստանդնուպոլսոյ
սրբ ժողովոյն, ՃԾ հայրապետացն։
Աշակերտին Եփեսոսի սրբ ժողո
վոյն, ԲՃ հայրապետացն։
Աշակերտին սմ ուղղափառ և
սրբ հայրապետացն որք ուղիղ դաւ֊
անութեամբ համառօտեն 'ի մեզ
զբանն ճշմարտութեան։

Այս ասա ինքն ԳԾ կարգաւորն ասէ։

Յաւիտենական յիշատակն ար֊
դարոյ օրհնութեամբ եղիցի

Այս ասէ գործեալ

Որպէս ասէ տրն մեր յս քս։
Ամենայն որ խոստովանեսցի
զիս առաջի մարդկան՝ խոստովա
նեցայց և ես զնմանէ առաջի հօր
իմոյ որ յերկինս է. և որ ուրաս
ցի զիս առաջի մարդկան, ուրա
ցայց և ես զնմանէ առաջի
հօր իմոյ որ յեր֊
կինս է։

Ապա սարկաւագն ասէ.

Ապա եւս խաղաղու". Օրհնեա՛ տր.

Ապա վարդապետն բարձրաձայնէ ասելով,

Հոգին տր ած որ էջ 'ի յորդա-
նան և 'ի վերնատունն, և յայտ-
նեաց զքի ածութիւն. Նոյն հե-
ղումն շնորհաց տր հոգւոյն ծա-
ղկեսցի 'ի մեզ քո. բանալով զա-
ռագաստ մտաց քոց 'ի ճանաչումն
ածութեան քի. Ըստ որում, ոչ ոք
ասէ տր զյս, եթէ ոչ հոգւով սբվ
Ապա ծաղկեցուցէ՛ զմիտս քո 'ի
դաւանութիւն ուղղափառ հա-
ւատոյ ընդ սուրբ հայրապետացն
ամէն.

Ապա ժողովուրդն ասէն, եղիցի եղիցի

Ապա սկսանին շար" Տկ.

Իմաստութի երկնային իջեա՛լ 'ի
վերուստ՝ ժողովել զմոլորեա՛լսն
խելք զբանանէ զյիմարս աշխարհի.
Եւ լոյց 'ը լուսով քո Իմաստուն՝
հալածեալ սոքօք ըզխաւարն ան-



գի

գիտութեն ի մէնջ. աղաչանօք սոցա խնայեա ի մեզ մարդասէր փրկիչ։ Ի ծնօղու ճանապարհորդեաց անհետ ընթացիւք. ի ծնօղակէ կու չեղեր զորսորդս անբանից կեն դանեաց ի մահ. զի ի ծնողէ աշ խարհի որսայցեն ըզբանականքս ի կեանս. աղա. Անուանիր երկ րի մըշակդ երկնային. որ եսուր ըզսերմըն կենաց ի լեզուս բանին մըշակաց. և առաքեցեր սէր մանել յոգիս բանաւորաց.

աղաչանօք սոցա.

Որ զօրինակ երկոտասանն առա քելոց քոց քո և զեօթանասուն նորերորդ աշակերտացն. յառա ջադրոյն ծանուցեր ի թիւ որ րուենեացն և ըղերրացըն յա զիմայ. ողորմեա։ Որ չնեցեր զուն քո զեկեղեցի իմաստու

թի հօր յու. և կանգնեցեր իսմա
ւիլնս զեօթնարփեան հոգւոյն
զօրութի. և առաքեցեր ի ընդհա
ռայս քո մեզ զառաքեալսն կոչել
զհեթանոսս յարքայութիւն ուրախու
թեան խառնեցելոյ բաժակին.
աղաչա: Որ տէրականդ իշխա
նութ հայրոդս արարեր ընդ մեզ
զառաքեալսն կապել և արձակել
զորդիս մարդկան յերկինս և
յերկրի. և աթոռակիցս լինիլ
քեզ խոստացար յորժամ նըստիս
յաթոռ դատողական. աղա.

Այսօր ցընծայ եկեղեցի ի հո
գևոր հարսանիս. զոր պատրաս
տեաց ձայն բարբառոյ հայրըն
մաքուր փեսային. Այսօր փե
սայէրն և բարեկամքն ընդ երկ
նաւոր փեսային. միաւորեաց
զեկեղեցին փոխանորդելով ի յեր



կինս

կի՛նս։ Ա՛յսօր շնորհեցա՛ւ մեզ
դեղ կենա՛ց նը՛շխա՛րք սրբո՛յն ոս
կերաց · ի՛ ձեռըն ս՛բ լուսաւոր
չի՛ն Հայաստանեայց ազի՛ ·
Ա՛յսօր ցը՛նծայ զուարճացեալ
եկեղեցի Հեթանոսաց՝ · տօնե
լո՛վ զյի՛շատակ մեծի՛ նահա՛տակե_
ի՛ն և հօրըն հաւատոյ մե՛րոյ Հա
մու · օ՛րհնեցէք մանկունք սիօ_
նի՛ զՀայրըն լուսոյ անըմբռնելի ·
Ա՛յսօր նոր իսրայէ՛լ կոչեցեա՛լ
մարգարէիւքն առ ա՛ծ · ածնեա՛լ
ցը՛նծութեամբ ըղձօ՛ն հոլովա՛ցն ի
րայիլի՛ն առաջնոյ · գովե՛լով
ըղձակուխ անկեա՛ն երկրո՛ց որմոց
յամբառնութե՛ն · Ա՛յսօր ի՛ դըրու-
խըս լերանց ան ա՛ծ հաստա_
տեալ՝ որ և յակէա ռըռդիւ յամ
պոց հոգւոյն ածաբանուղխ առա՛
տահոս անձրևօք · բարեբանեա՛



դա

զանզեղուրդն կենաց զաղբերացա
նողո՛ն ծարաւեաց ։

Ո՛վ կոչեցեր ըզհրաւիրեալսն ի
հարսանիս քո միածնին՝ ընկեր
զհանձա՛յն իմաստութեան ի ձեռըն
սրբոյն գրիգորի . բարեխօսու
թեամբ սորա ողորմեա մեզ ա՜ծ ։

Ո՛վ գերագոյն քան ըզգենուլթն
չարչարանօք քո ընտրելոյն . զար
ձուցեր ըզմոլորեալսն ի գիտու
թի՛ն ճըշմարտութե՛ . բարե ։

Ո՛վ ի վերայն անդընդային ջաղ
խեր նովաւ զգլուխ վիշապին .
ի՛ գըբի ներքնոյն իջմամբ նորին
բարձրացուցեր զմեզ ի յերկինս .
բարեխօսութեամբ սորա ։

Ա՛յսօր զիմանալի լուսոյն ծա
գո՛ղն ի խաւարի նստելոցս .
զդրի՛ գործիս ո՛ք հայրապետ՜ան
եկայք վերապատուեսցուք ։



Ա՜յ

Այսօր զանապական հոգւոյն
պարգևսն բաշխօղ որդւոյ Թոր
գոմայ. յորդեգիս լուսոյ նորա-
ծընեալքն. եկայք։ Այսօր զամ-
այն բանին պատմօղն ի հայաս-
տան աշխարհի. անշակերտեալք ըն
մա մանկունք. եկ. Այսօր եր
գէ եկեղեցի որդւովք իւրովք ը
նդ հրեշտակս. յիշատակի լու-
սաւորչին փառք ի բարձունս
աստուծոյ։

Աղբիւր կենաց բաշխօղ շնոր
հաց հոգին է իջեալ ի բարձանց.
զանապական պարգևօք քո բա
ժանեցեր յառաքեալսն։ Որ ի
վերայ ջուրցն գորով ածէր ծա
նէիր զարարածս. իջեալ ի ջուրս
աւազանին ծնանիս որդիս
այ։ Որ զարդարեալ նորոգես
միշտ ըզ նոր քո զեկեղեցի. պէս


պէս.

պէս շնորհաց քոց պարգևօք
փայլեն մանկունք սորա։
Նուագ հրեշտակ երկնային յեռ
եալ ականց անմարմնոց․ բերեալ
պըսակ սբ կուսին՝ յորժամ փո
խիւր յաշխարհ վերին․ բարե։
Ողորմեալ սբ գընդերն երկո
տասան դասուց խմբերն․ սըա
ցեալք որպէս զարծուիք՝ յերու
սաղէմ քաղաք հասին՝ բարեխօ։
Ուսկ եկեալ բազմութ աշակեր
տաց նորին կտակին․ ի փոխումն
ծածնին մարգարտափայլ սըր
բոյ կուսին՝ բարեխօ։
Յաչի քոյ քս երկըրպագեն ա
րարածք ամ որ ի փըրկութ մեզ
կանգնեցաւ․ սա եղիցի մեզ
պահապան յաղթօղ․ ապրեցուցա
նել ըզ մեզ ի պատուհասից բան
սարկուին։ Ուսմա բարձրացար

բար

բարձո՛ղդ անիծից . որ փա՛ռաւո՛-
րեա՛լդ ես ընդ հօր ժողովե՛ր և
ը՛զհեռացեա՛լսըն կենսաբե՛ր փա՛յ-
տի՛ն . ապա Սո՛վաւ լուսաւորե-
ցան արարա՛ծք ա՛մ . սմա՛ սպա-
սէին արդարեա՛լքըն իմեղսաւէր
բա՛նտին . որ ազատեաց ը՛զ մեզ
ի պա՛տրանաց բա՛նսարկ։

Ալէլու" ալէ"։ Սիրտ սբ հաստա-
տեա յիս ած . և հոգի ուղիղ նո-
րոգեա ՚ի փորի իմում։ Ողորմեա
ինձ ած՝ ըստ մեծի ողորմութեան
քում։ ըստ բազում գթութեան քում
քաւեա զանօրէնութիւնս իմ։

## Ընթերցուած ՚ի Թւոց։

Ե՛ւ ել Մովսէս և խօսեցաւ ժո-
ղովրդեանն զպատգամս տն .
և ժողովեաց եօթանասուն այր ՚ի
ծերոց ժողովրդեանն և կացոյց
զնս շուրջ զխորանաւն։ Եւ էջ
տր ամպով և խօսեցաւ ընդ Մով-


սէ

սէսի. և էառ 'ի հոգւոյն որ 'ի նը
մա և էարկ ղեօթանասուն ար
ամբքն և զծերովքն. Եւ իբրև
հանգեաւ հոգին ի վ՟ր ն՟ց և մար
գարէացան 'ի բանակին, և այլ
ոչ ևս յաւելուին. Եւ մնացին
երկու արք 'ի բանակի անդ. ա
նուն միոյն Ելդադ, և անուն երկ
րորդին Մովդադ. և հանգեաւ 'ի
վ՟ր նոցա հոգին. և նոքա էին 'ի
գրելոց անտի. և ելին 'ի խորանն
և մարգարէացան 'ի բանակին.

## Ընթերցուած Յեսայեայ Մ՟ր.

Հոգի տ՟ն 'ի վ՟ր իմ. վ՟ս որոյ և
էօծ իսկ զիս. աւետարանել աղ
քատաց առաքեաց զիս. բժշկել
զբեկեալս սրտիւք. քարոզել գե
րեաց զթողութ՟ի և կուրաց տե
սանել. Կոչել ամ տ՟ն ընդունելի
և օր հատուցման ա՟յ մերոյ.
Մխիթարել զ՟ամ սգաւորս. տալ
սգաւորաց սիոնի փառս. Փոխա
նակ մոխրոյն՝ օծումն ուրախութ՟ե



և

և սգաւորացն հանդերձ փառաց
փոխանակ ոգւոցն վհատութեն։
Այլ կոչեսցին նոքա ազգք արդա-
րութե տունկք տն ՚ի փառս. և շի-
նեսցեն զաւերականս յաւիտենից
և զյառաջագոյն աւերեալսն կանգ-
նեսցեն. և նորոգեսցեն զքա-
ղաքս աւերեալս յազգաց մինչև
յազգս։ Այլ եկեսցեն օտարա-
ծինք հովուեսցեն խաշանց քոց. և այլ
ազգիք մաճկալք և այգեգործք
քո։ Բայց դուք քահանայք տն
կոչեսջիք, և պաշտօնեայք այ մե-
րոյ անուանիջիք. զզօրութիս ազ-
գաց կերիջիք. և մեծութե նց
սքանչելի լինիջիք։ Փոխանակ ա-
մօթոյն ձերոյ կրկին ուրախութի.
և փոխանակ անարգանաց ձերոց՝
ցնծութի. և ապա զերկիրն յերկ-
րորդում ժառանգեսջիք. և ու-
րախութի յաւիտենից ՚ի վր գլխոց
ձերոց։

Ընթերցուած ՚ի գործոց առաքելոց։

Այլ ՚ի կատարել աւուրցն պենտե-
տա

տեկոստէից, էին ամ̃քն միաբան
ի միասին։ Եւ եղեւ յանկարծակի
հնչիւն յերկնից՝ եկեալ իբրեւ
սաստիկ հողմոյ եւ ելից զամ̃ ըղ
տունն յորում նստէին. եւ երեւ-
եցան նց̃ բաժանեալ լեզուք իբ-
րեւ ՚ի հրոյ. եւ նստաւ իւրաքանչ-
իւր ի վր̃ նց̃. եւ լցան ամ̃քին հո-
գւով սբ̃վ. եւ սկսան խօսիլ այլ
լեզուս որպ̃ եւ հոգին տայր բար-
բառիլ նց̃։ Եւ էին յեմ̃ բնա-
կեալ հրէայք՝ արք երկիւղածք
յամ̃ ազգաց որ ՚ի ներքոյ երկնից
Եւ իբրեւ եղեւ բարբառս այս,
եկն միաբան բազմութիւնն այն
եւ խռնեցաւ՝ զի լսէին իւրաքանչ
իւր լեզուս խօսիլ նց̃։ Սքանչա
նային ամ̃քեան եւ զարմանային եւ
ասէին ընդ միմեանս, ո՞չ ահաւա
սիկ ամ̃քին սոքա որք խօսին գա
լիլեացիք են. եւ զիա՞րդ լսեմք
մեք յիւրաքանչիւր բարբառս մեր
յորում ծնեալք եմք. պարթեւք
եւ մարք եւ եղիմացիք եւ որ բնա-



կեալ

կեալ են 'ի միջագետս հրէաստա-
նի. և 'ի գամիրս. և 'ի պոնտոս և
յասիա. 'ի փռիւգիա և 'ի պան-
փիւլիա. յեգիպտոս և 'ի կողմանս
լիբէացւոյ. որ ընդ կիւրենացիս
և որ եկք հռոմայեցիք. հրէայք
և եկք նորոնց. կրետացիք և
արաբացիք. լսեմք խօսից նց̅ 'ի
մեր լեզուս զմեծամեծս այ̅.
Աքանչանային ա̅մքեան զարմա-
ցեալք և ասէին ցմիմեանս. զի՞նչ
կամիցի այս լինել. Եւ՛ կէսոցն
ընդ խաղ արկեալ ասէին, թէ
քաղցուալիցք իցեն. Յարուցեալ
պետրոս հանդերձ մետասանիւքն
համբարձ զձայն իւր և խօսեցաւ
ընդ նս̅. Ա՛րք հրէաստանեայք
և որ բնակեալ էք յէմ̅ ա̅մքն,
այս ձեզ յայտնի՛ լիցի և ունկն դիք
բանից իմոց. Ո՛չ որ̅ դուք կար-
ծէք թէ սոքա արբեալ իցեն,
զի դեռ երեք ժամք են աւուրս.
Այլ այս է զոր խոստացաւ ած̅
'ի ձեռն մարգարէին յովելեայ.
և

և յետ այսորիկ եղիցի յաւուրս
յետինս ասէ Ա՟ծ, հեղից յոգւոյ
իմմէ ի վ՟ր ա՟մ մարմնոյ . և մարգա
րէասցին ուստերք ձեր և դս
տերք ձեր . և երիտասարդք ձեր
տեսիլս տեսցեն . և ծերք ձեր ե
րազովք երազեսցին . Եւ ի վերայ
ծառայից իմոց և ի վ՟ր աղախնեայց
իմոց յաւուրսն յայնոսիկ հեղից
յոգւոյ իմմէ և մարգարէասցին .
Եւ տաց նշանս յերկինս ՚ի վեր
և յերկիր ՚ի խոնարհ . արիւն և
հուր և մրրիկ ծխոյ . արեգակն
դարձցի ՚ի խաւար և լուսինն յա
րիւն . մինչև եկեալ իցէ օր Տ՟ն
մեծ և երևելի . Եւ եղիցի ա՟մ
որ կարդասցէ զանուն տեառն՝
կեցցէ .

Պօղոսի առաքելոյն ՚ի կորնթա".

Զ իմաստութի՟ խօսիմք ընդ կա-
տարեալս . զիմաստութիւն, ոչ զաշ
խարհիս այսորիկ և ոչ զիշխանաց
այսորիկ զխափանելեացս . այլ


խօ

խօսիմք զայ իմաստութին ծածուկ
խորհրդով․ զոր յառաջքան ըզ
յաւիտեանս սահմանեաց ած ՚ի
փառս մեր․ զոր ոչ ոք իշխանացն
աշխարհիս այսորիկ ծանեաւ․ զի
եթէ էր ծանուցեալ, ոչ արդեւք
զտէրն փառաց ՚ի խաչ հանէին։
Այլ որպէս եւ գրեալ է․ զոր ակն
ոչ ետես եւ ունկն ոչ լուաւ եւ
՚ի սիրտ մարդոյ ընաւ ոչ անկաւ,
զայն պատրաստեաց ած սիրելեաց
իւրոց։ Այլ մեզ յայտնեաց ած
հոգւովն իւրով․ զի հոգին զամ
քննէ եւ զխորս այ։

Ալէլ՛՛ ալէլ՛՛․ Սիրտ սբ հաստա
տեա՛ յիս ած․ եւ հոգի ուղիղ նո
րոգեա՛ ՚ի փորի իմում։

Աւ̃ Աւետարանն ըստ Մատթէոսի։

Եւ շրջէր յս ընդ ամ քաղաքս
եւ ընդ գիւղս․ ուսուցանէր
՚ի ժողովուրդս նոցա եւ քարոզէր
զաւետարանն արքայութե երկնից․
եւ բժշկէր զամ ախտս եւզամենայն
հիւ

հիւանդութիւն ՚ի ժողովրդեանն։ Եւ տեսեալ զժողովուրդսն գթացաւ ՚ի նս՟. զի էին աշխատեալք և ցրուեալք իբրև զոչխարս որոց ոչ իցէ հովիւ։ Յայնժամ ասէ ցաշակերտսն իւր, հունձք բազում են և մշակք սակաւք. արդ աղաչեցէ՛ք զտ՟ր հնձոցն զի հանցէ մշակս ՚ի հունձս իւր։ Եւ կոչեցեալ առ ինքն զերկոտասան առաքեալսն իւր՝ ետ նց՟ իշխանութի այսոց պղծոց. հանել զնս՟ և բժշկել զա՟մ ցաւս և զա՟մ հիւանդութիւ։ Եւ առաքելոցն երկոտասանից՝ էին անուանքն այսոքիկ։ Առաջինն սիմօն, անուանեալն պետրոս. և անդրէաս եղբայր նր՟. յակոբոս զեբեթեայ և յօհաննէս եղբայր նր՟. փիլիպպոս և բարդուղիմէոս. Թումաս և մատթէոս մաքսաւորն. յակոբոս ալփեայ. և ղեբէոս որ անուանեցաւն Թադէոս. սիմօն կանանացի և յուդա իսկարիովտացի

րև մատնեացն զնա ։ Զնս եր
կոտասանեսին առաքեաց յս ·
պատուիրեաց նց և ասէ, 'ի ճանա
պարհս հեթանոսաց մի՛ երթայցէք
և 'ի քաղաքս սամարացւոց մի՛ մը
տանիցէք · այլ երթայք առաւել
առ ոչխարս կորուսեալս տանն
իէլի ։ Իսկ իբրև երթայցէք, քա
րոզեցէ՛ք և ասացէք թէ մերձեալ է
արքայութիւնն երկնից ։ Զհիւ
անդս բժշկեցէք · զբորոտս սըր
բեցէք · զդևս հանէք · ձրի առէք
և ձրի տուք ։ Մի՛ ստանայք ոսկի
և մի՛ արծաթ · և մի՛ պղինձ 'ի գօ
տիս ձեր ։ մի՛ պարկ 'ի ճանապարհի
և մի՛ երկուս հանդերձս · մի՛ կօ
շիկս · մի՛ ցուպ · զի արժանի է մը
շակն կերակրոյ իւրում ։ Յոր քա
ղաք մըտանիցէք կամ 'ի գեօղ,
հարցանիցէք թէ ո՞ է 'ի նմա ար
ժանի · և անդ լինիջիք մինչև ե
լանիցէք անտի ։ Իսկ իբրև մը
տանիցէք 'ի տունն, ողջոյն տաջիք
նմա և ասասջիք · ողջոյն տանս

այնմիկ. Եթէ իցէ տունն արժա-
նի, եկեսցէ ողջոյնն ձեր ի վ͞ր ն͞ր.
ապա թէ ոչ իցէ արժանի, ողջոյնն
ձեր առ ձեզ դարձցի. Եւ որ ոչ
ընկալցի զձեզ և ոչ լուիցէ բա-
նից ձերոց, իբրև ելանիցէք ՚ի քա-
ղաքէն յայնմանէ, թօթափեսջիք
զփոշի ոտից ձերոց. ամէն ասեմ
ձեզ՝ դիւրագոյն լիցի երկրին սո-
դոմացւոց և գոմորացւոց յաւուրն
դատաստանի քան քաղաքին այնմիկ.
Ահաւասիկ ես առաքեմ զձեզ
իբրև զոչխարս ՚ի մէջ գայլոց. ե-
ղերուք այսուհետև խորագէտք
իբրև զօձս. և միամիտք իբրև զա-
ղաւնիս. Զգոյշ լինիջիք ՚ի մարդ-
կանէ. զի մատնեսցեն զձեզ յա-
տեանս և՚ի ժողովուրդս իւրեանց
տանջիցեն զձեզ. և առաջի դա-
տաւորաց և թագաւորաց տանիցեն
զձեզ վ͞ս իմ ՚ի վկայութ͞ի ն͞ց և
հեթանոսաց. Այլ յորժամ մատ-
նիցեն զձեզ, մի՛ հոգայցէք թէ
որպէս կամ զի՞նչ խօսիցիք.



զի

զի ոչ եթէ դուք իցէք որ խօսի
ցիքն, այլ Հոգին Հօր ձերոյ խօ
սեսցի ՚ի ձեզ։

Ս[illegible] սարկաւագն ասէ [illegible]
[illegible] ՚ի [illegible] և [illegible]
[illegible]. [illegible] ՚ի [illegible]
և ասէ, Լուսաւոր խաղաղութեն զմր",
[illegible]
[illegible], Օրհնութի
և փառք Հօր և Որդ":

Ն՛ու զմաք ուր և զմբ գաւաղանն
՚ի ձեռաց Հոգւոյն սբյ. ունե
լով իշխանութի մխիթարել զվըշ
տայս և զտրտմեալս ՚ի պէս պէս
փորձութեանց յուսով պահեաց.
բոլորին Ր, մխիթարեցէ՛ք մխիթա
ռեցէք զժողովուրդ իմ ասէ տր.
Նա դու ըստ վաստակոց քոց ըն
կալցիս զմխիթարութի Հոգւյն սբյ
՚ի Հոգի և ՚ի մարմին քո ամէն.

Սբ Խաչիւս. Պահպանիչ.

Հայր Գր.

Կատարեցաւ առաջին սաւ իշխանն
վարդապետութեն.

Ս[illegible] [illegible] Պետրոսի աթոռակալութեանն.
Ս[illegible] ի [illegible] Հռոմայ և [illegible]
Շարական Գ. ձ.

Ցընծա՛յ այսօր եկեղեցի ա՛յ. յի՛շատակաւ մե՛ր առաքելո՛ց Յցն հաստատեա՛լ ի վե՛մ հաւա-տո՛յ. զարդարեա՛լ ի փառս մարմնացե՛լոյ բանի՛ն. Ո՛ր զգե-ցի՛ անճառելո՛յ մի՛ածնի՛ն. յա՛յտ-նութեամբ հօ՛ր ի վերուստ դա-ւանեա՛ցաւ. և ե՛րանականն ար-ժանացեալ շնորհի՛ւ. վէմ ան-վանե՛լ ի դրանց դըժոխո՛ց.
Ո՛ր անմարմնոց դասո՛ւց հրե՛ղի-նաց. հո՛ղեղէն բնութե՛ գերա-զանցեա՛ցաւ. և բարձրացեա՛լ ի յերկնայի՛ն խորա՛նսն. ա՛ն-ճառ բանի՛ն արժանաւորեա՛լ.
Ո՛ր գերագոյն ընտրելո՛ց առա-


քե

քերովբէից դասուց․ անուանե-
ցեր լինել զերանելին ըղձալեա-
րոյ Տ՟ն․ գլուխ մեր հաւատոյ
հին եկեղեցւոյ։ Որ յառաջա-
գոյն կողմանէ՝ առաքեցեր զա-
նօթն ընտրութեան Ց՟ն․ յայտնե-
լով աշխարհի զանճառ տնօրէ-
նութեան քո զխորհրդ Տ՟րդ․
յօրինաքանութեան կոչել զհե-
թանոսս։ Որ երկուքումբք ընտ-
րելովք լուսաւորչօքն աշխար-
հի Ց․ հաստատեցեր զեկեղեցի
քո զքրիստոն՟ս․ մաղթանօք սո-
ցա խնայեա ի մեզ։
Օրհնեցէք զՏ՟ր յօրինու-
թիւն ի նոր․ քանզի ծագեաց
մեզ եղջիւր փրկութեան ի տանէ
դաւթի կերպարանել զմե
կամեցաւ․ օրհնեցէք զՏ՟ր
յօրինութիւն ի նոր։ Պ...

ծաղկեալ իլ յարմատոյն յեսսեայ
դաւթի մարգարէն․ և ինձորին
շառաւիղ առաքելոցն յակոբա
ամենատես և սպասաւոր բա
նին ա͞յ․ օրհ․ Օրհնեցէք
օրհնեցէք ըզտէր՝ որ երկուքե
ւմբք ընտրելովք՝ առաքելովքն
յակոբաւ և մարգարէիւքն դաւ
թիւ հաստատեաց զհիմունս
տ͞ր եկեղեցւոյ․ օրհնեա․
Այսօր ցընծան հրեշտակք ի
յերկինս՝ յիշատակաւ հողանիւթ
հրեշտակի ծն․ որք համագա՛
սեալք ձայնիւն բարբառոյ ա͞յ․
երգեն զօրհնութիւնս հօր իբար
ձունս․ Այսօր ցընծան հոգիք
արդարոց․ նահապետաց և մար
գարէից․ ձայնակից լինիլ մե
ծին ի ծնունդըն․ կուսածնին․
երգեն զօրհնութիւնս որդւոյն


մի

միածնի։ Այսօր ցնծան դասք
առաքելոցն. տօնախմբելով զյի
շատակ մեծի մկրտչին Յն. որ ա
ռաքելոցն է սկիզբն և մարգարէից
լրումն. ընդ նոսին և մեք
բերկրեցելոյն ի հօրէ երգեմք ըզ
փառս ի բարձունս.

Այսօր ժողովուրդք որք ի հե
թանոսաց. հրաւիրեալք յառա
ջագոյն մարգարէի Ձ.ք զալ ա
ածն աբրահամու յերկրպագու
թիւն. օրհնեցէք ըզտէր
յերկիր նա ընդ երկնաւորայն.

Այսօր որդիք դստեր վերին սի
ոնի. շինեալք ի վր հիմանն ա
ռաքելոց և մարգարէի Յց որք
և ըմպէք զպատուաբերն վտակ
հոգւոյն ի յանդերձայն խորայէլ
յեկեղեցիս սրբոց. օրհնե
ցէք ըզտէր յօրհնութի ինն.



Այ

Այսօր վերին զօրացըն համա֊ձայնեալք · դասք նահապետաց և մարգարէից · երգեն աստու֊ծոյ զերգըս հոգևորս · ի յիշատակի սոցա երգեմք և մեք ըզ փառս ի բարձունս։

Այսօր երկնայնոցն ընդ մեզ տօ֊նախմբելով զյիշատակ սուրբ հայրապետացն · որք լուսաւո֊րեցին զհաւատոյ մանկու֊նս · և ընդ հրեշտակացըն դասս վերակարգեցան։

Այսօր առաքելոց և մարգարէ֊իցըն դասք · տօնակից գոլով դըստեր վերին սիօնի ծ · ի յի֊շատակի սբ վարդապետացն · որք իմաստից նոցին խորոց յայտ֊նեցին զխորհուրդ · Այսօր քա֊հանայք և պաշտօնեայք սբ եկե֊ղեցւոյ վերապատուեն զյիշա֊տակ

տակ մբ վարդապետաց ծցն· որովք
զարդարեցան երկնային շնոր-
հօ Հոգւոյն· երգեն ընդ նոսին
զփառս յաւիտեանն։

Լուսաբեր աղաւնոյ՝ ի ջանե-
լով մեծաձայն հնչմամբ ի բար
ձու ծնց· ի նմանութիւն լուսոյ
փայլման հրաշինեաց զանկիզելի
զաշակե Հոգւոյն· մինչ դեռ նշա
տէին խուրբ վերնատանն։
Նմանութական աղաւնի· անքըն
նելի որ քննէ զխորս այ ծյ·
զոր առեալ ի Հօրէ պատմէ զահա
ւոր և զմիասնդամ գալըստ Յ
ւսան· զոր քարոզեցին համա
դոյական։ Որդնութիւն ի բար
ձունս՝ Եղիցին ի Հօրէ հոգւոյն
սրբո ծյ· որով առաքեալքն ար
բեցան անմահական բաժակա
Հոգւն· և հրաւիրեցին զերկիրս
ի յերկինս։

Մածգաւորս փառաց՝ ա̄ծ Հոգիդ կենդանարար․ ի շնորհաբաշխ աւուր մեծի ծընընդեան մօրի ամու՛՝ դըստեր դաւթի թագաւորի՛ ն․ նորոգեա՛ զկենդանութի՛ մերոյ թագաւորի՛ ''Ն․ զի օրհնեսցուք ըզքեզ ա̄ր այժմ և յաւիտեա՛ն։ Աղբիւր կենաց և փրկութե՛ մերոյ՝ Հոգի Հօր և որդւոյ․ ի յարմատոյն յեսսեայ բըղխման գաւազանի հասել ժամա՛ նու․ շնորհաշարդ պայծառացո զգաւազան իշխանութե՛ մերոյ հայրապետի՛ ''Ն․ զի օրհնես։

Լուսոյն աշխարհի և ճառագայթ իմանալի Հոգիդ ա̄ք ա՛ստուծոյ․ ի ցնծութե՛ աւուր լըման ուրախութե՛ յովակիմայ և աննայի՛ ն․ աղօթիւք սոցա՛ լըցո զպետ ըսկարեաց հայաստանեայց եկեղե

ցուո՛ ԱԷԲ՛յ · զի օրհնեա·

Պաւա՛ղան զօրութե՛ ը՛ղխա՛չ քո
ետո՛ւր մեզ. քս՛ · և սո՛վոր յաղ
թեսցուք անօրէ՛ն թշնամւոյն·
Սա՛ է զէ՛ն յաղթութե՛ն սրեա՛լ ար
եամբ որդւոյն ա՛յ · և սո՛վոր·
Սա է ա՛թոռ տրունեա՛ն և իմա՛
է բազմեալ քս՛ որդին ա՛յ · և սո՛·
Սա է սեղա՛ն սրբութեա՛ն և ի
ամ՛ է պատարագեալ քս՛ գառն
ա՛յ · և սո՛վ· Սա է կարապետ յա
ւո՛ւր գալըստեան փրկչին · և
պըսա՛կ պարծանա՛ց հաւատացե
լո՛ց · և սո՛վոր յաղ·

Ալէլու' ալէլ'· Թեւք աղաւնոյ
արծաթապատ · և թիկնամէջ նո՛ր
՚ի գոյն ոսկւոյ · Յարիցէ ա՛ծ և
ցրուեսցին ա՛մ թշնամիք նորա ·
փախիցեն ատելիք նորա յերե
սաց նորա·



Ալ

# Ընթերցուած Յառակաց.

Ամենեցուն ճարտարապետն ուսոյց ինձ իմաստութի̄։ Զի գոյ ի նմա հոգի մտաւոր. ս̄բ. միածին. բազմաբաշխ. դիւրաշարժ. պարզ. անարատ. յայտնի. անվրէպ. բարեսէր. երագ. անարգել. բարերար. մարդասէր. հաստատուն. զգուշաւոր. անհոգ. ամենազօր. ամենահայեաց։ Զի քան զա̄մ շարժունս շարժագոյն է իմաստութի̄. դարմանէ և ընդ ա̄մ մտանէ վասն յստակութեան։

Քանզի ճաճանչ է ա̄յ զօրութեանն և ծագումն ճշմարիտ փառաց ամենակալին. վ̄ս այնորիկ և ոչ մի ինչ պղծեալ խառնի ի նմա։

Քանզի նշոյլ է մշտնջենաւոր լուսոյն. և հայելի անարատ ա̄յ ազդեցութեանն և պատկեր առատութե̄ նորա։ Մի է և ա̄մի կարող. կայ յինքեան և զամենայն նորոգէ. Եւ ըստ ազգաց յոգիս սուրբս



փո

փոփոխէ · բարեկամս ա̃յ և մար
գարէս զարդարէ · Ո՛չ զոք սիրէ
ա̃ծ · բայց զայն որ ընդ իմաստու
բնակիցէ ։ Զի գեղեցկագոյն է
քան զարեգակն և քան զամենայն
գիրս աստեղաց ։ Ընդ լուսոյ հա
մեմատեալ առաւել գտանի · զի
զնա գիշեր փոխանակէ · բայց ի
մաստութե̃ ոչ յաղթէ չարութի ·
Ձկտի 'ի ծագաց մինչև 'ի ծագս ·
օգտակա՛ր է առողջութբ̃ և դար
մանէ զա̃մ քաղցրութբ̃ ։ Զնա՛
սիրեցի և քննեցի 'ի մանկութե̃
իմմէ · և խնդրեցի ածել ինձ 'ի
հարսնութիւն և եղէ ցանկացող
գեղոյ նորա ։

## Ընթերցուած Յովէլեայ Մար" ։

Եւ յետ այսորիկ եղիցի յաւուրս
յետինս ասէ ա̃ծ, հեղից յոգւոյ
իմմէ ի վ̃ր ա̃մ մարմնոյ · և մարգա
րէասցին ուստերք ձեր և դըս
տերք ձեր · և երիտասարդք ձեր
տեսիլս տեսցեն · և ծերք ձեր է


րա

բազումք երանեսցին։ Նա՛ խնդրեաց
ծառայից իմոց և իմո՛ց աղախնեայց
իմոց յաւուրսն յայնոսիկ հեղից
յոգւոյ իմմէ և մարգարէասցին.
Նա՛ տաց նշանս յերկինս 'ի վեր
և յերկիր 'ի խոնարհ. արիւն և
հուր և մրրիկ ծխոյ. արեգակն
դարձցի 'ի խաւար և լուսինն յա
րիւն. մինչև եկեալ իցէ օր տ̅ն
մեծ և երևելի։ Եւ եղիցի ա̅մ
որ կարդասցէ զանուն տեառն՝
կեցցէ.

Ընթերցուած 'ի Գործոց առաքելոց.

Նա՛ Եղև մինչդեռ ապօղոսն 'ի
կորնթոս էր, պօղոսի շրջիլ ընդ
վերին կողմանսն և իջանել յե
փեսոս և գտանել զոմանս աշա
կերտս։ և ասէ ցնոսա. եթէ հո
գի ս̅բ ընկալայք 'ի հաւատալն։
Նոքա ասեն ցնա. այլև ոչ եթէ
հոգի ս̅բ գուցէ լուեալ իցէ մեր.
Նա՛ ասէ, իսկ յի՞նչ մկրտեցայք։
Նոքա ասեն, 'ի յօհաննու մկր
տութիւն։ Նա՛ ասէ պօղոս, յով



հան

հաննէս մկրտեաց մկրտութիւն ապաշխարութեան ամ ժողովրդեանն. և ասէր, զի որ գալոցն է յետ իւր՝ ՚ի նա հաւատասցեն. այսինքն է ՚ի յս քս. Եւ իբրև լուան, մկրտեցան յանուն տն յի քի. Եւ ՚ի դնելն իւր նց պօղոսի զձեռն, եկն հոգին սբ իվր նց. խօսէին լեզուս և մարգարէանային:

Պօղոսի առաքելոյն ՚ի կորնթացւոց:

Վս այսորիկ ունիմք զպաշտօնս զայս ոպ և գտաք զողորմութի և ոչ ձանձրանամք. այլ հրաժարեցաք ՚ի գաղտնեաց ամօթոյն զի մի՛ գնասցուք խորամանկութբ. և մի՛ նենգեսցուք զբանն այ. այլ յայտնութե ճշմարտութեան ընծայեցուսցուք զանձինս մեր այ առ ամ միտս մարդկան առաջի այ Ապա թէ իցէ ևս ծածկեալ աւետարանն մեր՝ ՚ի մէջ կորուսելոցն է ծածկեալ. որոց ած աշխարհիս այսորիկ կուրացոյց զմիտս ան

հաւատոյցն. զի մի՛ ծագեսցէ 'ի
նմա լուսաւորութի աւետարանի
փառացն քի. որ է պատկեր ան
երևութին այ: Զի ոչ եթէ զան
ձինս քարոզեմք. այլ զքս յս զ
տր մեր. և զմեզ ծառայս ձեզ
վասն քի: Զի ած որ ասաց 'ի
խաւարի լոյս ծագել. որ և ծա
գեաց իսկ 'ի սիրտս մեր զլուսա
ւորութի գիտութե փառացն այ
'ի դէմս յի քի:

Ալէլու՛ ալէ՛: Յեկեղեցիս բա
րեբանեցէք զտր. և զտր աղբե
րացն իսրայելի:

### Աւ Աւետարանն ըստ Մարկոսի:

Ելանէ 'ի լեառն և կոչէ առ
ինքն զորս ինքն կամեցաւ. և
չոքան առ նա: Եւ արար երկո
տասանս զի իցեն զնովաւ. և զի
առաքեսցէ զնս քարոզել և ունիլ
իշխանութի բժշկելոյ զցաւս և
հանելոյ զդևս: Եւ եդ անուն
սիմոնի պետրոս. և յակոբու զե

բեդեայ և յովհաննու եղբօրն յա
կոբայ՝ եդ նց̃ անուանս բանէր
գէս. որ է որդիք որոտման. և
զանդրէաս. և զփիլիպպոս. և ըզ
բարդուղիմէոս. և զմատթէոս մաք
սաւորն. և զթօմաս. և զյակով
բոս ալփեայ. և զթադէոս. և զսի
մոն կանանացի. և զյուդա իսկա
րիովտացի. որ և մատնեացն զնա.

Աղօթք առաքելականն ժողովէ։

Ասելս խաղ՛՛. Օրհնեա վերջում.
Ասէ վարդապետն առնու ՚ի ձեռայն ըզ
գաւազանն ասելով, Օրհնութի և
փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյ՛՛.
Ասէ ապա ընթերցողն և ասէ։

Ո՛վ քեզ կարողութի ՚ի Հոգւոյն
սբյ. ընդունիլ և զերկրորդ
աստիճան վարդապետութեանս.
և լինիլ նախ միջնորդ այ և մարդ
կան. Երկրորդ զթիւրսն յուղ
ղութի ածել. Երրորդ նմա
հանգիստ լինիլ ժողովրդեանն։

Ե 97

Չորրորդ՝ բարեխօսել առ ած.
Հինգերորդ՝ զպիղծն սրբել։
Վեցերորդ զմեղաւորսն դարձու-
ցանել։ Եօթներորդ զանհաւատսն
դարձուցանել։ Ութերորդ զոր-
գետսն իմաստնացուցանել։
Իններորդ զանօրէնսն ՚ի յօրէնս
կոչել։ Տասներորդ որդի և ժա-
ռանգ առնել այ։ Եւ դու լիցի-
իբրև զծառ պտղատու և ար-
դիւնարար անձին. կալ ըստ կա-
նոնի կամացն այ. զի առնելով և
ուսուցանելով՝ մեծ կոչեսցիս յար-
քայութեան տն մերոյ յի քի
ընդ ամ սբս ամէն։

ՍԷ ԽՈՀԻՔՍ, ՊՈՀՊՈՒՆԻՀ։
Հայ Գր.

Կատարեցաւ Երկդ Աստիճանն
Վարդապետութե.

Առ սուրբն Ստեփաննոս Նախավկայն ՚ի նուէր ... Առ ...

Ո՛վ երկնային և ճառագայթ · առաքելական քարո՛զութեան արժանաւո՛ր լի՛նելով սբ ստե՛փաննոս · հաստատութիւ ի քո՛ է հայցեալ սբ եկեղեցւոյ · Որ քաջին յօ՛ժարական համբե՛րութեամբ ը՛նդ քարկոծումն յանձնառեր · շնո՛րհեալ քե՛զ յա՛յ լինիլ չարչա՛րակից քո · զի և՛ մե՛զ ուսո՛ւսցես փառաւ՛որել սբ զե՛րրորդութիւնն · Ա՛ղօթէիր որ քարա՛ձիգքն լի՛նէի՛ն ի քեզ նա՛խոդ ի՛ մա՛կայս · զի առցե՛ս ըզ հաստուցմունքն բարի՛ յա՛րարչէն ամե՛նեցուն · Ե՛այժմ աղա՛չեմք ըզքե՛զ և վա՛սըն մե՛ր բա՛րե՛խօսեա՛ ·

 Հանն

Տանն այ տեսանօղ բարի՝ ար-
ժանացեալ շնորհիւ տ͞ր գրիգո-
րիսի. կործանի՛չ բագնեաց քակ
ի՛չ մեհենեից զօրութե՛ խաչին
քահանայապետ ընտրեալ ա͞ծայ
ի՛ն յայտնութե՛ն. Բարունո՛յն
հրամանաւն ի վերուստ կոչեալ
յառաքելական աթոռ տէր՝ գրի
գո՛րիոս. յորդառատ բանիւ հո՛
գևոր ծննդեամբ լուսաւորե-
ցեր ըզ հայաստան և աշխարհս՝ ը
ա͞մ տեղիս շինեալ խորա՛ն փա
ռացն ա͞յ. Յանկալի՛ սրբէկից
անմա՛րմնակա՛ն վարուք՝ մաքրա՛
փա՛յլ մարմնո՛վ տ͞ր գրիգո՛րիոս. յա
նապատի բնակեցա՛ր հանդոյն յօ
հաննու և եղի՛այի մրգնեալ՝
օրէնըսդի՛ր ա͞ծային պատգամաց
նը՛մա՛ն մեծի՛ն մովսի՛ս.

Այսօր ցընծայ եկեղեցի՝ ընդ


ան

անմարմնոցըն դասակցեա՛լ տօ-
նելո՛վ զյի՛շատակըս քո՛ տէ՛ր
մե՛ր Ներսէս · որ ի հոգւո՛յն սըր-
բոյ աղաւնակե՛րպ իջմամբ վե՛րկայ-
ցար՝ բարեխօսեա՛ առ Քս՛ վասն
անձա՛նց մերո՛ց ։ Քահանայապետ
ը՛նտրեալ արժանապէ՛ս շնո՛րհօ՛ք
հոգւո՛յն՝ բա՛շխեցե՛ր զփրկա-
կա՛ն մարմին և զարի՛ւնըն տն՛ ·
յորում հրեղէ՛ն սիւն ի յե՛րկ-
նից իջեալ · բարե՛ · Լե՛րդ աղ-
չե՛մք ըզքե՛զ լուսաւորի՛չ հօ-
գւո՛ց մերո՛ց նըմանեա՛լ մովսէ-
սի՛ նախամարգարէի՛ն մեծի ·
լուսափայլեա՛լ դիմօք ածա՛հրաշ
տեսլեամբ · բարեխօ՛ս ։
Յաղթօ՛ղ և՛ ո՛ւր հայրա՛պետ նը-
մա՛ն մեծի՛ն մովսէսի · բարձօ՛ղ
խա՛չին պարծա՛նաց ընդ դիմա-
մարտ հա՛նդիսիւ՝ · ըզքե՛ ղ

ունիմք բարեխօս առ հայր յեր-
կինս վասըն մեր։ Առաքմամբ
սբ հոգւոյն յանապատէ կոչե-
ցար · առեր պատիւ մեծութե նը-
մա՛ն մեծին յովհաննու · երգակ-
ցելով ընդ վերնոյն · ըզ·
Աւրօղ եղեր զօրութե զարմանա-
գործ նըշանիւք · նըման մե-
ծին պետրոսի հովի՛ւ շնորհեալ
յայ ընտրեալ հօտին քո · ըզ·
Ուրախացան զօրք երկնից ե՜
քո՛ մեծի ճըգնութեն · որ ի
մարմնի կառուցար նըմա՛ն վե-
րին զւարթնոցն · ըզ· Բերկը-
մամբ քո սբ արտասուաց կենա-
գործեիր ըզ մեռեալս · նըմա՛ն
փըրկչին քո կենագործողին զա-
զարու՝ · ըզ· Այլ մեք ձայնիւ
ցընծութեն տօնեմք զքո սբ զյի՛-
շատակս · պատուեալ վըկայ քո



սբ

սուրբ հայրապետովդ յակոբ · ըղ։
Յանձն առեր զչարչարանս վա
սըն նոյեան տապանին · ի հրեշ
տակէն ընկալար զփայտ փրկու
թեն աշխարհի · ըղ։
Որ յանապատէ կոչեցար յառաքե
լական աթոռ բանիւ տր յակոբ ·
բարձրացուցեր զեղջիւր սիոնի
ճըշմարտութեամբ մասամբ նոյեան
տապանին։ Որ արդարութե
և լուսովքո փայլմամբն նոր արե
գական · պայծառ քան զարփին
վառեալ զօրութեամբ յառնել
ի հրաշ պատանւոյն։ Որ միացար
սրբութեամբ ի լոյսն մաքրուր ող
զանմարմինն · զարմացուցեր ըղզօ
րըս վերինս հիացուցեր զա
րարածս։ Արդ աղաչեմք ըղ
քեզ հայրըդ գթած և հովիւ
բարի · մաղթանօք հայցեա առ



առ

տէ՛ր վասն եկեղեցւո՛յ ․ մի՛շտ
անշարժ պահե՛լ յաւիտեա՛ն.

Ո՛ր յանքննի՛ն ծոցո՛յ հօր խո-
նարհեա՛լ որդի՝ ․ երևեցար ի՛ մէջ
երկրո՛ւց կենդանեա՟ցն ․ զո՛ր
նախամա՛րդուշա՛կ տեսլեա՛մբ ծանուց
մա՛րգարէ՛ն ։ Ո՛ր յաթո՛ռըս հրա
կերպեա՛նըս բա՛զմէի՛ր ընդ հօր՝ ․
բա՛րձրացա՛ր կամաւ ի կառըս խա՛
չի՟ն ․ և՛ հեծելո՛ւթեամբըդ
քո՛վ ազատեցեր զ՛դերեալսն.
Ո՛ր կուսակա՛ն ծնընդեա՛մբ ի՛
փրկութի՟ն յայտնեալ ․ և՛ առաքե
ցե՛ր զերկնա՛ւորըս քո քարո՟զիչս ․
աւետարա՛նե՛լ ըզկենսաբեր յա՛
րութի՛ւնդ ։

Ա՛յսօր ցն՛ծան դա՛սք առա
քելոցըն գո՛վըտե՛ամբ հո՛գւո՛յն
ա՟յ ․ զորս մըխիթարեա՛ց փո՛խա
նա՛կ բանի՛ն մարմնացելո՛յ եղեա՛լ


ընդ

ընդ նոսա . փառըս տացուք նը-
մա՛ սըրբասաց ձայնիւ։ Այսօր
բըղխեա՛ց ջո՛ւր կենդանի յե-
րուսաղէմ յորմէ ըր՛ցա՛ն գետք
ա՟ծայինք՝ . և ընթացեալք ար-
բուցին տիեզերաց զքառաւոր
տա՛կ աղբի՛ւրն եդեմայ . փառըս։
Այսօր ցօղով իմանալեաւ յա՛մ-
պոց հոգւոյն զուարթացա՛ն բոյսք
եկեղեցւոյ . պայծառացան դաշտք
արդարութե՟ և գեղեցկացան ա-
նապատք մաքուր կուսութե՟ .

փառըս տացուք նը՛։

Ն՝ Ճառա՛նկ խնկամբեր ծառա յա՛-
նուշահոտ բուրաստանէ՛ն . որ
իդնա՛ ՟ցս հո՛գւոյն վառեկաց որ՛ն
կեցա՛ր՝ և զանմահութեա՛ն պը-
տուղն ի՛ժամու ետուր մեզ՝ .
վ՟ որոյ ա՟մքն ը՛ղ.քեղ մի՛շտ մե-
ծացո՛ւցանեմք ։ Ո՛ անապական


բող

բողբոջն յամծայլին դրախտէն յ-
րովայն քո տընկեալ․ բղխե-
ցեր յարմատոյն յեսսեայ ծա-
ղիկ վայելչուչ կուսական ծընըն-
դեամբ․ վս․ Յարփոյն լուսոյ
ծագումն ի քեզ վառեաց ըղձրագ
մարմնոյն լոյս աշխարհի․ որով
դատեալ ըզ պատկերն իւրա-
կան․ զոր վերըստին նորոգեաց
յառաջին կերպարանն․ վս որոյ
բարեխօսեա նորոգել զմեզ ի
հնութենէ մեղաց։
Յաղթօղ և զնոր օրհնուին միշտ
ի բարձունս երգեսցուք․ թա-
գաւորին քի հաւատացեալ
ժողովուրդք։ Որ եկն ի լուսա-
ւորել զընտրեալս իւր զեկեղեցի․
և պըսակեաց սուրբ խաչիւն․
նըմա ըզ փառս երգեսցուք։
Այսօր և մեք տօնեսցուք զնա-


ւա

ւա՛ կատարս ո՛է խաչին · և փր՛
րկո՛ղին մատո՛ւցուք փառք՝ և՛
պատիւ յա՛ւիտեանս.

Ալէլ՛ ալէլ՛. Օրհնեցէ՛ք զնա ՚ի բանս քաղցր · գովեցէ՛ք զնա ՚ի բարբառ լսելիս. Օրհնեցէ՛ք զած ՚ի սրբութն նր · օրհնեցէք զնա ՚ի հաստատութն զօրութն նր.

## Ընթերցուած ՚ի Թուոց.

Եւ խօսեցաւ տր ընդ մովսէսի և ասէ. խօսեա՛ց դու ընդ որդւոյն իէլի · և առցես ՚ի նոցանէ գաւազանս ըստ տանց նահապետացն իւրեանց ամ իշխանաց իւրեանց ըստ տանց ազգաց իւրեանց երկոտասան գաւազան՝ ըստ իւրաքանչիւր անուան · և գրեսցես իւր գաւազանին իւրոյ. և դիցես գաւազան մի ըստ ցեղին իսէլի զոր ՚ի տանց նահպտաց իւրեանց տայցեն. և դիցես զնս ՚ի խորանն վկայութեան · որովք երևեցայց անդ

անդ քեզ։ Եւ եղիցի մարդոյ զոր
ընտրեցից, գաւազանն իւր ծաղ
կեսցի. և բարձից զտրտունջ նց̃
զձէնջ։ Եւ խօսեցաւ մովսէս ընդ
որդւոցն իէ̃լի. և ետուն նմա ամ
իշխանքն նոցա զգաւազանս իւր
եանց։ Գաւազան միոյ իշխանի
ըստ տանց նահապետաց իւրեանց
երկոտասան գաւազան. և գաւա
զանն ահարովնի ՚ի մէջ գաւազա
նաց նց̃։ Եւ եդ մովսէս զգաւա
զանն առաջի տն̃ ՚ի խորանին վը
կայութ̃ե. և եղև ՚ի վաղիւն անդր.
և մտին մովսէս և ահարօն ՚ի խո
րանն վկայութ̃ե։ Եւ ահա դալա
րացաւ գաւազանն ահարօնի ՚ի
տանն ղևեայ և արձակեաց շառա
ւիղ. և ծաղկեաց ծաղիկ. և երև
եցոյց ընկոյզ։ Եւ եհան մովսէս
զգաւազանսն յերեսաց տն̃ առ
ամենայն որդիսն իսրայէլի և
տեսին. և էառ իւրաքանչ
իւրոք զգաւազանն
իւր։



Եւ

### Ընթերցուած Յեսայեայ Մ՟ր·

Եւ բղխեսցէ գաւազան յարմատոյն յեսսեայ. եւ ելցէ ծաղիկ յարմատոյ անտի. եւ հանգիցէ ՚ի վ՟ր ն՟ր հոգի Ա՟յ. հոգի իմաստութեան եւ հանճարոյ. հոգի խորհրդոյ եւ զօրութեան. հոգի գիտութեան եւ ա՟ծպաշտութեան. եւ լցցէ զնա հոգի երկիւղի Ա՟յ. Ո՛չ ՚ի կարծ դատեսցէ եւ ոչ ըստ խօսից յանդիմանեսցէ. այլ արասցէ իրաւունս անանկաց եւ յանդիմանեսցէ զխորհուրդս երկրի. եւ հարցէ զերկիր բանիւ բերանոյ իւրոյ. եւ հոգւով շըրթանց իւրոց սատակեսցէ զամբարիշտս. եւ եղիցի արդարութեամբ ածեալ ընդ մէջ իւր. եւ ճշմարտութ՟բ պատեալ զկողս իւր։

### Ընթերցուած ՚ի Գործոց առաքելոց·

Եբաց պետրոս զբերան իւր եւ ասէ, ճշմարտութ՟բ հասեալ եմ զի ոչ գոյ ակնառութիւն առ ՚ի յԱ՟յ. այլ ՚ի յա՟մ ազգս որ երկնչին ՚ի



նմա

նմանէ և գործեն զարդարութի,
ընդունելի է նմա ։ Զ բանն ա-
ռաքեաց որդւոցն Իէլի աւետա-
րանել զխաղաղութիւն ՚ի ձեռն
յի քի ։ սա է տր ամի ։ Դուք
ինքնին գիտէք զբանն որ եղև
ընդ ամ հրէաստան ։ սկսեալ ՚ի
գալիլեէ յետ մկրտութեն զոր քա-
րոզեաց յովհաննէս զյս որ ՚ի նա-
զարեթէ զոր էօծ ած հոգւով
սբվ և զօրութը ։ որ շրջեցաւ բա-
րի առնել և բժշկել զամ ըմբռ-
նեալսն ՚ի սատանայէ ։ զի ած էր
ընդ նմա ։ և մեք վկայեմք ամի
զոր արար ՚ի հրէաստանի և յէմ ։
զորև սպանին կախեալ զփայտէ ։
Զ նա յարոյց ած յերրորդ ա-
ւուր ։ և ետ նմա յայտնի լինել ։
ոչ ամ ժողովրդեանն , այլ մեզ
վկայիցս յառաջագոյն ընտրելոցս
յայ ։ որքև կերաք և արբաք ընդ
նմա յետ յարութեն նր ՚ի մեռելոց ։
Եւ պատուիրեաց մեզ քարոզել
ժողովրդեանն և վկայուի դնել

 թէ

թէ նա է սահմանեալն յայ դա-
տաւոր կենդանեաց և մեռելոց.
Սմա ամ մարգարէք վկայեն թո-
ղութիւն մեղաց առնուլ անուամբ
նորա ամ հաւատացելոց 'ի նա.
Եւ մինչդեռ խօսէր պետրոս զբ-
բանս զայս, հանգեաւ հոգին սբ
ի վր ամյն որք լսէին զբանն
Զարմացան որք 'ի թլփատութէ
անտի հաւատացելքն եկեալ էին
ընդ պետրոսի, զի և 'ի հեթանոսս
պարգևք հոգւոյն սբյ զեղանէին.
քանզի լսէին 'ի նոցանէ խօսել
լեզուս և մեծացուցանել զած.
Յայնժամ պատասխանի ետ պետ-
րոս և ասէ. միթէ զջուր ոք ար-
գելուլ կարէ՞ առ 'ի չմկրտելոյ զս-
սոսա. որք և զհոգին սբ ընկալան
որպ և մեք. Եւ հրամայեաց նոցա
մկրտել յանուն տն յի քի.
Յայնժամ աղաչեցին զնա լինել
անդ աւուրս ինչ.

Պօղոսի առաքելոյն 'ի կորնթացւոց.

Եւ զորս եդած յեկեղեցւոջ

 այս

այս են․ նախ զառաքեալս․ երկրորդ
զմարգարէս․ երրորդ զվարդպտս
ապա զօրութիւնս․ ապա շնորհս
բժշկութեն․ օգնութիւն․ վարիչս․
ազգս լեզուաց․ թարգմանութիւն
լեզուաց․ Թէպէտ և բաժինք
պաշտամանց են, այլ տր նոյն է։
Թէպէտ և բաժինք յաջողուեց
են, այլ ած նոյն է որ յաջողէ
զամ յամի։ Բայց իւրաքանչիւր
ումեք տուեալ է յայտնութի հո
գւոյն առ իւրաքանչիւր օգուտ։
Ումեմն ՚ի հոգւոյն տուեալ է բան
իմաստութե․ այլումն բան գիտու
թեան ըստ նմին հոգւոյ․ միւսումն
հաւատք նովին հոգւով․ այլում
շնորհք բժշկութեց․ այլում մար
գարէութի․ այլում ընտրութիւն
հոգւոյ․ այլում թարգմանութիք
լեզուաց․ Այլ զայս ամ յաջողէ
մի և նոյն հոգի․ և բաժանէ իւր
աքանչիւր ըստ կամի․

Ալէլ՛՛ ալէ՛՛։ Օրհնեցէ՛ք զած ՚ի
սրբութե նր․ օրհնեցէ՛ք զնա ՚ի հաս՛՛

ՄԷ Աւետարան ըստ Ղուկասու.

Եւ կոչեցեալ զերկոտասան առաքեալսն, ետ նց՟ա զօրութիւն և իշխանութի՟ն ՚ի վր՟ ամ՟ դիւաց և բժշկել զամ՟ հիւանդութիւնս. Եւ առաքեաց զն՟ս քարոզել զարքայութի՟ն այ՟ և բժշկել զախտաժետս. Եւ ասէ ցնոսա, մի՛ ինչ բառնայք ՚ի ճանապարհի. մի՛ գաւազան. մի՛ մախաղ և մի՛ հաց. և մի՛ արծաթ. և մի՛ երկուս հանդերձս ունիցիք. Եւ յոր տուն մտանիցէք, անդ ագջիք և անտի գնայցէք. Եւ որք ոչ ընդունիցին զձեզ, յորժամ ելանիցէք ՚ի քաղաքէն յայնմանէ, զփոշի ոտից ձերոց թօթափեսջիք ՚ի վկայութի՟ նց՟. Եւ ելեալ շրջէին ընդ քաղաքս և ընդ գեօղս. աւետարանէին և բժշկէին ընդ ամ՟ տեղիս.

Աւագ ուրբաթ[illegible].

Եւս խաղաղու". Օրհնեա՛ տր՟.

Եւ վերջ[illegible]

շէ———ղանն և տայ 'ի յետս հրաժեշտս
առնլով։

Ս՛ա և զերրորդ աստիճան վարժապետութես կարողութ Հոգւոյն Սբյ· կոչել յապաշխարութի զմղուցեալսն որք 'ի կամաց և որք անգիտութեամբ անկեալ իցեն 'ի հաղբս չարին· դարձուցանել զնո յմ չարեաց · որպէս զդարձումն անառակ որդոյն · թողուլ զմ մեղս նց· և տալով զպատմուճանն առաջին։ Նմ դու յերևիլ հօտա պետին՝ ընկալցիս զանթառամ փառաց պսակն։

Սբ խոշ Ման։ Պ-տրանէն''։
Հայր Գր։

Կատարեցաւ Երրդ Աստիճանն Վարդապետութե։



Նմ

Յաւուր տօնի Զօրավարաց Թէոդորոսացն.
Սարգսեանն ՚ի Հայրապետացն և այլն
Շարական գ. ձ.

Երանելի՛ էք ա՛ռաքեա՛լք հրա՛ւիրեալք ի սկըզբանէ և ընտրեալք յորովայնէ· պսակաւորք և բարեկամք և վկայք ա՛ծ որդւոյն բարեխօսեցէ՛ք առ տէր վ՛ս անձա՛նց մերոց· Ո՛րք առէք իշխա՛նութի՛ ի վերայ ազգի՛ մարդկան՝ կապել և արձակե՛լ ի յերկինս և ի յերկրի· արձակեցէ՛ք զմեզ ի կապանաց մեղաց մերոց·

Խաչա՛կցեալք ընդ քի՛ և ընդ նմին՝ թագա՛ւորեալք· ի միասին գա՛մ գալըստեան նորա՛ նըստելոց էք դատաւորք· թողութի՛ն շնո՛րհեցէ՛ք մեզ մեղա՛ւորոցս։

Ո՜ մարգարէ բարձրելոյն և ըղ
ձագաւորին զինաւոր. որ և՛ ի
ծընունդըս կանանց մեծ կոչե
ցար. յօրինուածս հոգևորըս պա
ուէսցուք. Ո՜ միածնին կարա
պետ Տեառն բանին ըղձայն. որ
յորովայնէ զքո յառաջ գուշա
կեաց. յօր. Ո՜ յանապատի բը
նակիչ և շընորհայըն քարոզող.
որ և՛ ի դըժոխս ըղփըրկութեան
քարոզեցաց. յօրինութիս.

Այսօր զուարճացեալ տօնեն երկ
նայինք ընդ մարդկան. պա
րակից եղեալ փըրկութեան մե
րոյ. քանզի յայտնեցաւ մեզ հո
գևոր գանձըն լուսոյ արևել
եան արեգականըն ճառագայթ
ըն ներսէս. բարեխօսութեամբ
սորա տէմ ըր պարգևեա ըղ
խաղաղութի հայաստանեայց աշ

խորհի։ Այսօր վերըստին նո-
րոգեցաւ քահանայապետին գա-
ւազանն՝ գեղեցկապէս ծաղկեալ
պայծառութեամբ․ քանզի շնորհե-
ցաւ հովուըն քաջ բանաւոր
հօտի յարմարոյ լուսաւորչին՝
բողբոջ բուսեալ ի մէջըն նշխարաց․
բարեխօսութեամբ սորա ամ̃ր
հաստատեա զխաղաղութիւն հայրա-
պետական աթոռոյս։ Այսօր
մեծապէս փառօք ցընծայ թագա-
ւորական գաւազանն ընդ հով-
ուեն սիրոյ իւր հայրապետին՝․
քանզի էհաս ի յոգնութիւն օրինա
դըրօշըն թագաւորաց․ մարտա-
կից զինուորակին դասուն ի մէջըն
նշխարաց․ բարեխօսութեամբ սորա
ամ̃ր բարձրացո զխաղաղո-
թիւն թագաւորական աթոռոյ
Ըմանեալ լ մօսէսի մ̃ր վա՞ր


ռ

դատապետ բերելոյ ... Լըղ գիր
օրինաց ի հայաստան աշխարհս·
որոմս ... լուսաւորեցին անձդ
որդւո՞ց Թորգոմայ· Քանզի
նա արժանաւորեցաւ կալ ի սե
նեակն փառաբանութեանն·
և ընկալեալ ... պատգամըս կեն
դանի ս տայր խորայիլեան բա
նակին· որոմս ... լուսաւորե
ցան ա ծզդ որդւո՞ց յակօբայ·
Նոր աղաչեմք ըղ.քոյին հեզու
թիդ տէր վարդապետ· բարե
խօսեա ... առ հայր ի յերկինս
վասըն քո ... յ տօնողացս· քանզի
քեամ ... լուսաւորեցան ման
կունք ... եկեղեցւոյ·
Ծայրապետ սուրբ և անբիծ և
ընտրեալ յորովայնէ· սքանչելա
գործ վըկայ և պարծանք ազգի
մարդկան· առ քո բարեխօսեա


վա

լսա՛ըն մեր քո տօ՛նողացս ։ Հո՛գիւ
հոգևո՛ր բանաւոր հօտի ։ լու՛սա
ւորի՛չ տիեզերաց սիւն լուսո՛յ
կանգնեալ իմէջ եկեղեցոյ ։ ա՛ռ ։
Հաստատու՛ն հաւատոյ պըսա՛կ
եղըլուխ եկեղեցւո՛յ ։ պայծառ քա
րո՛զ տիեզերաց և պարծանք ազ
գի՛ մարդկան ։ ա՛ռ ։ Ի՛տաճարի
քում սըրբութեն երկըրպագեմք
քոյ նըշխարաց ։ փառաւո՛րեմք զօր
ըի՛շատակի՛ կատարման քոյ հան
դըստեան ։ ա՛ռ ք՛ս բա ։
Աո՛ղոքեալ մե հայրա՛պետըն հրա
ւիրմամբ հո՛գւոյն սըրբո՛յ ։ վե
րըստի՛ն հաստատեցի՛ն զառաքե
լական քարո՛զութի՛ն ի վերայ վի՛
մի՛ հաւատոյ հիմա՛ն մե եկեղե
ցւո՛յ ։ Որք զի՛նու հոգւոյն սըր
բոյ ա՛նի՛աբար պատերազմեալք ։
վանեցի՛ն զընդդի՛մա՛րտ մո՛լու՛ի

 հեր

հերձուածողացն ․ ո՞վ հովի՛ւք քա՛ջք հերքեցիք ըզ գայլսն ի՛ հօտէ գառանց․ Եւ զհաւա՛տըս սուրբ՝ երրորդութեան ընդհանուր քարոզեցիք յեկեղեցիս ուղղափառաց․ հաւատա՜լ ի՛ հայր և՛ յորդի՛ և յամենասուրբ հոգին․

Ո՛գի՛ դ ճըշմարիտ ո՛ր զանձայի՛ն ըզ հրամանսըն քո զառածըն դաւթեան լըցեր ․ արբուցանե՛լո՛վ աշակերտացն զպարարտութի՛ քո՞ ի՛ւ՛ք վերնատանն ․ ո՛ղո րմեա․ Ո՛ր աւագեցար ի՛ հօրէ կենդանարար վըտակ և՛ լոյս ճըշմարի՛տ ․ արբուցանելո՛վ նոքօք որդւո՛յ սիօնի զուղխըս փափկութեն․ ո՛ղո՛ ։ Ո՛ր կատարեցեր ըզ փափագ ցանկութե սըրտի՛ց նոցա ․ որք ըսպասեալ մի՛նայի՛ն մեծի՛ գալըստեանքդ ի՛ սուրբ վերնատանն ․ ո՛ղո՛ ։ 120

Ի ծննդեանն ի մէջ կուսէն ընկալցուք ի սիրտս մեր հաւատով. որ երբեմն ի գիրկ սըն Սիմէօն. Օրհնեսցուք զաւաքեալն ի հօրէ՝ որ ի խանձարուրս պատեցաւ վասըն մեր. և փրկեաց զմեզ յանիծիցն ադամայ. Ուրախ լեր անապատ ծարաւի և ծաղկեա հաւատով երանութեամբ յայսըմ հետէ. քանզի քրիստոս յոյս յայտնեցաւ հեթանոսաց.

Այսօր ուրախացեալ ցընծան երկընից բազմութիւնքն. ի նաւակատիս սուրբ եկեղեցւոյ. քանզի շնորհեցաւ մեզ քահանայապետ յաւիտենից. ի լուսաւորել զկաթողիկէ սուրբ զեկեղեցի. փառօք սուրբ գալըստեան քո տէր. Այսօր սիոն լուսոյ հովանի է-



ղև

զնէ ընծայ իբրաձանց․ քանզի թագաւորն երկնաւոր եկաւորի ի մէջ եկեղեցի․ և զօրութք հրեշտակաց ծառայեալ տանէին ընդ մարդկան․ փառաւորք․

Այսօր քահանայապետն ձեռ̃ շնորհօ տն ծայրին օրինօքն քըն պատուել․ կանգնէ ընդ քառանկիւն սեղանոյն խաչին․ արժանապէս պատարագել բաշխէ զմարմին և զարիւնն տն․ մաքրապէս մեր ձեցարուք փրկեալք նորա ժողովուրդք․ և հայցեցէք ի քէն զի շնորհեսցէ ընդ սմա մեղաց ընդ երկայն աւուրս․

Ալէլու ալէ․ Առաքես զհոգի քո և ստանաս զնս․ և նորոգես զերեսս երկրի․ Օրհնեա անձն իմ զտր․ տր ած իմ մեծ եղեր յոյժ․



Ի՜

## Ընթերցուած 'ի Չորրորդ Թագաւո-րութեանց.

Ա՜ երբ ընդ անցանելն նոցա՝ ասէ եղիա ցեղիսէէ, խնդրեա՛ զինչ արարից քեզ մինչեւ վերա-ցեալ իցեմ 'ի քէն։ Ա՜ ասէ եղի-սէ. եղիցի կրկին ոգի քո 'ի վ̃ր իմ։ Ա՜ ասէ եղիա. դժուարին խնդ-րեցեր. բայց եթէ տեսցես զիս յամբառնալն իմում 'ի քէն, եղի-ցի այնպէս. ապա թէ ոչ, մի՛ եղի-ցի. Ա՜ երբ մինչդեռ գնային նոքա եւ խօսէին, եւ ահա՛ կառք հրեղէնք եւ երիվարք հրեղէնք անջրպետեցին 'ի մէջ երկոցունցն եւ վերացաւ շարժմամբ եղիա յեր-կինս. Ա՜ եղիսէէ հայէր եւ ա-ղաղակէր, հա՛յր հա՛յր կառքդ իէ̃լի եւ հեծեալդ նր̃. եւ այլ ո՛չ ետես զնա. Ա՜ բուռն եհար զհան-դերձից իւրոց եւ պատառեաց յեր-կուս ծուէնս. եւ էառ եղիսէէ զմաշկեակն եղիայի զոր ընկեց 'ի վերայ նր̃. եւ դարձաւ եղիսէէ



եւ

և եկն առ եզրն յորդանանու. և
եհար զջուրն և ասէ. ուր ես տ՜ր
ա՜ծ եղիայի ափփով. և եհար ըզ
ջուրն և բաժանեցան յայսկոյս և
յայնկոյս. և էանց եղիսէէ.

Իբրև տեսին որդիքն մարգարէիցն
որ յերիքովն էին հանդիպոյն և ա_
սեն, հանգեաւ հոգին եղիայի
ի վ՜ր եղիսէի. և եկին ընդառաջ
նր՜ և երկիրպագին նմա ՚ի վերայ
երկրի.

## Ընթերցուած Յեսայեայ մար՞.

Եւ լուայ զբարբառ տն՜ որ ա_
սէր, զո՞ առաքեցից և կամ ո՞ եր
թիցէ առ այն ժողովուրդ. Եւ
ասեմ, ահաւասիկ եմ ես. առա_
քեա զիս. և ասէ՝ երթ և ասա
ցժողովուրդն ցայն, լսելով լուի
ջիք և մի՛ իմասջիք. տեսանելով
տեսջիք և մի՛ տեսջիք. զի թանձ_
րացաւ սիրտ ժողովրդեանդ այ_
դորիկ. և ականջօք իւրեանց ծա
նունս լուան և զաչս իւրեանց
կափուցին. զի մի՛ երբէք տեսա

տեսցեն աչօք և լուիցեն ականջօք
և իմասցին սրտիւք. և դարձցին
և բժշկեցից զնս.

Ընթերցուած 'ի Մաղաքիայ մարգ.

Այսպէս ասէ տր, ուխտ իմ որ
էր ընդ նմա կենաց և խաղա
ղութե. ես ետու նմա երկիւղ եր
կնչել յինէն և յերեսաց ան_
ուան իմոյ խորշել. Օրէնք ճշշ
մարտութե էին 'ի բերան նորա. և
անօրէնութի ինչ ոչ գտաւ 'ի շրթ
թունս նր. Խաղաղութե և ուղ
ղութե գնաց ընդ իս. և զբազումս
դարձոյց յանօրէնութենէ.
Զի շրթունք քահանային զգու
շասցին գիտութե. և օրէնս խնդ
րեսցեն 'ի նմանէ. զի հրեշտակ տն
ամենակալ է.

Ընթերցուած 'ի Գործոց առաքելոց.

Որդ' պարտ է յարանցս յայսցա_
նէ եկելոցս ընդ մեզ յամժա
մանակի. յորում եմուտ և ել
առ մեզ տր յս. սկսեալ 'ի մկրտ

տութէն յովհաննու մինչև ցօրն
յորում վերացաւ ՚ի մէնջ. վկայ
յարութեան նր ընդ մեզ լինիլ միում
՚ի սոցանէ. Եւ կացուցին եր-
կուս. զյօսէփ որում բարսաբայն
կոչէին որ անուանեցաւն յուս-
տոս՝ և զմատաթիա. Եւ կացեալ
յաղօթս ասեն. դու տր սրտա-
գէտ ամի. յայտնեա զմի ոք զոր
ընտրեցեր ՚ի սոցանէ երկոցունց.
առնուլ զվիճակ պաշտամանս այ-
սորիկ և զառաքելութե յորմէ ան-
կաւ յուդաս գնալ ՚ի տեղի իւր.
Եւ ետուն վիճակս նց. և ել վի-
ճակն մատաթիայ և համարեցաւ
ընդ մետասան առաքելսն.

## Յօհաննու Առաքելոյն ՚ի թղթոյն.

Սիրելիք մի՛ ամ հոգւոյ հաւա-
տայք. այլ ընտրեցէ՛ք զհոգիսն
եթէ յայ իցեն. զի բազում մո-
լորեցուցիչք ելեալ են յաշխարհ.
Եւ մեք յայսոսիկ ճանաչեմք ըզ
հոգին այ. ամենայն որ խոստովանի



գայ

զյս քս մարմնով եկեալ , յայ է
նա ․ և ամն որ ոչ խոստովանի զյս
քս մարմնով եկեալ, նա չէ յայ․
Եւ այս նեռինն է զորմէ լուայք
եթէ գալոց է և արդէն իսկ յաշ-
խարհի է ․ Դուք յայ էք որ-
դեակք և յաղթեցէ՛ք նոցա ․ զի
մեծ է որ ՚ի ձեզդ է քան զայն որ
յաշխարհին է․ Նոքա յաշխարհէ
են ․ վն այնորիկ յաշխարհէ խօ-
սին և աշխարհ լսէ նոցա․ Մեք
յայ եմք ․ որ զած ճանաչէ՝ լսէ
մեզ․ և որ չէ յայ՝ ոչ լսէ մեզ։
այսուիկ ճանաչեմք զհոգին ճշ-
մարտութե և զհոգին խաբէութե․

### Պօղոսի առաքելոյն ՚ի Տիմոթէոս Ա՛

Հաւատարիմ է բանս և ամն ըն-
դունելութե արժանի․ զի ՚ի սոյն
իսկ վաստակիմք և զնախատինս
յանձն առնումք․ զի յուսացեալ
եմք յած կենդանի որ է փրկիչ
ամն մարդկան․ մանաւանդ հաւա-
տացելոց․ Պատուէր տաջիր զայդ
և

և ուսուցանիջիր . զի մի ոք զքո մանկութիւդ արհամարհիցէ . այլ օրինակ լինիջիր հաւատացելոցն բանիւք և գնացիւք . սիրով հաւատով և սրբութբ մինչև գամ ես . Մ՝ինդիր ընթերցուածոց մխիթարութե վարդապետութե . մի՛ անփոյթ առներ զշնորհացդ որ ՚ի քեզ են . որ տուաւ մարգարէութեամբ ՚ի ձեռն արդարութե։ Զայդ խորհեա՛ց և՚ի դոյն կանխեսջիր. զի քո յառաջադիմութիւդ ամենցուն յայտնի լիցի. Զգո՛յշ լինիջիր անձինդ վարդապետութեան և՚ի դմին յամեսջիր. զայդ եթէ առնիցես, զանձնդ ապրեցուսցես
և զայնոսիկ որ քեզն լսիցեն։

Ալէլ՛ ալէլ՛ . Ո՛արար զհրեշտակս իւր հոգիս . և զպաշտօնեայս իւր
՚ի հուր կիզելոյ։

Սբ Աւետարանս ըստ Յօհաննու.

Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ իվը ոչխարաց։

Իսկ վարձկանն որ ոչ է հովիւ, որոյ ոչ իւր են ոչխարքն, իբրև տեսանէ զգայլն զի գայ, թողու զոչխարսն և փախչի. և գայլն յափշտակէ զնս և ցրուէ։ Քանզի վարձկան է և չէ փոյթ նմա վասն ոչխարացն։ Ես եմ հովիւն քաջ. և ճանաչեմ զիմսն և ճանաչիմ յիմոցն։ Որպէս գիտէ զիս Հայր, գիտեմ և ես զՀայր. և զանձն իմ դնեմ իվր ոչխարաց։ Նաև այլս ոչխարք են իմ որք ոչ են յայսմ գաւթէ, և զայնս ևս պարտ է ինձ ածել այսր։ Եւ ձայնի իմում լուիցեն և եղիցին մի հօտ և մի հովիւ։

Ապա առաքելոցն քարոզէ։

Ձայն խաղաղու"։ Օրհնեա՛ տր

Ձայն վարդպտն ասելով զօրհնութիւն աւետարանին և այլ ՚ի յետոյ հրաժարեսցուք ասելով։

Առ որդեակ և զերրորդ աստիճանն վարդպտութեան. և իմա թէ զինչ վերաձայնեաց քեզ մար

գարէն եւ այլխա· ձայն բարբառոյ յանապատի ասելով: Վասն որոյ պարտ է եւ քեզ նախ մեղաւորաց ողբալոց եւ անհաւատից քարոզել: Երկրորդ աներկիւղ քարոզել: Երրորդ համարձակ քարոզել առանց երեսաց եւ առանց ակնառութեն: Չորրորդ՝ պարզ եւ յըտակ քարոզել: Հինգերորդ՝ խմատութե̄ եւ գիտութե̄ քարոզել: Վեցերորդ՝ կշտամբել յանդիմանել եւ խրատել: Եօթներորդ՝ յանապատ եւ յանքոյթ տեղիս քարոզել· ա̄մ անապատացելոցն եւ աւերեցելոցն հոգւով: Եւ տ̄րն մեր յ̄ս ք̄ս լուսաւորեսցէ զաչս մտաց քոց · լուսաւոր առնել 'ի քեզ ըզլոյս գիտութե̄ եւ անմահին 'ի տնէ թէ դուք էք լոյս աշխարհի · եւ դարձել թէ ոչ գոյ 'ի քեզ մասն խաւարի · զի եւ բոլորն ամենայն լոյս եղիցի · եւ իբրեւ զարեգակն ծագեսցես յարքայութեն երկնից ընդ ա̄մ սուրբս ըստ հրամանաց



տ̄ն

տեառն մերոյ յի՟ քի՟ · ամէն։

Սէ՟ Խաչիւ · Պահպանիչ"։

Հայր մեր"։

Կատարեցաւ Չորրորդ ատենաժամն Վարդապետութե՟։

Այս սկսանի Հինգերորդ Ատենաժամն գործեալ ի նոյն տեղին · Այս ասէ Շնորհալւոյն է։

Անդադար յե՛րկինս օրհնեա՛լ
անճառ Հօրն երկնաւորի՛ զօրք
ա՛նմեղինաց · բարեխօսեցէ՛ք Ը
Ն՛շնորհացս · Քաղցրացայն եր
գով գոհաբանեցէք որդւո՛յն մի
ածնի՛ · գառն՛ք հրեշտակաց · բա
Նո՛ւրբ հո՛գւոյն հեզաճեմ բարեբա
նեցէք հոգւո՛յն ճըշմարտի՛ հզօր
հրեղինաց · բարե։ Առաքեալք
բեա՛ն ձայնիւ փառաբանեցէ՛ք
զե՛ րրորդութեա՛նն գովեսջիք
Երրորդ · բարե։ 131

Որ զլոյս անճառ շնորհաց ա̄ծային քոյ գիտութեանդ ծագեցեր յաշխարհս Հայաստանեայց. գըթած հայր երկնաւոր գթա՛ ի մեղուցեալքս։ Որ ընտրեցեր յորովայնէ զմաքրեալն հոգւով սուրբըն Ներսէս. ժառանգել զվիճակ հայրենի. հովուել արդարութեամբ և իրաւամբք։ Որ օրինօք ձր ճշմարտութեանըն զարդարեաց զեկեղեցի. կարգաւորեալ բարեպաշտութեամբ. սորին աղաչանօք խնայեա ի մեզ Քրիստոս։

Լըցեալ ա̄ծային շնորհիւ երանելի ս̄բ ձըրգնաւոր անորդ գաւիթ. և անուն քաջութեան քո ել յերկինս. յուրախութիւ հրեշտակաց. և ընդ անխաւս ամենայն ցընծութիւն

մարդկան. Սոսյար քեզ լանուն
բաշխուն յանապարհի ծընդուն
ովք տէր ըդ դաւիթ. յաղթեցեր
թըշնամւոյն խաչիւըն քո. ըն
դուցեր ուրախութե ըղ աինգելս
ամ. և աղօթիւք ամ տէր ծ եղեր
մեզ զօրավիգ. Ասուր ըղ մար
մինդ ը հոգւոյ քում փրկանս.
և խաչիւ և արեամբ գնեցեր
զարքայութի. աւեր իշխանութ
բարեխօսութեն. ամղաչեա զտէրծ
ըն փրկեսցէ ըղ մեզ ի հարա
ւային կործանմանէն.
Ապաշխարութե ամպրեցան քա
ղա քըն նինուէացւոց. ընդ նմ
ամենի մարդարէին եղեւ թողու
թիւն մեղաց. Նհաս բան առ
թագաւորն պատուէր տայր ժո
ղովրդեանն ընդ նմին
Աբերանոց մանկանց տըղայց

զուարթայն երկնից յօգնութեան
կոչէին · ի լսել ձայն։
Ս արդարոյն վառեալ ծաղիկ
ի նորատունկ բուրաստանին ·
լուսազարդեալ երևեցար ով երա-
նեալ սբ կիւրակոս · վասն
մեր բարեխօսեա քրի փրկչին
մերոյ · Աղաւնի քաղցրաբար-
բառ հեզաբանեալ ընդ տէր յի-
սուս · վաղահասու արբեալ ներ-
կեալ · անկէզ բողբոջ դեռաբու-
սիկ · վասն · Բուրունոյ վարդա-
պետին համեղ ողկոյզ արբեալ
ձմեռան · պսակեցար երկնաւ-
ոք ընդ երջանիկ մարտիրոսացն ·
վասն։ Գոռ պարծանք սբ հա-
ւատոյ՝ լուսոյ պսակ եկեղե-
ցւոյ · մայր որդւովդ բերկրեալ
այսօր ով երանեալ սբ յուղի-
տա · վասն մեր բարեխօսեցէք
քրի փրկչին մերոյ։ 

Յորժամ հերձեալ մօ՛ւտս խա՛
չանի է գա՛ ա՛մղանաւն · պա՛տա
ռեցան ա՛նդո՛րէ՛նդք · Ա՛ռաջ
նորդէ՛ր նոցա յանմե՛կնելի լո՛յս ·
Ի՛սկ փայտ խա՛չի՛ քո՛յ կե՛նսա՛
տու գաւազան զօ՛րութեա՛ն յա՛յտ
նեցա՛ւ տիեզե՛րա՛ց · Եկեր կա՛
մա՛ւ ի խա՛չ վա՛սն արա՛րածո՛ց
Արարչին · Ի՛մանալի՛ բանա՛ւո՛ր
տա՛խտա՛կ ա՛նտրամադրելի՛ տա
ռիցըն մօխաւ՛կա՛ն օրէնաց ո՛ր
զա՛ծն ա՛մցուն իսկա՛ պէս մարմ
նով ի՛դէ՛րկըս · քո բա՛րձեր մար
ի՛ամ · Ներբողական ձայնիւ եղա
նա՛կեմըք քեզ զե՛րդս օրհնութեն
ա՛մենօ՛րհնեա՛լդ ի կա՛նայս ·
Այսօ՛ր աղբե՛ւր գիտութեա՛ն
բըղխեա՛լ իմք վե՛րնատունն ·
յո՛րմէ լը՛ցան տիե՛զերք գնայի՛ր
գետո՛յն ռուզմամբ · Այսօ՛ր ի



ջեա

ջեալ ի յերկիր հօր անեղութ՛քն
ի բարձանց՝ · տալ անեղութս ադա՛
մայ դառնալ յեդեմ վերըստին։
Այսօր խնդայ նոր սիոն՝ որ
դուռվք խուռվք զոր ծնեաւ · ծծ
մամբ հոգւոյն նորոգեալ յոր-
դիս լուսոյ և տուընջեան։
Այսօր ի ձայն դոհութեն զհո՛
գի՛ն ընդ հօր և որդւոյ · հո՛
գիք ամ օրհնեցէք զերեքսըր
բեանն երգելով։ Այսօր ցըն
ծամք երկրաւորքս ընդ գալըս
տեան երկնայնոյն · և պարելով
ընդ հրեշտակս երգեմք ըղփառս
ի բարձունս։
Այսօր ցընծան երկնայինքն՝ և
պար առեալ ի բարձունս · եր
գեն զերգըս հոգեորս յաւուր
ծնընդեան սրբուհոյն։ Այսօր
վերինքըն սիոն՝ գոչէ զերգըս



սրօ

րօքէից · զմերեքպրբեանն ասե-
լով յաւ։ Այսօր աստեղք և
լուսին՝ ընդ արեւու հրաձուլե-
լով · գովեն ընդ լոյսն ի հօրէ յա-
ւուր ծննդեան լուսոյ մօրն ։
Այսօր ծերքն օրհնականք ման-
կամբք նորոյ սիօնի · երիտա-
սարդք և կուսանք խնդամն ծնըն-
դեամբ տիրուհւոյն ։ Այսօր
գունդք առաքելոցն և պարըք
նախատեսացն · յաւուր ծնըն-
դեան մօր բանին երգեն ըղ-
փառս ի բարձունս ։
Նպատուամբն կառք անքըննե-
լի խորհրդոյն ընդունարան
ով սուրբ քառաւթև · ի
սուռանաթևից յարաթռելոց սրո-
բէից անտեսաբար ամհիւ պատ-
ւեալ · քեզ երկրպագեմք
յօգնութի մեզ ժամանեա յե-
և

եւ իմ ուսա։ Ո՜ն յաղթելի նոր
շան անպարտելի զօրութեան ըն
դիմանորդն ով ած է քաւութե.
ի [illegible] յաղթութիւն ապաստան
բերցն երեւեցար. որք ի քէն ա
պիւ սարսեալ դողան եւ ահոդէն
դառնայց կործանին [illegible]ն. քեզ։
Յառաջագոյն անուանել ըղ քեզ
մարգարէն զարքայութեան աշտանակ
ոսկի եօթնաջահեան լուսով պայ
ծառացել յերկիր ով ած է քա
ւութե. եւ [illegible] ի վերայ քո սա
րածեալ անմահութ գոյին գոյա
ցեալ ի մեծ ր բանութիւն. եւ այժ
բերաշոս կաւն մաքրեաց զմեզ
անդուլ [illegible] մարդկան ն.
Քեզ երկրպագեմք.
Ո՜վ Հա՜յր. Խաւարեցան փայլ
տակուռք քո ափեղերաց. խռովե
ցաւ եւ դողաց երկիր։ Զայնի

իմ

խմով ես առ տր կարգւցի․ ձայնի
խմով առ ած, և նայեցաւ առխ։

## Ընթերցուած Ելից։

Պատասխանի ետ մովսէս և ա-
սէ․ եթէ ոչ հաւատայցեն ինձ
և ոչ լուիցեն ձայնի իմում․ քզի
ասիցեն թէ չէք երևեալ քեզ տր
Զինչ ասացից նց։ Ասէ ցնա տր․
զինչ է այդ որ ՚ի ձեռին քում է․
և նա ասէ գաւազան․ և ասէ տր
ընկեա զդա ՚ի գետին։ և ընկէց
զնա ՚ի գետին․ և եղև օձ․ և փա
խեաւ մովսէս ՚ի նմանէ։ Ասէ ա-
սէ տր ցմովսէս․ ձգեա զձեռն քո
և բուռն հար զորտանէն ։ և ձը
գեաց զձեռն իւր և բուռն եհար
զորտանէն․ և եղև գաւազան ՚ի
ձեռին նր․ զի հաւատասցեն քեզ
ասէ եթէ երևեալ է քեզ տր ած
հարցն նց․ ած աբրահամու ած
իսահակայ և ած յակոբայ։ Ասէ
մովսէս ասէ ցտր․ աղաչեմ զքեզ
տր չեմ բաւական ոչ թէ յերէկ


և

և յեռանդ. և ոչ յորժէ հեռանէ ըն-
կերաբար խօսիլ ընդ ծառայիւ քում
զի նրբաձայն և ծանրալեզու եմ
ես։ Ասէ տր ցմովսէս. ո՞վ ետ
բերան, կամ ո՞ արար զխուլն և
զհամրն, զականին և զկոյրն. ո՛չ
ապաքէն ես տր ած. և արդ երթ
և ես բացից զբերան քո և խելա-
մուտ արարից զքեզ զոր պարտ
իցէ քեզ խօսիլ։

## Ընթերցուած Յեսեփայ Մար.

Ա՛ն եղև բան տն առ իս և ասէ
մինչչև ստեղծեալ էր իմ զքեզ
յորովայնի գիտեմ զքեզ. և մինչ
չև ելեալ էիր յարգանդէ՝ սրբե-
ցի զքեզ. մարգարէ ՚ի հեթանոսս
եդի զքեզ։ Ասեմ ո՛ ես տր
տր ահաւասիկ խօսիլ իսկ ոչ գի-
տեմ զի մանուկ եմ ես։ Ասէ
ցիս տր. մի ասեր թէ մանուկ եմ
ես. զի առ ամենն առ որս առաքե-
ցից զքեզ երթիցես. և ըստ ամե-
նայն զոր միանգամ պատուիրեցից քեզ



խօ

խոստացիր, մի երկիցես յերեսաց
նց զի ընդ քեզ եմ ՚ի փրկել ըզ
քեզ ասէ տր. Եւ ձգեաց տր ըզ
ձեռն իւր առ իս և մերձեցոյց ՚ի
բերան իմ և ասէ ցիս, ահա ե
տու զբանս իմ ՚ի բերան քո. ա
հա կացուցի զքեզ այսօր ի վերայ
ազգաց և թագաւորութեց. խլել
և բրել. կորուսանել և յատակել.
շինել և տնկել. Եւ եղև բան
տն առ իս և ասէ, զի՞նչ տեսանես
երեմիա. և ասեմ, գաւազան ըն
կուզի տեսանեմ ես. և ասէ ցի.
տր. բարւոք տեսանես. զի զար
թուցեմ ՚ի բանս իմ առնել զնս.

## Ընթերցուած Յեսայեայ Ծ՟-Ը՟.

Գոչեա՛ զօրութ և մի՛ խնայեր.
բարձրացո՛ իբրև զփողոյ զբար
բառ քո. Պատմեա՛ ժողովրդեան
իմոյ զմեղս նց. և տանն յակոբայ
զանօրէնութիս նց. Զիս օրըստ
օրէ խնդրեն. և ճանաչել զճա
նապարհս իմ ցանկան. իբրև ժո

զովրդեան որոյ զարդարուն գոր
ծեալ իցէ. և զիրաւունս ա՟յ իւրոյ
ո՛չ իցէ թողեալ։

Ընթերցուած ՚ի գործոց առաքելոց.

Պատասխանի ետ անանիա, տ՟ր
լուայ ՚ի բազմաց վ՟ս առն այնո
րիկ որչափ արար չարիս ս՟րբ քոց
յե՟ղմ. և աստ ունի իշխանութի
՚ի քահանայիցն կապել զա՟մենեան
որք կարդան զանուն քո։ Ասէ
ցնա տ՟ր. երթ դու զի անօթ
ընտրութե՟ է նա ինձ. կրել զա
նուն իմ առաջի հեթանոսաց և
թագաւորաց և որդւոցն ի՟էլի։
քանզի ես իսկ ցուցից նմա որչափ
պարտ իցէ նմա չարչարիլ վ՟ս ան
ուան իմոյ։ Ա՟ւ գնաց անանիա
և եմուտ յապարանսն. և եդեալ
ի վ՟ր ն՟ր զձեռն և ասէ, սաւուղ
եղբայր ՚ի վե՛ր հայեաց. տ՟ր առա
քեաց զիս առ քեզ. յ՟ս որ երևե
ցաւ քեզ ՚ի ճանապարհին յորում
գայիր։ Ո՟չ զի տեսցես և լցցիս

 հո

հոգւոյ սբվ։ Այլ վաղվաղակի անկան յաչաց նր իբրեւ զկեղեւանք. ետես եւ յարեաւ եւ մկրտեցաւ. եւ առեալ զկերակուր զօրացաւ։ Այլ եղեւ ի դամասկոս ընդ աշակերտսն աւուրս ինչ. եւ վաղվաղակի ի ժողովուրդսն քարոզեաց զյս թէ սա է որդին այ։

Պօղոսի առաքելոյն Եփեսացւոց։

Այսուհետեւ զօրացարուք տրամբ եւ կարողութբ զօրութե նորա. եւ զգեցարուք զսպառազինութիւն այ. զի կարող լինիջիք կալ ընդդէմ հնարից սատանայի. զի ոչ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ եւ ընդ արեան, այլ ընդ իշխանութիս եւ ընդ պետութիւնս եւ ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ ը այսս չարութե որ են ի ներքոյ երկնից։ Վասն այնորիկ առէ՛ք զսպառազինութիւն այ. զի կարող լինիջիք ի դիմի հարկանել չարին յաւուրն չարութեն։ Այլ իբրեւ



զամ

զա՟մ ինչ կատարիցէք, հաստա-
տուն կացէք. զտեղի կալջիք.
պնդեալ զմէջս ձեր ճշմարտութե՟
և զգեցեալ զզրահն արդարութե՟.
և ագուցեալ զոտս պատրաստութե՟
աւետարանին խաղաղութեան.
Եւ ի վերայ ա՟մի առէք զվահանն
հաւատոյ. որով կարող լինիջիք
զա՟մ նետս մոխս չարին շիջու-
ցանել. և առէք զսաղաւարտն
փրկութե՟ և զսուսեր հոգւոյն
որ է բանն ա՟յ.

Ալէլ՛ ալէլ՛. Երևեցան փայլա-
տակունք քո տիեզերաց. ետես
և սասանեցաւ երկիր.

## ԱԷ Աւետարանն ըստ Մատթէոսի.

Եւ եկեալ յս՟ ՚ի կողմանս փիլի-
պեայ կեսարեայն, հարցանէր
զաշակերտսն և ասէր. զո՞ ոք ա-
սեն զինէն մարդիկն թէ իցէ
որդի մարդոյ. Եւ նոքա ասեն,
ոմն զյովհաննէս մկրտիչ և այլք
զեղիա. և կէսք զերեմիա կամ

զմի ոք 'ի մարգարէիցն. Ասէ ցնո̄ա· իսկ դուք զո՞ ոք ասէք զինէն թէ իցեմ։ Պատասխանի ետ սիմոն պետրոս և ասէ ցնա· դու ես քս̄ն որդի ա̄յ կենդանւոյ։

Պատասխանի ետ յս̄ և ասէ· երանի է քեզ սիմոն որդի յօնանու· զի մարմին և արիւն ոչ յայտնեաց քեզ· այլ հայրն իմ որ յերկինսն է. Եւ ես քեզ ասեմ· զի դու ես վէմ· և 'ի վր̄ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ· և դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն. Եւ տաց քեզ զփականս արքայութե̄ երկնից · և զոր միանգամ կապեսցես յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս· և զոր արձակեսցես յերկրի, եղիցի արձակեալ յերկինս։

Ապա սարկաւագն յորդորէ.

Եւ եւս խաղաղու''. Օրհնեալ տր̄.

Եւ վարդապետն զայս օրհնութիւնն՝ առնու զգաւազանն և տայ 'ի ձեռն հրա- [illegible]

Ու զհինգերորդ աստիճան վարդապետութեանս. և լուր նոյն որբաբան մարգարէին կրկնաբանութեանն թէ՝ պատրաստ արարէք զճանապարհս տն և ուղիղ արարէք զշաւիղս այ մերոյ:

Վասն որոյ և դու յօժար կամօք պատրաստեա՛ զճանապարհս տն օրինօք և հաւատովք 'ի հոգի և 'ի մարմին հաւատացելոց. Ըստ աշխատութե՛ և վաստակոց քոց՝ արժանի լիցիս ժառանգել զխոստացեալ տեղին. թէ ուր եսն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի. 'ի նոյն սէր վառելով զմիտս քո յամենայն ժամ ամէն,

Սէ խոյինւ, Պ-հոգանին,
Հոյր Դէ.

Կատարեցաւ հինգերորդ աստիճանն Վարդպետութե.

Այս աղօթս Սրբոյ Լուսաւորչին
դարձեալ ի նոյն տեղին. Այս ևս
Շնորհալւոյն է։

Ո՛վ երջանիկ տէ՛ր մե՛ր Գրիգո՛ր
սրբութեանցն պաշտօնեայ.
Եւ առաջնորդ բանաւոր հօտի։
Զքեզ ունիմք բարեխօս առ
Յիսուս Միածինն. Եւ աղաչօղ
լե՛ր քո ուխտաւորացս Կանխեա՛
խնդրեա՛ ընդ թողութիւն յան-
ցանաց՝ ի քէ՛ն աշակերտելոցս։
Առաջնորդ հաւատոյ եւ լուսա-
ւորիչ անձանց մերոց տէ՛ր մե՛ր
Գրիգոր. Եկա՛յք հաւատացեալք
ի ձեռն որ հանգուցեալ տէ՛ր յ գո-
հութի։ Մեծ խոստովանողըն
քի եւ ընդ չարչարանացն յանձն ա-
ռօղ վասըն մեր տէ՛ր մե՛ր Գրի-
գոր. Եկա՛յք լուսաւորեալք ի ձեռն։
Քա

Քահանայապետ տէր և պաշտօն
աստուածային օրինաց տէր մեր գրի
գոր․ եկայք աշակերտեալք ընդ
նմա երգեսցուք փառք ի բար
ձունս աստուծոյ։

Որ լուսով աստուածային բանիւն զա
ղարեցեր զեկեղեցի․ և զխա
ւարն անգիտութեան հալածեցեր
յոգւոց մարդկան․ ով տէր մեր
գրիգոր․ բարեխօս լեր վասն
մեր առ միածին բանն հօր։

Որ զհամագոյ բնութիւն միա
նական երրորդութեանն․ յայտ
նեցեր եկեղեցւոյ խոստովանել
միութիւն․ ով տէր։ Որ զփրկա
կան տնօրէնութիւն մարդացելոյն
Տեառըն մեր․ ուսուցեր մեզ յեր
կուց նոր խորհրդովն ընդունե
լին․ ով տէր մեր գրի։

Ով երանելի և բարեպաշտ թէ



ր

ուղղո՛ս մեծ Թագաւո՛ր . բարե՛-
խօ՛ս լեր վասն մեր առ Թա՛գա-
ւո՛րն երկնաւոր՝ Թո՛ղու՛լ մեզ
ը՛զ մեղս մե՛ր . Ո՛վ երկրպա-
գո՛ղդ ես քէ և՛ հրեշտա՛կըր ու՛ հա-
ւատո՛յ . բարեխօ՛ս։ Ո՛վ Թագա-
ւորա՛ց ես ի յերկիր պա՛րծանք և՛
ի յերկի՛նս պսակեա՛լ . բա.
Պա՛րծանք եկեղեցւոյ և ուրա-
խութի՛ հրեշտակաց . ո՛վ ո՛ւ
հա՛յր անոօն . զա՛ղաչա՛նս մե՛ր հա-
նապա՛զ մատո՛ ու Երրորդութե՛ն .
Ո՛ր ի մարմնի՛ կաւո՛ւցեալ և զան-
մարմնո՛յն բերելո՛ւլ ի՛քեզ վարս .
ո՛վ ու՝ Քանժա՛ կ հոգևորական
ը՛ցեալ ամծային ուրախութե՛ . ո՛վ
Սքա՛նչելի հո՛ւր ամծո՛ւթե քո՛յ
որ տարածեցա՛ւ առ հասարա՛կ
ը՛նդ տիեզերս և՛ հրրդեհեա՛լ բո-
ցակի՛զեաց ըղ պատրանս նախա-

տեղծին՝ . զի՛ զամենեսին վերա
կոչեաց իմաստութեան յանմահու
թիւն։ Ծայրագոյն անմահութե՛
ճաշակեցի՛ն մեք առաքելովքն՝ . և
լցի՛ն ըզ տիեզերս աւետեօք մե
յարութեն . զի՛ ընդ նոսի՛ն վայ
ելեսցուք զանվախճան ուրախու
թի՛ւնս։ Որ ըզ հուրն ա̃ըծ յո
րովայնի՛ քում ընկալար . և ծը
նար անճառա՛պս զկենսագործօղն
ամենեցուն՝ . բարեխօս ըզքեզ ու
նիմք՝ որ երանեալդ ես ի կանայս։
Նո՛յն և նըման հօր և որդւոյ՝ հո
գի՛դ անեղ և համագոյ՝ . բը՛ղ
խումըն հօ՛ր անքըննաբար՝ առօղ
յորդւոյ անճառաբար՝ . ի վե՛ր
նատունն այսօր ի՛ջեր՝ զհոգիդ
շնորհա՛ց քոց արբուցեր՝ . ա՛րբո
և մեզ ողորմութ̃՝ ի բաժակեդ ի
մաստութե՛։ Ի՛ց ստեղծօղ ա

 րա

բարձրոց՝ որ շո՛րջէի՛ր ի՛մ ջրոց·
նո՛յն և իջո՛ւրան ստա՛ղա՛նին՝ ի
շնո՛րհել մեզ քո՛ւմ էակ յին՝ ·
գր՛գուես սիրով աղաւնա՛կերպ՝
զմարդիկ ծնանի՛ս ա͞ծակերպ՝ ·
ա՛րքո· Թա՛գուն վերնոցն իմա
նա՛լեաց՝ և ըստորի՛ն այսըր զգա
լեաց՝ · ո՛ր մարգ՛րէ՛ս տաս ի՛ հո՛վ
ուաց՝ և առաքեալս ի՛րձկնորսաց՝ ·
աւետաւո՛ր ը՛զ մաքսաւորս՝ քա
րոզ բանի՝ քո՛ւմ զհալածողս՝ ·
ա՛րքո և մեզ ողո՛ր·

Լո՛յսդ որ ի հօրէ՛ առաքեցա՛ր՝
յո՛րժամ իջէր ի՛յերկնից և՛մարմ
նացար ի սո՛ւրբ կուսէն · դո՛ւ
ե՛ս գառն ա͞յ և որդի՛ հօր·

Ա՛յսօր յայտի՛ն ընծա՛յեցար փր՛
կի՛չ և՛ իմոգուցն երկրպա՛գե
ցար · և՛ հովուացըն տեսեալ ամե
ին՝ · դո՛ւ ես ։ Ա՛նմահութի՛ ա

 գա

ղաւնւոյ տեսեալ զհոգին սբ յով
հաննէսն՝ · անդադակէր մտելով ·
սա է գառն այ և որդի հօր ·
Անապական սուրբ ըզխաչն օրհ
նեսցուք · որ եղև առաջնորդ
ուղղակին և յօրինեայց մեզ ճա
նապարհ · որ ձևացոյց մեզ
սովոր մտանել ընդ դուռն ա
նեղաշէն դրախտին այ ·
Բանալի արքայութեն որ ուղ հո
գածին մարդոյն · ուստի յառա
ջին ճաշակմանէն արտաքս ան
կեալ ի յաւէժ կենդանութեա
նն · որ ձևաւ Կաւազանա
ձև երևեցաւ եգիպտական ազգին ·
ցուցանելով ըզ զօրութի սրբոյ
խաչին · յաղթ շուակելով ըզ դա
ւազանսըն դիւթա կա ն ·
որ ձևաւ Դրոշմ ըզդայութեն օ
ըննակեալ ի վր սեմոց դրանց


նց

նոցա. աներկիւղ պահելով զ
ժողովուրդն յանդրանկածացն սա-
տակմանէ Քն. որ Սրբեալ
աղեքսանդրեան ակն պատուա-
կան ի ձեռն խաչին հերձանելով զ
ծովն կարմիր. առաջնորդելով
ժողովրդեանն սեամբ ամպոյ
լուսոյն անմեկնելի Բանիւ. որ։

Ալէլու՝ ալէլ՝։

Ողորմութ տն լի եղև երկիր. և
բանիւ տն երկինք հաստատեցան
և հոգւով բերանոյ նր՝ ամ զօրու
թիք նց։ Ցնծացէ՛ք արդարք ՚ի
տր. ուղղոց վայելէ օրհնութի.
խոստովան եղերուք տն օրհնութ
տասնաղեան սաղմոսարանաւ սաղ
մոս ասացէք նմա։

Ընթերցուած Երկրորդ Օրինաց։

Եւ պատուիրեաց մովսէս յեսու-
ոյ որդւոյ նաւեայ և ասէ.
քաջ լեր և զօրացիր. զի դու տա



նե

նելոց ես զորդիսն իմ՝ յերկիրն
զոր խոստացաւ տալ նոցա տր. և
նա եղիցի ընդ քեզ: Եւ յեսու
որդի Նաւեայ լցաւ հոգւով ի-
մաստութե. զի եդ մովսէս զձեռն
իւր 'ի վր նր. և հնազանդեցան
նմա որդիքն իսլի. և արարին
որպ պատուիրեաց տծ մովսէսի:
Եւ յետ վախճանելոյն մովսէսի
ծառային տն, խօսեցաւ տր ընդ
յեսուայ որդւոյ Նաւեայ պաշտօ
նէին մովսէսի և ասէ. մովսէս ծա
ռայ իմ վախճանեցաւ. արդ յա-
րուցեալ անցցես ընդ յորդանան
դու և ամ ժողովուրդ քո յեր
կիրն զոր ես տաց որդւոցն իսլի:

### Ընթերցուած Յեզեկիէլէ մար":

Այսպէս ասէ կամարար տր. և
դու որդի մարդոյ դէտ կացուցի
զքեզ տանդ իսլի. լուիցես բա-
նից բերանոյ իմոյ և զգուշացուս
ջիր զնս իբրև յինէն: Յասելն
ինձ ցամբարշտն թէ մահու մե-


ռա

ռանիցիս. և դու ոչ զգուշացու-
ցանիցես զամբարիշտն՝ դառնալ
՚ի ճանապարհէ իւրմէ չարէ. անօ-
րէնն յանօրէնութեն իւրում մեռցի
և զարիւն նր ՚ի ձեռաց քոց խնդ-
րեցից: Ապա եթէ դու յառաջա-
գոյն զգուշացուցանիցես ամբա-
րշտին զճանապարհս իւր դառ-
նալ ՚ի նմանէ, և նա ոչ դարձցի
՚ի ճանապարհէ իւրմէ, ինքնին
յամբարշտութեն իւրում մեռցի.
և դու զանձն քո ապրեցուսցես
ասէ ադոնիա տր:

Ընթերցուած ՚ի Գործոց Առաքելոց:

Եւ գնացեալ անտի եմուտ ՚ի
տուն ուրումն որոյ անունն էր
Տիտոս յուստոս պաշտօնեայ այ.
որոյ ապարանքն էին մերձ ՚ի ժո
ղովետղն: Կրիսպոս ժողովրդա-
պետ հաւատաց ՚ի տր ամ տամբ
իւրով. և բազմաց կորնթացւոց
լուեալ հաւատացին և մկրտեցին
Եւ ասէ տր ՚ի գիշերին տեսլեամբ

ցպօղոս, մի՛ երկնչիր · այլ խօսեա՛ց
եւ մի՛ լռեր · քանզի ես ընդ քեզ
եմ· եւ ոչ ո՛ք ընդդէմ դարձցի քո
՚ի չարչարել զքեզ: Քանզի ժո
ղովուրդ բազում է իմ ՚ի քաղա
քիս յայսմիկ: Եւ նստաւ անդ
տարի մի եւ ամիսս վեց ուսուցա-
նել նց̃ զբանն ա̃յ:

### Յակոբու Առաքելոյն ՚ի կաթուղ":

Եթէ ոք կամիցի կրօնաւոր լինել
եւ ո՛չ սանձահարեսցէ զլեզու
իւր, այլ զբաղեցուցանէ զսիրտն
իւր, այնպիսոյն վայրապար է կրօ
նաւորութի̃: Կրօնաւորութի̃ ս̃բ
եւ անարատ առ՚ի յա̃յ հօրէ այս է·
այցելու լինել որբոց եւ այրեաց ՚ի
նեղուե̃ իւրեանց · անարատ պա
հել զանձն յաշխարհէ:

### Պօղոսի առաքելոյն ՚ի կողոսացւոց":

Եւ արդ՝ ուրախ եմ ՚ի չարչա-
րանս իմ վս̃ ձեր· եւ լնում զպա
կասութի̃ նեղուե̃ցն քի̃ ՚ի մարմնի
իմում վս̃ մարմնոյ նր̃ որ է եկե-

 ղե

զծկի։ Որդ եղէ ես պօղոս պաշ
տօնեայ ըստ տնտեսութեանն այ̅
որ տուեալ է ինձ կատարել զբանն
այ̅ • զխորհուրդն որ ծածկեալն
էր յաւիտենից և յազգաց • որ
այժմ յայտնեցաւ սրբոց իւրոց։
Որոց կամեցաւ ած̅ ցուցանել
թէ Զինչ է մեծութի̅ փառաց խոր
հրդոյ նր̅ ՚ի հեթանոսս որ է քս̅
՚ի ձեզ յոյսն փառաց զոր մեք նքա
րոզեմք • և խրատեմք զա̅մ մարդ
և ուսուցանեմք ա̅մ հոգևոր ի
մաստութե̅ • զի կացուսցուք զա̅մ
մարդ կատարեալ ՚ի քս̅ յս̅։ Յորև
աշխատիմ պատերազմեալ ըստ յա
ջողութե̅ նր̅ որ յաջողեալ է յիս
զօրութե̅։

Ալէլու՛՛ ալէ՛։ Ողորմութե̅ տն̅
լի եղև երկիր • և բանիւ տն̅ եր
կինք հաստատեցան • և հոգւով
բերանոյ նորա ա̅մ զօրութիւնք նց̅

## ՍԷ Աւետարան ըստ Մարկոսի ·

Եւ շրջէր շուրջ զգաւառօքն և



ու

ուսուցանէր · և կոչեալ առ ինքն
զերկոտասանսն՝ սկսաւ առաքել
զն՟ս երկուս երկուս · և տայր ն՟ց
իշխանութ՟ի 'ի վ՟ր այսոց պղծոց·
Եւ պատուիրեաց ն՟ց զի մի ինչ
բարձցեն 'ի ճանապարհի · բայց
միայն գաւազան։ մի պարկ · մի
հաց · մի պղինձ 'ի գօտիս · այլ ա-
գանել հողաթափս · և մի զգենու-
ցուք ասէ երկուս պարեգօտս։
Եւ ասէ ց՟նս · յոր տուն մտանի-
ջէք՝ անդէն օթևանս կալջիք
մինչև ելանիցէք անտի · և որք
ոչ ընդունիցին զձեզ և ոչ լուի-
ցեն ձեզ, յորժամ ելանիցէք ան-
տի , թօթափեսջիք զփոշի ոտից
ձերոց 'ի վկայութ՟ի ն՟ց և ա՟մ հե-
թանոսաց։ Եւ ելեալ քարոզէին
զի ապաշխարեսցեն · և դևս բա-
զումս հանէին · և օծանէին իւ-
ղով զբազում հիւանդս ։

Նորա ապաքինեցաւ ասէ։

Եւ ևս խաղաղու"։ Օրհնեա՛ տ՟ր·
Եւ [illegible], [illegible]

Լէ...ղութիւն և դու, 'ի յետոյ հրաւիրելոյ
տանելով։

Նա՛ զվեցերորդ աստիճան վար-
դապետութեան. և յիշեա թէ զիարդ
օրինադրէ վասն այսմ աստիճանի
նոյն մարգարէն եսայիաս յայլում
տեղի 'ի սոյն ոճ բանի ասելով,
Ե՛լ 'ի վր լերինս բարձու աւե-
տարանիչդ սիօնի։ Այսինքն 'ի
գլուխ և 'ի կատար ամ բարձր և
դժուարին առաքինութեցն. և ա-
պա քարոզեա զբանն այ։ Արդու-
ցայնուսիկ կատարեալ՝ արժանի լի-
նիցիս անձառ խնդութե. ժառան
գել զկեանսն զոր ակն ոչ ետես
և ունկն ոչ լուաւ և 'ի սիրտ մար
դոյ ոչ անկաւ բազմապատիկ փո
խարինօք ընդ ամենայն սուրբս.
շնորհօքն քի այ մերոյ. ամէն։

Սբ Խաչիւն։ Պահպանիչ՛՛։
Հայր Մր.

Կատարեցաւ Վեցերորդ Աստի-
ճանն Վարդապետութեան։


Աւ

Սա՛ աշտանի Սաօթներորդն: Սա գաւ-նան 'ի հարսանեողմէն և երկնան 'ի հի-ւրասնողմն: Սա ասնն շու" ա՛լ.

Սիրոյ անմահ և երկնաւոր սուրբ փեսայի՛ն եկեղեցոյ. փեսաւէր և հրաւիրակ առա-քեցար հարսին որդւոյ Թագա-ւորին. առ. քս բարեխօսեա.

Վարդապետի՛ն տիեզերաց ա-ւանդեցեր զքո աշակերտեալսն. և ը՛ղ լոյս գիշերային Ճրագի քո՛ բանի համապայծառ արեգակա՛նն աւետարանի. առ. Տէրական ու օրինացն եղեր քարոզ առօրինա զանցսն. որով մատնեալ բանտի և կապանաց մոլեգնութե՛ ը՛ն հերովդիայ. առ քս:

Աշակերտութք քո՛ և առ ա՛մ տի եղեն առաքեալք. բարեխօսե

ցէք առ տէր վասն մեր։ Որք ա-
ռիք ըղ պատուէր․ քարոզել աներ-
կիւղ ըղ բանըն կենաց յաշխա-
հի․ բա՛։ Որք արժանի եղէք
տեսանել մարմնով զորդին ա՛յ
յայտնապէս․ բարբ՛։

Որ առաքեցեր նախընթաց քում
գալըստեանդ տե՛ր ըղ մարգա-
րէսն․ աւետարանել տիեղերաց
զիջումըն քո ի հայրական ծոցոյ
ի փրկութի՛ հեթանոսաց․ բա
ռեխօսութե՛ սոցա քո՛ խընայեա՛
ի մեզ։ Որ խոնարհեցար յանպա-
տում փառաց որդի աստուծոյ․
և եկիր ի կատարածըն մարգա-
րէիցըն նախաձայն քարոզուե՛ցն
ա՛նձառ խոնարհըդով․ բար։ Որ
լուծեր կենարար մահուամբ քո
ըղ երկունըս մահու․ իջանե-
լով ի դըժոխըս վերածեր ընդ-

քեզ զհոգիս արդարոց մարգարէ
ից ի լոյսն անստուեր · բար·
Որ զարդարեալ գեղապանծ վայ
ելչութբ՟ սբ՟ զեկեղեցի · պր
սակեցեր առաքելովք և մարգա
րէիւք · և հաստատեալ ամրացու
ցեր սբ՟ թագաւորօք · բարե·
Որք զինու զօրութբ՟ հոգւոյն
վառեալք ի պատերազմի · վանե
ցին ըզ մոլորութի՟ հերձուածո
ղաց · և ի հնաւանդս ճշմարիտս
հաստատեցին ըզ տի՟ եղերս ·
բարեպաշտ· Որ շնորհեցեր յաշ
խարհի թագաւորել մեծին թէ
ոդոսի · և կատարեալ ըզ կեա
նըս հաւատով ուղղափառուբ՟ ·
վերափոխեցեր այսօր յերկնից
թագաւորութին՟ · բա·
Որք թագաւորաց ազգաց և ա
ղանց գերագոյն ցուցին · արփի


ա

ափայլ զերդ լս հոգեւորս ընդ
րեալ դասուց վերին սիօնի. ան
մատոյց լուսոյն երկրպագեաս
ցուք։ Որ խորհրդեամբ ճշ
մարիտ լուսոյ փառաց անեղին.
նկարագրեցաւ մեզ գիր կեն
դանի յարգանդ մաքուր մեծին
մեսրոպայ. անմա։ Որք զծած
կեալ խորհուրդ ած գիտուն
տնօրինաբար յայտնեալ ծանու
ցին հանգոյն սրբոյ մեծին մո
սէսի. անմա։ Որ յօրինակ ճշ
մարիտ սիրոյ աէ առաքելոցն՝
աղերսաբար ի ձեզ էաց ցաւ հո
գի շնորհաց բըղխումն անս
պառ. անմա։ Որ երկոքումբք
ոբ լուսաւորչօք տանըն թորգո
մայ. հաստատեցեր զեկեղեցի ս
հայաստանեայց՝ զլոյս իմաստից
ի մեզ ծագելով. մաղթանօք սո
ցա քս խնայեա ի մեզ.

Լուսաւո՛ր հայոց մեծաց դի-
մա՛ց՝ ի մէջ երկրի ի հիւսիսոյ.
հո՛ղմըն հարաւոյ ի դաշտ ծաղ-
կածին՝ երագահաս սբըդ սար-
գի՛ս տո՛ւնիկ անմահ հութեան. բա՛
Առաքելական զինու վառեալ մը-
տեր ի մեծ հանդէս քաջութե՝.
մարտիրոս որդւովք ի պարս վե-
կայեալ՝ երագահաս սբըդ սար-
գիս՝ և մարտիրոս մեծ պըսա-
կաւորք. բարեխօս լերուք առ
տէր վս՟. Գերագոյն պատի-
ւեր ի բարձրելոյն բանին բա-
րեխօս. կատարի է խնդրը՝ րուա-
ծաց լըսող աղօթից՝ երագահաս
սբըդ սարգիս՝ դիւաց հալա-
ծիչ. բարեխօս լեր։
Որ ի հրաշայտ սուառնամթեց
ըդ վերանըստիս. այսօր ի դա-
սըս հոգեզինաց անպատմելի սի-

րով հեղեալ ի յերկնից՝ · օրհնել
ես դու հօրդ մեծ. Որ ի հրե-
ղէն լեզուացն եռահրաշեա՛լ
սրբաբանիս · այսօր ի շրթու-
նըս հողեղինացըն հրածորա՛ն
հեղեալ ի յերկնից՝ · օրհնեալ։
Որ հրակերպիցն արփիափայլ
բոցով մի շո երևիս · այսօր հո՛
ղեղինացըն հրաճաշակ բաժանել
հեղեալ ի յերկնից · օրհ·
Նըսկիզբըն ամծ՝ անճառելի՛ ան
բան զօրութի՝ · որ ի սկըզբանց
յաւիտենից խնամարկեցեր զո-
դիս ադամայ · գերագոյն այսօր
շնորհիւ փայլեալ ցուցեր ծը
նընդեամբ՝ զմայր միածնի դ քո՛
ը նորեղի՛յ · աղա · Որ յանէի՛ց
բանիւ գոյացուցեր զաշխարհս
ամե նայն՝ · այսօր մարդասիրեա՛լ
անօրինաբար ի յա՛նայէ՝ արկեր

 հի

հիմունս նորոյ աշխարհի՝ . աղ.
Ի՛ յամուլ երկրէ այսօր բու-
սաւ մեզ բարեբեր բոյսըն բա-
րի՝ շուշան հովտաց ծաղիկըն
գաշտաց . միամայրըն մարիամ ար
մատ ընկոյն անմահուե՝ . աղ.

Ի վերա՜յ վիմի՛ հաւատոյ շինե-
ցեր ըղքո ն͞ե զեկեղեցի՝ . ըզ
սա պահեա ի խաղաղութեան.

Ո՞ր շնորհեցե՜ր ողորմութի ՚ի
բնակարանըս հրեշտակաց և
մարդկան քաւարան . տուր սը
մա զանշարժ քո զխաղաղութի :

Ի՛ տաճարի՜ փառաց սըրբութե
քո քեզ երգեն մանկունք տուր
սոցա զառատ քո զողորմութի :

Ալէլու" ալէլ":

Ցուպ և գաւազան՝ նոքա մխի
թարեսցեն զիս. Տ͞ր հովուեսցէ
զիս. և ինձ ինչ ոչ պակասեսցի.

 Իշ

Ընթերցուած Ելից.

Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ընդ Ահարոնի եւ ասէ. Եթէ խօսեսցի ընդ ձեզ փարաւոն եւ ասասցէ, տուք մեզ նշան կամ արուեստ, ասասցես ցԱհարոն ցեղբայր քո. առ դու զգաւազանդ եւ ընկեա զնա ՚ի գետին առաջի փարաւոնի եւ ծառայից նորա. եւ եղիցի վիշապ. Մտին Մովսէս եւ Ահարոն առաջի փարաւոնի եւ արարին այնպէս որպէս պատուիրեաց նոցա Տէր. Եւ ընկէց Ահարոն զգաւազանն առաջի փարաւոնի եւ առաջի ծառայից նորա եւ եղեւ վիշապ. Եւ կոչեաց փարաւոն զիմաստունս եգիպտացւոց կախարդութեամբ իւրեանց. նոյնպէս եւ ընկեցին իւրաքանչիւրոք զգաւազան իւր եւ եղեն վիշապք. եւ եկուլ գաւազանն Ահարոնի զգաւազանս նոցա.

Ընթերցուած Եսայեայ Մարգ.

Իբրեւ զի գեղեցիկ են ՚ի վերայ



լե

լերանց ուղք աւետարանչի համ
բառայն խաղաղութն իբրև աւե
տարանչի բարուն. զի լսելի արա
րից զփրկութի քո: Նաեւ ցուցոն
թէ թագաւորեսցէ քեզ ած. զի
որոց ոչ պատմեցաւ վասն նր տես
ցեն. և որոց ոչ էցէ լուեալ ՚ի
միտ առցեն: Յայտնի եղէ այնո
ցիկ որ զինէն ոչ հարցանէին. և
գտայ այնոցիկ որ զիսն ոչ խնդ
րէին: Ասացի ահաւասիկ եմ
ցազգն ցայն որ զանուն իմ ոչ
կարդացին: Զօրհանապազ ձր
գեցի զձեռն իմ առ ժողովուրդն
անհաւան և հակառակօղ. որ գը
նային զճանապարհ որ ոչ էր
բարւոք.

Ընթերցուած ՚ի գործոց առաքելոց:

Եւ էին ոմանք յանտիոք ըստ
եկեղեցւոյն մարգարէք և վար
դապետք. բառնաբաս և շմաւոն
կոչեցեալն նիգէր. և ղուկիոս
կիւրենացի. և մանայէն դայեակ
որդի հերովդի չորրորդապետի.


և

և սօղոս: Ո՛ւնչդեռ ՚ի պաշտա-
մանն տն կային և պահէին, ասէ
Հոգին սբ, որոշեցէ՛ք ինձ զբառ-
նաբաս և զսօղոս ՚ի գործ յոր կո-
չեցեալ է իմ զդոսա: Յայնժամ
պահել և աղօթս արարեալ՝ եդին
ձեռն ՚ի վերայ և արձակեցին:
Նո՛ նոքա առաքեալք ՚ի Հոգւոյն
սբյ, իջին ՚ի սելևկիա. և անտի
նաւեցին ՚ի կիպրոս. և հասեալ
՚ի սաղամինա՝ պատմէին զբանն այ

Յօհաննու Առաքելոյն ՚ի Թղթէն":

Որ էրն ՚ի սկզբանէ զորմէ լուաք
որում ականատես իսկ եղաք
ընդ որ հայեցաք. և ձեռք մեր
շօշափեցին ՚ի վր բանին կենաց:
Եւ կեանքն յայտնեցաւ. և տե-
սաք և վկայեմք և պատմեմք ձեզ
զյաւիտենական կենացն որ էր
առ Հօր և երևեցաւ մեզ. զոր տե-
սաք և լուաք և պատմեմք ձեզ:
Զի և դուք հաղորդութի ու-
նիցիք ընդ մեզ. և մեր հաղոր-

 դու

դութիւնն իցէ ընդ հօր և ընդ
որդւոյ իւրում յի̅ ք̅ի։ Եւ զայս
գրեմք ձեզ. զի ձեր ուրախու
թիւնդ կատարեալ եղիցի։ Եւ այս
էն աւետիքն զոր լուաք առ 'ի նը
մանէ և պատմեմք ձեզ. զի ա̅ծ
լոյս է և խաւար 'ի նմա չիք և ոչ մի։

### Պօղոսի առաքելոյն 'ի տիմոթէոսի Բ"

Այլ դու զհետ եկիր վարդապե
տութեան իմոյ. առաջնորդութեան
յօժարութեան հաւատոյ երկայնմը
տութեան սիրոյ համբերութեան հալա
ծանաց չարչարանաց. որպիսիք
եղեն ինձ յանտիոք և յիկոնիոն
և 'ի լիւստրա. որպիսի հալածա
նաց համբերի և յա̅մէ փրկեաց
զիս տ̅ր։ Եւ ա̅մ̅ն որք կամիցին
ա̅ծպաշտութեամբ կեալ 'ի ք̅ս յ̅ս
'ի հալածանս կացցեն։ Այլ դու
որդեակ իմ, զօրացիր շնորհօքն
որ 'ի ք̅ս յ̅ս. և զոր լուար յինէն
բազում վկայիւք, զայն աւանդես
ցես հաւատարիմ մարդոյ. որք

բաւական իցեն և զայլս ուսու-
ցանել: Աշտակեց լեր իբրև ըղ
բարուք զինուոր յի̃ քի̃: Ո՛չ ոք
զինուորեալ աստէն ընդ կեանս
աշխարհի պատերազմի, եթէ ոչ
զօրավարին հաճոյ լինիցի: Նա՛
եթէ մարտիկ ոք իցէ, ո՛չ պսակի
եթէ ոչ ըստ օրինին մարտիցի: և
հողագործին աշխատելոյ պա՛րտ է
նախ 'ի պտղոյն վայելել: Իմա՛
զինչ ասեմս, տացէ քեզ տ͞ր իմաս
տութի՛ն յա͞մի:

Ալէլու'' ալէլ'': Բա՛րձր արարից
զընտրեալն 'ի ժողովրդենէ իմմէ
և զաթոռս ծերոց ժառանգեցու-
ցից նմա:

## Ա͞ե Աւետարանն ըստ Ղուկասու:

Յետ այսորիկ երևեցոյց տ͞ր այլ
ևս եօթանասուն երկուս. և
առաքեաց զն͞ս առաջի իւր յա͞մ
քաղաքս և 'ի տեղիս ուր ինքն եր
թալոց էր: Նա՛ ասէ ցն͞ս: Հունձք
բազում են և մշակք սակաւք.

 արդ

արդ աղաչեցէ՛ք զտ̅ր հնձոցն զի հանցէ մշակս ՚ի հունձս իւր: Երթա՛յք ահա առաքեմ զձեզ իբրև զգառինս ՚ի մէջ գայլոց · մի՛ բառնայք քսակ · մի՛ մախաղ · մի՛ կօշիկս · և ՚ի ճանապարհի ումեք ողջոյն մի՛ տայցէք · յոր տուն մտանիցէք նախ ասասջիք ողջոյն տանս այսմիկ: եթէ իցէ անդ որդի ողջունի, հանգիցէ ողջոյնն ձեր ՚ի վ̅ր ն̅ր · ապա թէ ոչ՝ ՚ի ձեզ դարձցի: Եւ՛ ՚ի նմին տան ագանիջիք · ուտիջիք և ըմպիջիք ՚ի նոցանէ · զի արժանի է մշակն վարձու իւրոյ: մի՛ փոխիցիք տանէ ՚ի տուն: Յոր քաղաք մտանիցէք և ընդունիցին զձեզ, ուտիջիք զինչ առաջի դնիցեն ձեր և բժշկեսջիք որ ՚ի նմա հիւանդք իցեն · և ասասջիք նոցա՝ մերձեալ է իւերայ ձեր արքայութիւնն աստուծոյ:

Ապա սարկաւագն ասէ:

Եւ՛ս խաղաղու": Օրհնեա՛ տ̅ր:

Եւ՛ [illegible]

զփառաւորեալն և փառս ՚ի յետոյն հրաւիրելոյ՝ առնելով։

Ա՛ռ և զեօթներորդ աստիճան վարդապետութեանս. ոպ̃ զի կարողասցիս շնորհօք հոգւոյն սբ̃յ կատարել գործով զոր ինչ քարոզեսցես բերանով։ Ոպ̃ զի այնու զօրացեալ արդիւնասցի բան քարոզութեան քո ըստ բանի մարգարէին, թէ բարձրացո՛ զօրութ̃ զբարբառ քո։ Եւ յամ ժամ առնելով և ուսուցանելով, մեծ կոչեսցիս յարքայութե տն̃ մերոյ յի̃ քի̃ ամէն։

Սբ̃ խաչիւ. Պահպանիչ՛։
Հայր մր։

Կատարեցաւ Եօթներորդ աստիճանն Վարդապետութեան։

Յաւ. ուխտին Առաջնորդին։ Յաւ. գալստեան
Ի նոյն տեղին, ուխտին շար՛՛ ամ.

Տէ՛ր որ զգթութի՛ւնդ քո զա՛ռատ հեղեր յերկնից ի մէջ մեզ առաքելոց քոց․ աղաչանօք սոցա ողորմեա՛։ Որ ի ձեռն սոցա լսփռեցան շնորհք հոգւոյդ սրբոյ ընդ ամ՛ երկիր․ աղա։ Որ սոքօք լուսաւորեցեր մերկիր տուեալ աւազանին զեկեղեցի քո սբ․ աղաչանօք։

Ե՛րկնաքաղաքացին յո՛վհաննէս մե՛ծն ի ծնունդս կանանց․ քարոզե՛ր յանապատի ա՛զդ արա՛րող բարբառոյն․ ընդ ծագումն լուսոյ արեգականն արդարութեան։ Ճշմարիտ մարգարէ և ձեռնադրող որդւոյն այ․ յառաջընթաց


կա

կարապետ և պատմօղ ածային
օրինացն · հորդէր զճանապարհ
Թագաւորին յաւիտենից։ Յանօ
րէն գինարբուսն մոլեգնեալ
հերովդիադա · ի պարգևի մա
սին խնդրէր ըզգլուխ մարգա
րէին՝ չի՛ջուցանել զարուսեակն
և զանաղօտ լապտերն։

Որ ըզծածկեալ խորհուրդ կե
նաց տնօրէնութեան՝ ըզ քոյ քս̃·
Ը̃ հանուր ազգի մարդկան յայտ
նեցեր մարգարէիւք · ըզծա_
գումըն լուսոյ արեգականդ ար
դարութն̃։ Որք ուսուցին իս
րայէլի երկրպագել քում տէրու
թեանդ · և յայտնի քարոզեցին
ըզ փրկութի̃ հեթանոսաց · Ե_
թէ գայ մ'սիայ Թագաւոր իս_
րայէլի։ Որք տաճարի նըմանու
թեն ցուցին զարգանդ մ̃ր կու_
սին

սին · ուսուր տըւեալ եղև մեզ
հայց կենաց անմահութե · զոր
օրհնե՛ն անդադար երկնային
զի՛նուորութի՛ւնքն ։

Ո՛ր շնորհաձք ս̃բ հոգւոյն բոր_
ձեր ըղխմա՛նցն փըրկչակա՛ն յոր
դեդրո՛ւե շընորհս՛ ո՛վ ս̃բ հայր
անտօնիոս · արժանաւոր երկնայ
ի՛ն կոչմանն ի՛ հրեշտակային դա
սակցո՛ւթեան · օրհնեմք մի՛շտ
ս̃բ զերրորդութի՛ն · Այսօր և
մանկունքս ս̃բ եկեղեցւոյ տօ_
նե՛ն ըղխաչակրո՛ն քո ս̃բ զյիշա
տակս · ո՛վ ս̃բ հայր ճըգնաւո_
րաց · զի՛ ընկալցի՛ն զանապակա՛ն
պարգևսն իքէ՛ ա̃յ մերմէ · օրհ:
Օ առատապարգևս վե՛ր ընկա_
լեալ ըղ փա՛ռս յաջակողմանըն
քի ընդ իմաստուն կուսանսն ·
հայցեսցե՛ս իքէ՛ն ը՛զթողութի մե

ղուցելոցս․ իբրեւ ըղձային է
թէ եկայք օրհնեալք հօր իմոյ
ժառանգեցէք ըզ կեանսն յա
ւիտենից։

Որեւ ի երբեմն աշակերտացըն
հրաշալի տեսլեամբ․ պայծառա
ցեալ ի թաբօր լերինն։ Եւ զեր
բեալ մութեն ղունտանելն ըղ
լոյսն․ տեսանելով կենդանոյն
մարհացան։ Զանդրիպեալ նախա
հարցըն տեսութէ հայցէին ՚ի
տնէ․ ասեն բարւոք է մեզ աստ
լինել։ Արասցուք երիս տաղա
ւարս՝ տն եւ Մովսէսի եւ Եղի
այի․ եւ փառաւորեսցուք հանա
պազ զերրեակ միութին։

Որ լուար առ ծ գոչմանըն յօ
նանու յորովայնէ կիտին․ ապ
րեցո եւ զիս յաներեւոյթ թշնա
մւոյն փորձէ գողով․ որ նոր

տի՛ս ի՛քրոբէա՛կա և աթո՛ռ։ Որ ընտրեցե՛ր քեզ վերը՛ստի՛ն քարոզո՛զ նինուէա՛ցւոց․ զպափըշտակեա՛լն ի կիտէն երե՛քօրեայ ինման ի դըժո՛խս․ և զե՛ս ընդ բազմամբ զս արձակեա՛ ի կապանա՛ց մահո՛ւ ի կեա՛նսըդ յա՛ւիտենի՛ց։

Ն՛կեա՛յդ ի փըրկութի՛ն ըստեղծուածո՛ց քո՛ց․ պատկերակի՛ց եղե՛ր հողեղէ՛ն մարդոյն ը՛նդ մե՛զ ըսպաներ․ և զմահո՛ւ գերեա՛լսն ազատեցե՛ր ի մեղա՛ց։

Ողորմեա՛լ ընտրե՛լոց մետասա՛նիցն․ սպասեա՛լ մընայի՛ն աւետեա՛ցըն հօր հաւատով ի՛վե՛րնատանն։ Սէ հոգին երևեալ սը՛րբո՛ցն․ լե՛զո՛ւ յց խընդութեամբ սուրբ զառաքեալսն՝ հաւա։

Որք արբի՛ն ընդ հո՛ւրըն կենդա՛նի․ և՛ ընթացեա՛լք ա՛րբուցին



տիե

տիեզերաց · որք արբին ըն կեն
դանացան.
Անսկիզբն ած բանդ որ ի
հօրէ առաքեցար ընդ ժամանա
կաւ լինել հաճեցար եւ մարմ
նացար ի մէջ կուսէն · վասն մե
րոյ փրկութեան. այսօր մըկըր
տիլ ի յորդանան ի յովհաննէ ·
բառնալով զյանցանս առաջին
նախաստեղծ մարդոյն. Անե
ղանելիդ ած բանդ անմեկնե
լիդ ի հօրէ · ընդ ժամանակաւ
լինել հաճեցար եւ մարմնացար
ի մէջ կուսէն · ած եւ մարդ
յայտնեալ. այսօր մըկըր.
Զորեքկերպեան կենդանեացն
ըզխորհուրդ քարոզեալ ամ
ըրդին տեսանելով մէջ զհոգին
աղաւնակերպ իջմամբ ի վերայ
ջրոյն · աղաղակէին ասելով.
 ահա

ա՛նհա գտա՛ն ա՛յ որ ի՛նօրէ վերկայե
ցաւ դա՛է ո՛րդի՛ ի՛մ սիրելի՛ ·
ը՛նդ որում ե՛՛՛ս հա՛ճեցա՛յ·
Արանելի ա՛ծաւէ՛ր ա՛բ դը՛ հ
խոյն · եկեա՛լ ի՛քաղաքն Երո՛ւ
սա՛ղէմ խնդրէր ը՛զ փրկակա՛ն
ծա՛գումն մե՛ծի փա՛ռ յըմանն ·
և՛քարոզէ՛ր նո՛ցա՛ զմո՛րենին վա՛
ււեա՛լ ո՛ր ո՛չ այրիւր՝ · մե՛ծացո՛ւ
ցանե՛լո՛վ ը՛զծընեա՛լըն ի՛կո՛ւ
սէ՛ն։ Աւե՛ խոշտանկեա՛լ ըզ դա՛
սըս հրէ՛ից · խոստովանի՛ ա՛ր
յո՛ւդա՛ · Ե՛կեա՛լ իտեղի՛ն գող
գոթայ հա՛ւա՛տո՛վ · և՛քարոզէ՛ ը՛
նո՛ցա՛ զզո՛ւան ընդ ո՛ր ե՛մո՛ւտ
բա՛նն ա՛ը՛ծ · մե՛ծ։ Աւե՛ համ
բա՛րձեա՛լ ըզ ձա՛յնըն յուդա՛ յի՛
խընդրելո՛վ ի՛տէ՛ ըզ տենչայի՛ն
ա՛մենեցուն ա՛ը ը՛ զխաչն · և՛ հա՛
ւատո՛վ գո՛ւնէր ե՛կայք երկըր

 պա

պատկեսցո՛ւք ա̄ծայ՛ին տո՛ւրք նը
շա՛նիս՝ . մե՛ծացո՛ւ ։

Ալէլ՛՛ ալէ՛՛ ։ Բղխեսցէ՛ սիրտ իմ
զբան բարի , և ասացից զգործս
իմ թագաւորի ։ Վասն այսորիկ
օծ զքեզ ա̄ծ , ա̄ծ քո իւղով ու-
րախութեան՝ առաւել քան զըն-
կերս քո ։

## Ընթերցուած Առակաց ։

Զի ս̄բ հոգին իմաստութեան
փախիցէ ՚ի նենգութենէ . և մեր-
ժեսցի ՚ի խորհրդոց անմտաց . և
յանդիմանեսցէ հասանիլ ՚ի վերայ
անիրաւութեց . Զի մարդասէր
հոգին իմաստութե՛ն ո՛չ արդարա-
ցուսցէ զհայհոյիչս ՚ի շրթանց իւ-
րոց . զի երիկամանց նո՛ր վկայ է
ա̄ծ . և սրտի նո՛ր տեսուչ ճշմա-
րիտ . և լեզուի նո՛ր ունկնդիր ։
Զի հոգի տ̄ն ելից զտիեզերս .
և որ ունի զամենայն , ունի զգի-
տութիւն բարբառոյ ։

Ընթերցուած Յօբայ։

Իմաստութ̄ի ուստի՞ գտանի կամ զի՞նչ տեղի իցէ հանճարոյ. ոչ գիտէ մարդ զճանապարհս նորա և ոչ գտանի ՚ի մէջ մարդկան։ Անդունդք ասացին թէ չէ առ մեզ. և ծով ասաց թէ չէ ընև. Ոչ տացի գրաւական ընդ նր̄. և ոչ կշռեսցի արծաթ ընդ գնոց նորա. և ոչ բարձցի ընդ ոսկոյն սովփերայ. ընդ եղնգան պատուականի և ընդ շափիղայի։ Ոչ զուգեսցի նմա ոսկի և ապիկի. և ՚ի գինս նր̄ անօթք ոսկեղէնք։ Բարձրութիւնք և խորութիւնք ոչ յիշեսցին. և ձգեաց զիմաստութի քան զներքսագոյնս։ Ոչ հաւասարեսցի նմա տըպազիոնն եթովպացւոց. ընդ ոսկւոյն սրբոյ ոչ բարձցի. Իսկ իմաստութի ուստի գտանի և զինչ իցէ տեղի հանճարոյ. զօղեալ է ՚ի մարդկանէ և ՚ի թռչնոց երկնից ծածկեցաւ։ Կորուստ և մահ ասացին՝ լուաք



զհա

զփառաւորութի՛ նորա ։ Նա՛ տր դիւրաւ՛ իւրով ընծայեցոյց զճանպրհ նր ։ քանզի՛ ինքնին գիտէ զտեղի նր ։ և ինքն տեսանէ զամ առ ի ներքոյ երկնից ։ քանզի գիտէ զամ զոր արար յերկրի ։ զկշիռ հողմոց և զչափ ջրոց զոր արար ինքն ։ ետես և համարեցաւ զճանապարհ նր արձակմամբ բարբառոյ ։ Յայնժամ ետես զնա և պատմեաց զնմանէ ։ պատրաստեալ քննեաց և ասէ ցմարդ, ահա՛ ածպաշտութի է իմաստութի ։ և մեկնիլ ՚ի չարեաց է հանճար ։

## Ընթերցուած Յեզեկիէլէ ժգ"։

Եղեւ բան տն առ իս և ասէ ։ որդի մարդոյ մարգարեա՛ց ի վր հովուացդ իէղի ։ մարգարեա՛ց և ասասցես ցհովիւսն ։ Այսպէս ասէ տր տր ։ ո՛ հովի՛ւք իսրայէլի ։ մի թէ հովի՛ւք զանձինս արածեն ։ ո՛չ հովի՛ւք զխաշինս արածեն ։ Արդ ա՛նադին զկաթն ուտէք



և

և զաւրն ադանից · զպարապոսն
զենուք · և զխաչինս իմ ոչ արա
ծէք · զողըկարայեալն ոչ զօրա
ցուցանէք · և զհիւանդացեալսն
ոչ բժշկէք · Զչարչարեալն ոչ
յանձանձեցիք · և զբեկեալն ոչ
պատեցիք · զմոլորեալն ոչ դար
ձուցիք և զկորուսեալն ոչ խնդ
րեցիք · զհաստահարուստն աշ
խատ արարիք · Եւ ցրուեցան խա
շինքն իմ ընդ ամ լերինս և ընդ
ամ բլուրս բարձունս · և ընդ ամ
երեսս երկրի ցրուեցան խաշինք
իմ · և ոչ ոք էր որ խնդրէր և
ոչ այն որ դարձուցանէր ·

Ընթերցուած ՚ի գործոց առաքելոց ·

Զգոյշ կացէք անձանց և ամ
հօտին յորում եդ զձեզ Հոգին
սուրբ տեսուչս՝ հովուել զժո
ղովուրդ ածն զոր ապրեցոյց ար
եամբն իւրով : Քանզի գիտեմ
ես եթէ յետ իմոյ ելանելոյ յաշ
խարհէս, գայցեն գայլք յափշ


տա

տակաւին 'ի ձեզ. որք ոչ խնայես-ցեն հօտին. և 'ի ձէնջ յարիցեն արք որք խօսիցին թիւրս. ձգել զաշակերտեալսն զկնի իւրեանց: Այսուհետև արթուն կացէք և յիշեցէք. զի զերկեամ մի ոչ դադարեցի արտասուօք խրատել զմի մի իւրաքանչիւրոք 'ի ձէնջ: Եւ արդ յանձն առնեմ զձեզ այ և բանի շնորհաց նր որ կարողն է շինել և տալ ձեզ ժառանգութի ընդ սուրբսն ամենայն:

### Պետրոսի Առաքելոյն 'ի Թղթոյն":

Երիցունս այսուհետև աղաչեմ իբրև զերիցակից և վկայ չարչարանացն Քի. որև հանդերձեալ փառացն որ յայտնելոց է հաղորդս. արածեցէ՛ք որ 'ի ձեզ հօտդ է այ. վերակացու լինիլ մի՛ իբրև ակամայ, այլ կամաւ ըստ այ. մի՛ զօշաքաղութե, այլ յօժարութե. մի՛ իբրև տիրելով վիճակացն, այլ լինիլ օրինակ հօտին:

 զի

Ի յերկիւղ Հօտապետին՝ ընդունիջիք զանթառամ փառց պսակն։

Պօղոսի առաքելոյն 'ի Տիմոթէոսի Ա՛

Որ բարուք վերակացու լինին երիցունք, կրկին պատուոյ արժանի եղիցին. մանաւանդ որ աշխատին բանիւ և վարդապետութե՟։ Քանզի ասէ գիր. մի՛ կապեսցես զցռուկ եզին կալոտոյ. զի արժանի՛ է մշակն վարձու իւրոյ։ Զերիցուէ չարախօսութի՟ մի՛ ընդունիցիս. բայց եթէ երկու և երիւք վկայիւք։ Իսկ որ մեղանչենն, առաջի ամենեցուն յանդիմանեա զի և այլքն երկիցեն. Վկայութիւն դնեմ առաջի այ և յի քի և ընտրելոց հրեշտակաց, զի զայդ պահեսցես առանց մտահաճութե՟. մի՛ ինչ առնել աչառանօք։ Ձեռս վաղվաղակի յուրուք վերայ մի՛ դընիցես. և մի՛ կցորդ լինիցիս մեղաց օտարաց. զանձն քո սբ պահեսցես։



Սպ

Ալէլու՛ ալէլ՛:

Եպ իւղ զի իջանէ 'ի գլուխն և 'ի մօրուսն ահարօնի. և 'ի մօրուացն իջանէ 'ի գրապանս զգեստու նր.

## Ա՟ Աւետարան ըստ Յօհաննու:

Եւ յերեկոյի միաշաբաթոջ առաւօտուրն՝ դրունքն փակեալ ուր էին աշակերտքն ժողովեալ վասն ահին հրէից, եկն յս և եկաց 'ի մէջ նց և ասէ ցնոսա ողջոյն ընդ ձեզ: Իբրև զայս ասաց, եցոյց նց զձեռս և զկողս իւր: Եւ խնդացին աշակերտքն իբրև տեսին զՏր: Ասէ ցնս յս դարձեալ ողջոյն ընդ ձեզ. որպ առաքեաց զիս հայր իմ, և ես առաքեմ զձեզ: Եւ զայս իբրև ասաց՝ փչեաց 'ի նս և ասէ առէ՛ք հոգի սբ: Եթէ ումեք թողուցուք զմեղս՝ թողեալ լիցի նց. և եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի:

Ապա սարկաւագն քարոզէ:

Եւ եւս խաղաղու՛: Օրհնեա՛ տր:



Եւ

Այլ վարդապետի տալով զԱրժանին՝ տանել ընծայաւանն և տալ ՚ի ձեռն հրեշտակին տանելով։

Նա և զութերդ աստիճան վարդապետութեան. քանզի առեր զօրութիւն ՚ի քէն լինել երբեւ զվէմս անշարժելի ՚ի դրանց դժոխոց. համարձակ քարոզել և մի՛ երկնչել ՚ի մահուանէ. մի՛ որսալ փառս ՚ի մարդկանէ. մի՛ առնուլ կաշառս մի՛ երեսս. մի՛ աչառութիւնս. և մի՛ ծուլութիւն. յուսադրեալ ՚ի մարգարէին հրամանէ. բարձրացուցէ՛ք և մի՛ երկնչիք. Այլ մեր այսօրիկ խոստումն տեառն հրամանացն կատարեսցի իմ՛ք ըստ անշուշտանին որ ասէ թէ՝ զոր ձեզ ասեմ, ամենեցուն ասեմ. Գործելով զանուն քո ՚ի դպրութեան կենաց ընդ երջանիկ դասս առաքելոցն. ամէն.

Սբ խաչիւ. Պահպանիչ։

Հայր մեր։

Կատարած ութերորդ աստիճանին վարդապետութեան.



Այլ

Նոյն աւուր Միներորդն դարձեալ ՚ի նոյն տեղւոյն ։ Նոյն առ Հայր՝ ՃԳԱ ։

Ո՛ր արարե՛ր զօրութե՛ամբ զիմանա՛լեացն աշխարհ վերին․ և ՚ի նմա հաստատեցեր ընտանե՛ս ըղպետըս հրե՛ղինացն․ օրհնե՛մք զանհասանե՛լի՛ զօրութի՛դ․ Ո՛ր տիրա՛պե՛ս մե՛ծ աստուածդ՝ ստեղծե՛ր երկրորդ աշխարհս զգալի․ և իդրախտ նոր յա՛դենի ընտանե՛ս եդե՛լ զմարդն առաջին․ օրհնե՛ ։ Ո՛ր շինե՛ցե՛ր զեկեղեցի քո խո՛րհրդեամբ․ և իմա՛ կարգեա՛լ ընտանես դքա_րո՛զս բանին Ճշմարտութե․ օրհ․ Մ՛իածնե՛լոյն տա՛ճարաւ բարձող է՛իցըս բա՛րձողին․ ո՛ր ծընա՛ր զա՛ծ մարմնով՝ զանմա՛րմնաբար ծը՛նո՛ւնդըն հօր ։ բարեխօսեա՛ վ՛ն մեր ա՛ծածի՛՛ն մա՛րիամ․



Ո՛ր

Որ յաղթութու փառաց նստիս բանդ-
ա՛ւրծ խոնարհեցա՛ր ի՛հայրա-
կան ծոցոյ ա՛ւեր մա՛րմին ի՛կու-
սէն՝ ․ վերականգնելով ՚ի տեղի
ըստորա՛նկեալ լուսոյն զհողացել
բնութի՛ս։ Ո՛ր կանգնեցեր ըղ
խա՛չ քո ի՛մէջ ե՛րկրի ․ և սովա՛
ըղ սրբէապակ դուռըն դրախ-
տին բա՛ցեր նախաստեղծին՝ ․
կենագործելով ի ճաշակմանէ մա՛-
հաբեր պտղոյն։ Ն՛ու զօրու է
խաչի՛ քո ք՛ն հիմնեցուցեր զկա
թուղիկէ ե՛կեղեցի՝ բընա՛կա-
րան մէ երրորդութեդ ․ լուսաւո
րելով ըղհեթա՛նոսս ի՛սմա կըրկ
նակի ծնընդեամբ։
Ա՛ղբիւր լուսոյ և ճառագայթ
անշիջանելի՛ լոյս ․ որ ըղ՛ւա՛
նա՛ ւ յանձն առե՛ր զոտս աշա՛
կերտա՛ցն ․ մաքրեա՛ ի մէնջ ըղ

մէգ

եգ խաւարի՛ն խորհրդոյ՝ և՛
լուսաւորեա՛ զմեզ։ Ո՛ր մարմնով
և արեա՛մբ քո ցուցեր ըզթողու
թի՛ն մե՛ղաց․ որ ըմբոշխտ պա
տարագի՛ս ի մեզ ա՛նձամխապէ՛ս ծս․
մաքրեա՛։ Ո՛ր քաւի՛չ զայս նո՛ր
ուխտ ցուցե՛ր յետ առա՛ջնոյ՛ն քո՛յ․
մահացե՛լոցս ի ճաշա՛կմանէ
նախահօ՛ ծրն․ մաքրեա՛։
Ո՛րք արժանաւորեցայ՛ք կոչե՛լ
յաշակերտու՛թի առաքելոյն Թա՛
թէոսի՛․ և՛ ա՛ծային հրո՛վ մաք
րու՛թն ոսկի՛ փորձեա՛լ գըտայք
ի բնակա՛րանըս հրեշտա՛կաց․ ո՛վ
երանելի ո՛ւք ոսկեամենք բա
րեխօսեցէ՛ք առ տէր մաքրե՛լ ըզ
մե՛զ ի մե՛ղաց մերոց։ Ո՛րք ան
հրաժե՛շտ դաւա՛նու՛թե քարո
զեցի՛ք ըզքս ի դրու՛նըս Թա՛
գուհւոյն․ մըկրտե՛լով ըզ



քաջ

քաղ նաւհանգստական ի յաւիտենս եփ-
րատայ. ի ծաղկազարդ վայելչու-
թիւս. ով երա՛ Մ՛ըք անպարտե-
լի միացի՛ք ի հրապուրանաց որ-
դւոյ թագաւորին. չորրորդեան
ըք վասն Ք՛ սի. արագապէս
խաղխաղեցայք պատարագ ըն-
դունելի. ով եր.

Որ համանման մեծին եղի-
այի և յոհաննու մկրտչին.
յանապատի բնակեցար հրեշտա-
կական վարուք ձգնեալ. ի
փշաբեր ստոց ծաղիկ վարդից
զանուշահոտութիւն քո բու-
րեալ կենաց ի կեանս փրկե-
լոց. ով երանելի որ եփրեմ ի՛մ
աւ քո՛ բարեխօսեամ վասն քո
տօնողաց. Որ յերկնային
վտակաց հոգոյն արբեր ըղ հա-
մանեծս շնորհաց. որով իմէրնա

տանըն դաւք առաքելո՛ցն ի՛ Հրե
ղէ՛ն լեզուացն . զո՛ր առատա՛պէս
Մատուցանէս ծառայեցե՛ր ընդ
տի՛եզերս յա՛րբերուՆ ոգւոց ծա՛րա
ւեաց՝ . ո՛վ: Ո՛ր ա՛ծ ատո՛ր՛ ւնկ
իմանալի ծառայն կենաց ո՛ղկո՛յզն
ի՛քէն պըտղա՛բերե՛ցաւ՝ . ո՛րով
հնրակրեցեր՝ և կերակրես մեզ
ըզ մա՛նկունս ե՛կեղեցւոյ . արքայ
ութեն երկնից դըրկեր . և վար
դապե՛տ Հի՛ն և՛նոր կտա՛կարա՛
նաց . ո՛վ Երանելի:

Ո՛կա՛յք լուսաւորեա՛ լք ման
կո՛ւնք առաքաստի . աշակերտ
եա՛յք սուրբ բա՛նի՛ն Ճշմա՛ր
տութեն . ցը՛նծութե՛՝ կատարես
ցուք ը՛զկե՛շատի վարդապե՛տի՛ն
ե՛կեղեցոյ . որ զըն՛ծա՛ցս ի՛ւր կատա
րեա՛լ այսօր վերափոխեցա՛ւ յա՛ծա
կե՛րտ խորանսն՝ ի՛ յանդրա՛նկա՛ց

հոգւոցըն դասս․ վասըն մեր առ
աջ ամ[illegible]ր միշտ բարեխօսել․
տալ ըղ քաւութիւն յանցանաց․
Դաւհութեամբ փառաւորեսցուք ըղ
քեզ ք[illegible] փառաց թագաւոր․
որ ընտրեցեր ամենայն քո օրի
նաց քարոզ ըղ ս[illegible]բն եփրեմ․ որ
զհաւատացեալ արծաթ բանին
իքէն՝ արկ ի սեղանաւորս յոգի
որդւոց մարդկան․ մաղթանօք
սորամամ[illegible] արժանաւորեա ըղ
մեզ փառաւորել ս[illegible]բ զերրորդու
թիւնդ յաւիտեանս ամէն․

Որ համագոյդես հօր և որդւոյ
անճառաբար բղխումն ի միշտ
էէն․ ա[illegible] յոյր բղխեցեր ջուր
կենդանի յեօղէմ․ հոգի [illegible]
որո[illegible] ըմբեա․ Որ առարչակից
ես հօր և որդւոյ․ որով կենդա
նածնեալք ի ջրո[illegible] րց մկրտածք․

մ՚ յոյժ որդիս ա՛յ ծնանիմ ի
ջուրց․ Հոգի․ Ո՛ր փառաւորից եւ
Հօ՛ր եւ որդւոյ․ եւ քննե՛ս ըզ
խոր՚րս աստուածոյ․ ա՛յսօր խո
րագէ՛տս իմաստից զկիմա՛րս աշ
խարհի արա՛րեր․ Հոգի․

Սուրբ զա՛ծածինն՝ օրհնու-
թեա՛մբ մեծացուսցանեմք․ Աւե՛-
տաւոր Հրեշտակն աւե՛տա՛ւորս նէր՝
ըզծընեալն փրկի՛չն իւէյ կու-
սէ՛ն․ Աւէ՛ ուրա՛խ լեր բերկ
րեալդ՝․ քանզի տէ՛ր տերա՛նց է
ընդ քեզ։

Փա՛յտ կենաց որ փոխա՛նակ մա
Հացու պտղոյն ըզ ք՛ ո պտղա
բերեցեր․ պարըսպեա՛լ պա՛ Հեա
զօ՛ւխտս Հա՛ւատացելոց․ Եւ բա՛
ցաւ մեղ Ճա՛նապարհ ծառո՛յն կե
կենաց․ ի՛ սրօբէափա՛կ պաՀպա-
նո՛ւթենէն․ պարըս․ Եւ ա՛ղա՛


տե

ուեցաւ նախահայրն 'ի ճաշակմա
նէ պտղոյն. Ո՜քե՜ղ երկրորդա
գեն ամենայն հաւատացեալք. պա։

Ուլէլու՛՛ ալէ՛՛։

Յանկալի է նա քան զոսկի և քան զականս պատուականս բազում. քաղցր է նա քան զմեղու խորիսխ։ Երկինք պատմեն զփառս այ. և զարարածս ձեռաց նորա՛ պատմէ հաստատութիւնն։

Ընթերցուած 'ի Զաքարիայ մար՛՛։

Յաւուր յայնմիկ եդից զհազարապետն յուդայ իբրև զխանձող հրոյ 'ի մէջ փայտից. և իբրև զլամպարս 'ի մէջ եղեգան. և կերիցեն յաջմէ և յահեկէ զամ ժողովուրդս շուրջանակի. և դրձ բնակեսցի եհմ առանձինն. և ապրեցուսցէ տր զյարկսն յուդայ իսկզբանէն. զի մի՛ մեծաբանեսցեն պարծանք տանն դաւթի և հպարտութիւն բնակչաց եհմ իւր



տանն

տանն յուդայ։ Այլ եղիցի յաւ-
ուր յայնմիկ պաշտպանեսցէ՛ տր
ած բնակչացն եմի։ Այլ եղիցի
որ տկարն իցէ ՚ի նս յաւուր յայ-
միկ, իբրև պաշտպանեսցէ զդա-
ւիթ. և տունն դաւթի իբրև ըզ
տունն այ. և իբրև հրեշտակ տն
առաջի նց։ Այլ եղիցի յաւուր
յայնմիկ խնդրեցից բառնալ զամ
ազգս եկեալս իվր երուսաղէմի.
և հեղից ՚ի վերայ տանն դաւթի
և՚ի վր ամ բնակչաց երուսաղէմի
զհոգի շնորհաց և գթութեան։

## Ընթերցուած Եսայեայ Մրգ՚։

Այսպէս ասէ տր ած ցօծեալն
իւր ցկիւրոս. զորոյ կալայ զա-
ջոյ ձեռանէ նր հնազանդեցուցա-
նել առաջի նորա զազգս. և զզօ-
րութիւնս թագաւորաց խորտակե-
ցից. բացից առաջի նր զդրունս.
և քաղաքք մի՛ փակեսցին. Ես
երթայց առաջի քո. զլերինս հար-
թեցից և զդրունս պղնձիս խոր-



տա

տակեցից և զնիգս երկաթիս փըշ-
րեցից. և տաց քեզ զգանձս խաւ-
արինս և զաւանդս աներևութս
բայից քեզ։ Զի ծանիցես թէ
ես եմ տր ած որ կոչեցի զանուն
իմ ած իէլի վասն յակօբայ ծա-
ռայի իմոյ և իսրայէլի ընտրելոյ
իմոյ։ ես կոչեցի քեզ զանուն քո
և ընկալայ զքեզ։

### Ընթերցուած ՚ի գործոց առաքելոց։

Այն անմիաբան լեալք հրեիցն
միմեանց՝ արձակէին յասելն պօ-
ղոսի թէ՝ բարւոք խօսեցաւ հո-
գին սբ ՚ի ձեռն եսայեայ մար-
գարէին առ հարսն մեր և ասէ.
երթ առ ժողովուրդն և ասասցես՝
լսելով լուիջիք և մի իմասջիք. տե-
սանելով տեսջիք և մի տեսջիք.
Զի թանձրացաւ սիրտ ժողովր-
դեանդ այդորիկ. և ականջօք ի-
րեանց ծանունս լուան և զաչս
իւրեանց կափուցին. զի մի եր-
բէք տեսցեն աչօք, և ականջօք


լուի

լուիցեն, և որոց ոչ լուեալ իմասցին. և դարձցին և բժշկեցից զնոսա։ Այս արդ յայտնի լիցի ձեզ. զի հեթանոսաց առաքեցաւ փրկութի՛ այս. նոքին և լուիցեն։ Այս եղև զերկամ մի բովանդակ իւրով վարձու. և ընդունէր զամենեսեան որ մտանէին առ նա։ Քարոզէր զարքայութի̅ն ա̅յ. և ուսուցանէր վասն տ̅ն յ̅ի ք̅ի անխափան ամենայն համարձակութեամբ։

### Պետրոսի Առաքելոյն 'ի չարեռջ։

Ո՞վ իցէ որ չարչարիցէ զձեզ, եթէ դուք բարւոյն նախանձաւորք լինիցիք. այլ թէ և չարչարիցիք ևս յաղագս արդարութեան երանելի էք. բայց յերկիւղէ ն̃ց մի՛ երկնչիցիք և մի՛ խռովեսջիք. այլ զտ̅ր զնոյն զք̅ս ս̅բ առնիջիք 'ի սիրտս ձեր։ Պատրաստ լիցէք տալ պատասխանի ա̅մի որ խնդրիցէ զբանն. որ է վ̅ս յուսոյն ձերոյ. այլ հեզութ̅բ և երկիւղիւ



ու-

Սնուցեք բարս քաղցունս․ զի ո
րով չարախօսիցեն զձէնջ, յամօթ
լինիցին որք բամբասեն զձեր բա
րուոք գնացս ՚ի ք̃ս։ Զի լաւ է
բարեգործիցն եթէ կամիցին ըստ
այ̃ կամացն չարչարիլ․ քան չարա
գործացն։ Զի և ք̃ս միանգամ
մեռաւ ի վ̃ր ձեր վասն մեղաց․
արդարն ՚ի վերայ անարդարոց․ զի
զձեզ մերձեցուսցէ առ ա̃ծ։
Մեռեալ է և մեռաւ մարմնով, այլ
կենդանի է հոգւով․ որով և ը
գւոցն որք էին ՚ի բանտին՝ եր
թեալ քարոզեաց երբեմն ապըս
տամբելոցն․ յորժամ ներէր նոցա
այ̃ երկայնմտութիւն․ յաւուրս նոյի
որ զտապանն կազմէր․ յորս նուա
զունք, այսինքն ոգիք իբրև ութ
ապրեցան ՚ի ջրոյն։

Պօղոսի առաքելոյն ՚ի թեսաղոնիկեցւոց"։

Վս̃ որոյ յիշեցուցանեմ քեզ ար
ծարծել զշնորհս այ̃ որ են
՚ի քեզ ՚ի ձեռնադրութենէ իմմէ․

 զի

զի ոչ ետ մեզ ա՟ծ ոգի վհատու-
թե՟ն. այլ զօրութե՟ն և սիրոյ և զգաս-
տութե՟ն: Մ՛ի՛ այսուհետև ամօթ
համարիցիս զվկայութի՟ւն տ՟ն մերոյ
և մ՛ի՛ զիս զկապեալս ն՟ր. այլ կը-
ցո՛րդ լեր չարչարանաց աւետարա-
նին ըստ զօրութե՟ն ա՟յ: Որ փրկե-
եաց զմեզ և կոչեաց 'ի կոչումն
ս՟բ. ըստ խուրում յառաջադրութե՟ն
և շնորհաց. որ տուա՛ւ մեզ 'ի ք՟ս
յ՟ս յառաջ ք՟ զժամանակին յաւի-
տենից: Այլ յայտնեցա՛ւ այժ-
միկ յերևիլ փրկչին մերոյ յ՟ի ք՟ի.
որ խափանեաց զմահ. և լուսա-
ւոր արար զկեանս և զանեղծու-
թիւնս 'ի ձեռն աւետարանին:
Որոյ եդայ ես քարոզ և առաքե՟լ
և վարդապետ հեթանոսաց. վ՟որոյ
և զայս չարչարանս կրեմ: Այլ
ոչ ինչ յամօթ համարիմ. քանզի
գիտեմ յո հաւատացեալ եմ և
հաստատեալ եմ. թէ կարօղ է զա-
ւանդն իմ պահել յօրն յայն:
Ունիցիս օրինակ ողջմտութեան

բանիցն զորս յինէն լուար հա_
ւատովք և սիրով որ ՚ի քս̃ յս̃։
Օ բարուոք աւանդն պահեսջիր
՚ի ձեռն հոգւոյն սբ̃յ ՚ի մեզ բնա
կելոյ։

Ալէլու"ալէ"։ Ամբարձան գետք
տր̃ և համբարձին զձայնս իւր_
եանց. և յարիցեն գետք ՚ի գը
նացս իւրեանց։

Աէ̃ Աւետարան ըստ Մատթէոսի։

Դուք էք աղ երկրի. ապա թէ
աղն անհամի, իւ՞ յաղեսցի.
ոչ իմիք ազդիցէ այնուհետև.
բայց եթէ ընկենուլ արտաքս և
կոխան լինել ՚ի մարդկանէ։
Դուք էք լոյս աշխարհի. ոչ կա
րէ քաղաք թաքչել որ ի վր̃ լերին
կայցէ. և ոչ լուցանեն ճրագ և
դնեն ընդ գրուանաւ. այլ ՚ի վր̃
աշտանակի և լոյս տայ ամ̃ցուն որ
՚ի տանն իցեն. այնպէս լուսաւո_
րեսցի լոյս ձեր առաջի մարդկան
որպէս զի տեսցեն զգործս ձեր

բարիս, եւ փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է։

Ապա սարկաւագն ասէ։

Եւս խաղաղու՟։ Օրհնեա՛ տէր։

Եւ վարդապետն տալով օրհնութիւն, առնու զգաւազանն եւ տայ 'ի ձեռն հրաժարելոյն ասելով։

Դու եւ զիններորդ աստիճան վարդապետութեանս. քանզի առեր հրաման 'ի տնէ մերմէ յսէ քսէ երթալ եւ քարոզել ընդ ամենայն ոլորտս տիեզերաց. եւ աւետրնել զառաջին եւ զվերջին գալուստ քի տն մերոյ։ Ըստ հրամանի մարգարէին թէ՝ ասա ցքաղաքդ յուդա, ահաւասիկ տր տր գայ զօրութեամբ եւ բազուկն տրութե իւրով։ Ասորոյ եւ մեք ամենեքեան հայցեմք յամենաբարին եւ քաջ հովուապետէն մերմէ. զի տացէ քեզ տր ընդարձակութիւն սրտի եւ ուժգնութի յամի առ 'ի պահպանութի հօտի տն յանձնե



ցե

ցելոյ ՚ի քեզ. ըստ հաճոյից տն̄
կառավարել և յարբունս հասա-
նի կատարելութեն քո հասուցա-
նել. և առաջի տն̄ գտանիլ քեզ
միակ առանց ամօթոյ և ծառայ
ազնուական: Յորմէ և զտասն քա-
ղաքին ունիլ իշխանութի վարձա-
տրեսցիս ՚ի քնէ այ̄ մերմէ ամէն:

ՄԷ Խաչին. Պահպանիչ:

Հայր Մեր.

Կատարեցաւ Իններորդ աստի-
ճանն Վարդապետութե:

Նոյն օծմանն Տասներորդ Աստիճանն
Վարդապետութեանս:

Պատ յառաջնոյն և օծմանին շհասարակաց
խորգ ժամուն. և սուրն, լցայք առաւօ-
տու. գինչև ՚ի նորատակչութեան: Նոյն
տղայ նորի Թծագոյն վարդապետն յաթոռ
և տուն շպատուութեան ժարօղն սուս-
րափեղտան: Նոյն ՚ի վեմ ժարօղին՝
օծմանին Տարրական Տէր:



Որ

Որ էն յէութեն որդի միշտ յէ-
էն՝ անճառնելի ծնընդոց
հայրաքական․ զոր խնդրումս հըն-
չեցին որդիքն որոտման․ և յայտ-
նեցին որդւոց մարդկան զծած-
կապէս խորհրդ․ Ծանին ա-
նըսկիզբն ի կուսէն սկըզբնաւո-
րեալ ի յերկրի մարմնով երևե-
ցաւ․ զոր տեսին քարոզք
բանին ճշմարտութեան․ և
ծանուցին տիեզերաց աստ-
ւած և մարդ։ Նոյնպէս բանն
ած միացաւ ի մարմնի անփոփոխ
գոլով յէութեան․ որում և-
ղեն ականատես որդիքն ո-
րոտման․ և ընդ հանուր քարո-
զեցին զբանն մարմնոյն եղեալ։
Այսօր երկնայնոցն վայր
իջեալ տոնէն ընդ հողեղէնքս․



Զալ

զյիշատակ սբ առաքելոցն քո
որք դասեցին ըղ մարգարէից ընդ
հրեշտակս · փառաւորելով
սբ երրորդութիւնն համագոյ։
Այսօր պարակից եղեալ վեր
նոցին ոգիք նոր սիոնի ի յիշա
տակի լեզուացն հրեղինաց · ո
րովք եղեն ըզգեցեալք ըզքո ·
փառաւորս։ Այսօր քահա
նայք և պաշտօնեայք սուրբ ե
կեղեցւոյ՝ տօնախմբեն զյիշա
տակ լուսոյն ծագողացն · ո
րովք մաքրեալք օծութեամբ սբ
հոգւոյն · փառաւոր։
Մարգարէից գերագոյն եւ մեծ
ի ծնունդս կանանց · որ ըղ
տնօրէնութիւն ած որդւոյն ի յար
գանդի ծանեար հոգւովն · աղա
չեալ զած վասն մանկանց ե
կեղեցւոյ։ Յորովայնէ յորովայն


եր

Երկրպագօղ քի · որ ըղ հօր
ածր մերուլ բնութե մերկերութ-
ցեր ի յորդանան՝ · ամղ: Կատա
րումն օրինաց և նախասկիզբն
շնորհաց՝ · որ հոգւոյն ի դըժոխս
քարոզեցեր ըզփըրկութիւն գա
լըստեամբըն քի՝ · ամղ:
Որմա ձըր շնորհօ ածային օ-
րհնեմ նացն · և հաստատութ
հաւատոյ ազգի մարդկան տէր
ու գրիգոր · ի մաղթողական ա-
ղօթս քո՝ հայցեա վասըն մեր ի
քրիստոսէ: Նորեալ յոյ քա
հանայապետ ձըր շնա ծրիտ · և
հովիւ հոգևոր բանաւոր հօտի
տէր մեր գրիգոր· խնաղ: Պըսակ
վայելչութե եկեղեցւոյ քրիստո
ծմր՝ · և առաջնորդ կենացըն
յաւիտենից տէր մեր գրիգոր՝ ·
ի մաղթողական աղօթս:

Ծայրին հաւատոյ հարցըն սըր-
բոց դաւա՛ծմ նուամն ․ ծագե-
ցաւ.քն ընդ հանուր լոյս հայա-
տանեայց մէ ուրստակէս ․ ան-
դադար բարեխօսեա վասն ան-
ձանց մերոց ։ Խանաւոր հօտին
քո ընտրեալ հովիւթմ քաջ ․ ի
հօրէն լուսոյ բըղխեալ շնոր-
հիլ բարի տր վըրթանէս ․ ան ։
Պսակեալդ ի վըկայս հօրըն մեծի
համածմ նման ․ քաջութէ զանօրի-
նաց խորտակեալ զպատկերն տր
մե յուսիկ ․ անդա ։
Որ յարմատոց հարցըն սըրբոց
մեզ գաւազան բըղխեցեր ․
ըղխասհակ մե հայրապետ հով-
ւել ըղհօտ քո քե ․ ։ Որ ըղխա-
ւարն անգիտութե հայաստան-
եայցըս լուծեր ․ զիմաստութե
ծագեալ ըղլոյն սովա որդւոց

Թորգոմայ։ Ո՛ր զհանդերձեալ
խորհուրդ քո՛ տէ՛ր տե՛սլեամբ
սրբո՛յն ծանուցեր՝ · յե՛ շատա-
կի՛ սորա ընկալցի՞ ըզ տօնողացս
աղաչա՛նս ։

Ի համբառնա՜լ բանին յերկինս
և ինը՝ սաի՛լ ը՜ աջմէ հօր · զուար-
ճացեա՛լ առաքելո՛ցն երկրպա-
գեցին · օրհնե՛լով ը՛զ հայր զանա-
քօղ բանին ։ Համահաւաքեա՜լ
գունդըք սրբոցն ի վերնատու-
նըն խորհըրդո՛յ · համբարձմամբ
աչաց սպասէի՛ն հոգո՛յն · օրհնե ։
Յանկարծահաս հընչմամբ հե-
ղեալ կենդանարար աղբիւր լու-
սոյ՝ · անմահակա՛ն կենաց լը-
սո՛վ զարդարեա՛լ · որք օրհնէի՛ն
ը՛զ հա՛յր զանաւքօղ հոգւո՛յն ։
Այսօր զուարճացան հրեշտակք
ի յե՛րկինս՝ · ընդունելո՛վ յերկ

րէ զմայր բանին և այ յիմանալի
խորանս անմահից: Այսօր ցըն
ծայան դասք առաքելոց՝ տեսա
նելով զտէրըն տերանց խոնար-
հեալ յաւանդումն ամենայնէ՝ հո
գւոյ ըմօր էկուսին: Այսօր և
մանկունք եկեղեցւոյ. ուրա՛
խութէ տօնեն յերկիր ընդ փո
խումըն կուսին յերուսաղէմ
քաղաքըն վերին:

Ընդ միածինն ի հօրէ և լոյս փա
ռաց ընդ նըմա. ձայնք հնչե-
ցին սանդարամետք անդընդոց
Տեսեալ ըզլոյս մեծ հայրապե-
տին գրիգորի. պատմէր ցընծու
թեամբ հաւատացեալ արքայինն:
Եկայք շինեցուք սուրբ ըզ
խորանըն լուսոյ. քանզի ի սմա
ծագեաց մեզ լոյսն ի հայաստան
աշխարհի:



Ալէ

## Ալէլու ալէ՛՛:

Գնացք գետոց ուրախ առնեն զքաղաքն այ. և մբ արար զյարկս իւր բարձրելոյն: Ած մեր ապաւէն և զօրութիւն. օգնական 'ի վշտ նեղուեց որք գտին զմեզ յոյժ:

## Ընթերցուած Յառաջին Թագ՛՛

Եւ սրբեաց զյեսսէ և զորդիս նորա և կոչեաց զնս 'ի զոհսն. և եղև 'ի մտանել նց, ետես զեղիաբ և ասէ, այլև առաջի տն օծեալ իւր: Եւ ասէ տր ցսամուէլ. մի հայիր ընդ տեսիլ դորա և մի 'ի մեծութիւն դորա. զի անարգեցի զդա: զի ոչ եթէ ոպ տեսանէ մարդ՝ տեսանիցէ Ած. զի մարդ հայի յերեսս, և Ած հայի 'ի սիրտս Եւ կոչեաց յեսսէ զամինադաբ և էանց առաջի սամուէլի և ասէ և ոչ զդա ընտրեաց տր: Եւ անցոյց յեսսէ զսամաա և ասէ, և ոչ զդա ընտրեաց տր: Եւ անցոյց յեսսէ զեօթանեսին որդիսն



իւր

իւր առաջի սամուէլի. և ասէ սա-
մուէլ ցյեսսէ, ոչ ընտրեաց 'ի
դոցանէ տ՟ր։ Եւ ասէ սամուէլ
ցյեսսէ, ա՞յդչափին մանկունքդ.
և ասէ, կայ միւս ևս փոքրիկ և
արածէ խաշն. և ասէ սամուէլ
ցյեսսէ, առաքեա՛ և ա՛ծ զնա.
զի ոչ բազմեսցուք մինչև 'ի գալ
ն՟ր այսր։ Եւ առաքեաց և էած
զնա. և նա էր կարմիր և աչօք
գեղեցիկ և բարուք տեսանելով
տ՟ն։ Եւ ասէ տ՟ր ցսամուէլ. ա-
րի՛ օծ զդա. զի դա՛ է բարի. և
էառ սամուէլ զեղջիւրն իւղոյ
և էօծ զնա 'ի մէջ եղբարց իւրոց.
և խաղաց հոգի տ՟ն ի վ՟ր դաւթի
յօրէ յայնմանէ և առ յապայ.

## Ընթերցուած Երրորդ Թագ"

Եւ էջ սադովկ քահանայ և նա-
թան մարգարէ և բանեա որդի
յովիդայեայ. և քերեթին և յով
ֆելեթին. և հեծուցին զսողոմոն
'ի ջորւոջն արքային դաւթի. և

 տա

տարան զնա 'ի գեհոն։ Այն էառ սադովկ զեղջ իւրն իւղոյ 'ի խորանէն. և էօծ զսողոմոն և եհար զփողն եղջերեայ. և ասէ ամ ժողովուրդն, կեցցէ արքայ սողոմոն Այն եւ ամ ժողովուրդն զհետ նր. և պար առեալ պարուք ուրախ լինէին մեծաւ ուրախութբ և հնչեաց երկիրն 'ի բարբառոյ նց Այն նստաւ սողոմոն յաթոռն արքայութե. և երկիր եպագ նմա արքայ յանկողնէ իւրմէ և ասաց. օրհնեալ է տր ած իէղի որ ետ ինձ այսօր 'ի զաւակէ իմմէ նստիլ յաթոռ իմ և աչք իմ տեսանեն։

### Ընթերցուած Երգոց երգոյն առ՛

Ե՛կ եղբօր որդի իմ. ելցուք յագարակս. ագցուք 'ի շէնս. կանխեսցուք յայգիս. տեսցուք եթէ ծաղկեալ իցէ որթն. եթէ ծաղկեալ իցէ նռնն. եթէ ծաղկեալ իցէ նռնենին. անդ տաց զստինս իմ քեզ. Մանրագորք ետուն

ղհոտս իւրեանց և առ դուրս ամ մրգաբերք։ Ո՛ նոր առ հնով զոր ես ընձ մայր իմ, պահեցի քեզ եղբօր որդի իմ։ Ո՞վ տայր քեզ եղբօր որդի իմ դիել զստինս մօր իմոյ։ Գտեալ արտաքոյ համբուրեցից զքեզ և ոչ անգոսնեսցես զիս։ Առեալ ածից զքեզ ՚ի տուն հօր իմոյ և ՚ի սենեակ յղացելոյն զիս։ Արբուցից քեզ ՚ի գինւոյ իւղագործաց յօշարակէ նռնենեց իմոց։ Ձախ նր ընդ գլխով իմով և աջ նորա պատեսցէ զինև։

## Ընթերցուած Եսայեայ Մարգ.

Մխիթարեցէ՛ք մխիթարեցէ՛ք զժողովուրդ իմ ասէ ած. քահանայք խօսեցարուք ՚ի սիրտ եղէմի և մխիթարեցէ՛ք զդա. զի լի եղև տառապանօք։ Թողեալ լիցին դմա մեղք իւր. զի ընկալաւ ՚ի ձեռանէ տն կրկին զհատուցումն մեղաց իւրոց. Ձայն բարբառոյ յանապատի. պատրաստ

արարէք զճանապարհս տն և ու-
ղիղ արարէք զշաւիղս այ մերոյ։
Ամենայն ձորք լցցին և ամենայն
բլուրք խոնարհեսցին. և եղիցին
ամ դժուարինք ՚ի դիւրինս. և ա-
ռապարք ՚ի դաշտս. և երևեսցին
փառք տն. և տեսցէ ամ մարմին
զփրկութին այ զի տր խօսեցաւ։
Ձայն որ ասէ գոչեա. և ասեմ
զինչ գոչեցից. գոչիր, զի ամ
մարմին խոտ է. և ամ փառք մար-
դոյ իբրև զծաղիկ խոտոյ. ցամա-
քեցաւ խոտն եւ թօթափեցաւ
ծաղիկն և բան տն մնայ յաւտն։
Ի՛ վերայ լերինդ բարձու ա-
ւետարանիչդ սիոնի. բարձրացո
զօրութեամբ զբարբառ քո աւե-
տարանիչդ երուսաղէմի. բարձրա-
ցուցէք և մի երկնչիք. ասել ցը
քաղաքսդ յուդայ. Ահաւասիկ
ած ձեր. ահաւասիկ տր տր գայ
զօրութեամբ և բազուկն
տրութե իւրով։

### Յակոբայ Առաքելոյն 'ի Կաթող՛՛.

Խոստովան եղերուք միմեանց զղ
մեղս. եւ աղօթս արարէք ի վր
միմեանց որպէս զի բժշկեսջիք.
Բազում ինչ կարօղ են աղօթք
արդարոյ յօգնականութի. Եղիա
մարդ էր իբրեւ զմեզ չարչարելի.
եւ յաղօթս եկաց եւ ոչ տեղեաց
անձրեւ յերկիր զերիս ամս եւ զվ
վեց ամիս. Դարձեալ եկաց
յաղօթս եւ ետուն երկինք զանձ
րեւ. եւ բուսոյց երկիր զպտուղ
իւր. Եղբարք իմ, եթէ ոք 'ի ձէնջ
մոլորեսցի 'ի ճշմարտութե ճանա
պարհէ անտի եւ դարձուսցէ զնա
ոք, գիտասցէ՝ զի որ դարձուցա
նէ զմեղաւորն 'ի մոլորութե ճա
նապարհէն իւրմէ, փրկեսցէ զո
գի իւր 'ի մահուանէ եւ ծածկես
ցէ զբազմութի մեղաց.

### Պօղոսի առաքելոյն 'ի Կորնթացւոց՛՛.

Գոհանամ զԱյ իմոյ վս ամէնուն
ձեր առաւել լեզուաւ խօսել.



այլ

այլ ՚ի մէջ եկեղեցւոյ կամիմ բանս
հինգ՝ մտօք խօսել . զի և զայլս
խրատեցից . քան զբազում բանս
լեզուօք: Եւ արդ զինչ իցէ եղ-
բարք . յորժամ ՚ի մի վայր ժողո-
վիցիք, իւրաքանչիւր ոք ՚ի ձէնջ
եթէ վարդապետութ՟ի ունիցի,
եթէ յայտնութ՟ի ունիցի, եթէ
լեզուս խօսիցէ, եթէ թարգմա-
նութիւնս ունիցի, ամենայնն ՚ի
շինուած լինիցի:

Պօղոսի առաքելոյն ՚ի Տիմօթէոսի Բ"

Զայս վկայութ՟ի դնեմ առաջի
ա՟յ և յ՟ի ք՟ի որ դատելոց է զկեն-
դանիս և զմեռեալս ՚ի յայտնու-
թ՟ե իւրում և յարքայութեան:
Եւ դու քարոզեա՛ զբանն . հա՛ս
ի՟վր ժամու և տարաժամու . յան-
դիմանեա՛ սաստեա՛ մխիթարեա՛
ա՟մ երկայնմտութ՟բ և վարդապե-
տութ՟բ : Քանզի եկեսցէ ժա-
մանակ, զի ողջմտութ՟ե վարդա-
պետութ՟ե ոչ անսայցեն . այլ ը՟ս
իւրաքանչիւր ցանկութ՟եցն կու-

 տես

տեսցեն իւրեանց վարդապետս
՚ի մարմաջելոյ լսելեաց իւրեանց.
և ՚ի ճշմարտութենէ անտի դարձու
ցանիցեն զլսելիս և յառասպելս
կործանեսցին։ Այլ դու զգօ՟
ւթ կաց․ յամն ճգնեաց․ ըզ
գործս աւետարանչի գործեա․
զպաշտօնդ քո կատարեալ կալ։
Զի ես այսուհետև նուիրեալ
եմ․ և ժամանակ դարձի իմոյ
հասեալ կայ․ զբարւոք պատե՟
րազմն պատերազմեցայ․ զընթացսն
կատարեցի․ զհաւատսն պահեցի։
Այսուհետև կայ և մնայ ինձ ար
դարութեն պսակն․ զոր հատուս
ցէ տէր յաւուր յայնմիկ արդար
դատաւորն։ Ոչ միայն ինձ, այլ
և ամենեցուն որք սիրեցին զյայտնու
թիւն նորա։

Ալէլ" ալէ"։ Հոգի քո սբ և բա
րի առաջնորդեսցէ ինձ ՚ի յերկր"։

ԱԷ Աւետարան ըստ Մատթէոսի

Եկեալ յս ՚ի կողմանս փի



լիպ

լիպպեայ կեսարիայն՝ հարցանէր զաշակերտսն և ասէր, զո՞ ոք ասեն զինէն մարդիկն թէ իցէ որդի մարդոյ։ Եւ նոքա ասեն, ոմն զյովհաննէս մկրտիչ. և այլք զեղիա. և կէսք զերեմիա. կամ զմի ոք՝ ի մարգարէիցն։ Ասէ ցն՟ս յ՟ս. իսկ դուք զո՞ ոք ասէք զինէն թէ իցեմ։ Պատասխանի ետ պետրոս և ասէ ցնա, դու ես ք՟ն որդի ա՟յ կենդանւոյ։ Պատասխանի ետ յ՟ս և ասէ ցնա, երանի է քեզ սիմօն որդի յօնանու. զի մարմին եւ արիւն ոչ յայտնեաց քեզ. այլ հայրն իմ որ յերկինսն է, Եւ ես քեզ ասեմ. զի դու ես վէմ. և ի վ՟ր այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ. և դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն։ Եւ տաց քեզ զփականս արքայութ՟ն երկնից. և զոր մի անգամ կապեսցես յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս. և զոր արձակիցես յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս։

 Ապ

Նոյն արքեպիսկոպոսն ասասցէ:

Նմին խաղաղու'' : Օրհնեա՛ տէր:

Նոյն վարդապետն տալով զօրհնութիւնն՝ ամենայն զգեստուցն և տայ 'ի ձեռն հրա- մայելոյն ասելով:

Ա՛ռ և զայս աստիճան կատարել
թուո՛յ տասն երորդին որ լնու-
լթի՜ չորեքտասան երորդին:
Քանզի առեր շնորհս հոգւոյն
սր՜յ՝ կատարել զձնգեսին մըտա-
նոր բանին 'ի մէջ եկեղեցւոյ զոր
առաջին կարգաւորէ: Նոյնքն՝
սաղմոսել. վարդապետել. և յայտ-
նել զբանս ա՜ծայինս. 'ի լեզուս
խօսիլ. և թարգմանութիւնս առ-
նել. առ 'ի շինութ՜ն եղբարց և 'ի
կատարումն եկեղեցւոյն ա՜յ: Նո՛
ինքն տ՜ր յ՜ս ա՜ծ որ կարօղն է զօ-
րացուցանել զքեզ և հաստատել
'ի դոյն, պահեսցէ քաղցրութ՜բ.
և ամրացուսցէ օրհնութ՜բ. և
ծաղկազարդեսցէ շնորհափայլու-
թ՜բ զմիտս և զզգայարանս քո.

զսիրտս և զխորհուրդս քո · ըղ-
բանս և զգործս քո · զմտաւս և
զելս քո ըստ ամրածածուկ ա-
ջոյն։ Այլ հզօր ձեռամբ և բարձր
բազկաւ հեղլով խղ̄ քո զշնորհս
ճառագայթից եօթնազան պայծա-
ռութե։ Որպ՛ ’ի դասս առաքելոցն
հրաբորբոք ծաւալմամբ հրազե-
նել զքեղ ընդ հրեղինացն շնոր-
հաբաշխութե։ Ո՛ մայլիլ · հրր՛-
ուխլ · զուարճանալ · ցնծալ · խայ-
տալից բերկրանօք յանլոպառ ու-
րախութիւ։ Ամպել զուղխս փափ-
կութեցն ոյ̄ · օրհնութե շնոր-
հիւս։ Անուամբ Հօր և Որդւոյ
և Հոգւոյն սբյ̄։ Որում փառք
յաւիտեանս ամէն ։

Այլ յետ այսորիկ՝ ընթեռնուն ինչն վար-
դապետքն շարականսն։

## Սբ̄ Աւետարանն ըստ Յոհաննու։

Իսկ մետասան աշակերտքն գնա-
ցին ’ի գալիլեա, ’ի լեառն ուր
ժա

ժամադիր եղև նոցա յս։ Իբրև տեսին զնա՝ երկիրպագին նմա․ և ոմանք երկուացան։ Եւ մատուցեալ յս խօսեցաւ ընդ նոսա և ասէ․ տուաւ ինձ իշխանութիւն յերկինս և յերկրի․ որպ առաքեաց զիս հայր, և ես առաքեմ զձեզ։ Գնացէ՛ք այսուհետև՝ աշակերտեցէ՛ք զամ հեթանոսս․ մկրտեցէ՛ք զնս յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սբյ․ Ուսուցէ՛ք նց պահել զամ զոր ինչ պատուիրեցի ձեզ։ և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ՚ի կատարած աշխարհի։

Եւ ապա կարդան զՍաղմոսն։

Քարոզ՝ Սբ Խաչիւ։

Աղօթք՝ Պահպանիչ։

Հայր Մր։

Օրինակ Ս. կայականի Յաւրա-
գոյն Իշխանութեան Գահաւորանի.
Օ՛ որ տայ մեծագոյն Սատարա-
պետոն աշակերտին իւրոյ. Որ ՚ի
գլխոյ ժամու ցուցցէ խրնդ-
րողացն.

Շարադրեալ Յօհան արք եպիսկոպոսէ
ծամբեցւոյ, և Յաւրագոյն Կաթուղիկէ
Սրբոյ Պաւղոսին Լուծքուծնի
՚ի վերայ եռբոնքինոյ.



Ն.Ե.Ն.ԼԳ.ՈՑ
իսկութիւն. Երրեակ
անձնաւորութիւն.

Անքակ միութիւն. Անքանակ սահ-
ման. Պատկեր անփոփոխ. Սերպ
անձեւական. և Տիպ անորակ.
Լոյս անսկիզբն. Գոյութիւն
աներղ. Կեանք անվախճան.
Իսկութիւն յաւէտ. Գիտօք յառ-
կացեալ. և բնութիւն միացեալ.

Կամք մի․ Ներգործութիւն նոյն
Տէրութիւն զոյգ։ Զօրութիւն
անկշիռ։ Իշխանութիւն հարթ.
Պատիւ համասար։ Կատարելութիւն
անպակաս։ Լիութիւն աննուազ։
Պարզութիւն անխառն։ Սրբու-
թիւն զուտ։ Քաղցրութիւն առանց
դառնութեան։ Բարութիւն առանց
չարութեան։ Ճառագայթ անշիջա-
նելի։ Ճշմարտութիւն անսուտ։
Ցնծութիւն անզրաւ։ Խորհուրդ
խոր։ Իմաստութիւն անբաւ։
Բարձրութիւն անբաղդատ։
Արքայութիւն անկէտ։ Մեծութիւն
անչափ։ Գերազանցութիւն անպար
փակ։ Հուպ անհեռի։ Բարձրեալ
անքննին։ Զօրութիւն ահեղ
Տէր արարածոց։ Թագաւոր երկնի
Պետ բարի։ Աջ ապաւինութեան
Պարիսպ ամրութեան։ Անզննին
յիմանալեաց։ Անքննին 'ի զգա-
լեաց։ Անհաս բանի։ Անճառ
լեզուի։ Արարիչ ամ գոյից։
Ստեղծիչ հրեշտակաց։ Հաստիչ

հողեղինաց: Յորոց անլռելի օր-
հներգութե պատուի և երկրպա-
գի և փառաւորի ամենասուրբ
Երրորդութի նոյն մարդասէր
և արարչագործ բնութե բարերա-
րին այ: Որ ըստ բարերար գոր-
ծոց իւրոց, Ըստ յառաջ շար-
ժեաց զստեղծումն էիցս և նա-
խախնամեաց ես: Այս նախ ինքն
եցոյց արարիչն զնախախնամութի
իւր: Զի որ ’ի զգալի արեգակ
նէս կրկին լուսափայլութիք ճա-
ռագայթեն և լուսաւորեն զմեզ,
նոյնպէս յԱծ պետական լուսոյն՝
այսինքն ’ի Հօրէ՝ կրկին լոյս,
Բանն Աստծ և Հոգին սբ՝ վարդա-
պետաբար լուսաւորէ զհաւատա-
ցեալս նախախնամութեն իւրով:
Երկրորդ՝ ’ի նոյն բանեն այ գի-
տութի իմաստութե հեղու առ.քե
րօբէսն. և շնորհք իմաստութե
և բարերարութեան:
Երրորդ նոյն ինքն, առաջին՝ միջին՝
և վերջին՝ երիցս երրեակ տար-

րոշեալ զդասս վերին ըստ մեծին Դիոնիսեայ, ուսուցանեն զմիմեանս։ Նոյնպէս և վարդապետք եկեղեցւոյ ուսուցանեն զաշակերտեալսն իւրեանց. և նոքա զժողովուրդսն նախախնամաբար։

Չորրորդ՝ զի զաստիճանն ետուր ՚ի նախահայրն մեր ադամ. որ մարգարէացաւ թէ՝ ահա այժմ այս ոսկր յոսկերաց իմոց, և մարմին ՚ի մարմնոյ իմոյ. որ նշանակէր ըզ մարգարէութի և զվարդապետութի շնորհօք սուրբ հոգւոյն։

Հինգերորդ՝ երևեցաւ շնորհս այս ՚ի նահապետն նոյ. որ վարդապետաբար խրատէր զորդիսն իւր պաշտել զած, և ոչ խառնակիլ ՚ի տոհմն կայենի.

Վեցերորդ՝ երևեցաւ շնորհս այս ՚ի վաղաներումն աշտարակին. որ գնացին իւրաքանչիւր յազգս իւրեանց, և ուսուցին վարդապետաբար զկրօնս և զլեզուս իւրեանց միմեանց.

Եօթներորդ երևեցաւ սոյն շը-
նորհս առ նահապետն աբրահամ.
որ բանական օրէնս ընկալաւ յա̄յ
և խրատեալ ուսուցանէր զորդիսն
իւր: Ութերորդ՝ պայծառացաւ
շնորհս այս՝ առ մեծ մարգարէն
Մովսէս. որ էառ զգաւազանն յա̄յ
և վարդապետ կոչեցաւ 'ի վ͞ր ժո-
ղովրդեան իւրոյ ազգին իս͞րլի.
և եօ աշակերտին իւրոյ յեսու-
ոսայ որդւոյ նաւեայ:
Իններորդ՝ երևեցաւ շնորհս այս
'ի հեղի քահանայն. որ խրատէր
զորդիսն իւր: Ն՟ յայլէս եհաս 'ի
նաթան յանդիմանօղն դաւթի.
Այն 'ի եզրաս մեծ դպիրն: Այն 'ի
յեսու ովսեդեկեանց քահանայն
մեծ. Այն 'ի նոմանէ մինչև 'ի ծերն
սիմոն: Այն մինչև 'ի մկրտիչն
Յովհաննէս կարապետն Ք͞ի.
որ քարոզէր յանապատին և ասէր
ապաշխարեցէ՛ք զի մերձեալ է ար-
քայութիւնն երկնից. և այլն:
Տասներորդ՝ Ճշմարտապէս երևեցաւ

Ճշմարիտ վրդպետն վարդապետաց
ի Տէրն մեր Յս Քս․ որպ և
հրամայեաց ասելով թէ՝ դուք կո-
չէք զիս վարդապետ և տր, և
բարւոք առնէք զի եմ իսկ․
Այլ եցոյց զվարդապետուի իւր
'ի քարոզելն իւրում՝ ժողովրդ-
եանն․ Այլ արար զառաքեալսն
իւր վարդապետս, յորժամ առա-
քեաց զնոսա քարոզել․
Մետասանեքդ՝ ընթացան առա-
քեալքն 'ի վիճակս իւրեանց, և
եղեն վարդապետք աշակերտացն
իւրեանց․ Քարոզեցին զանուն
ամենասուրբ Երրորդութեն․
փառաւորելով զՀայր և զՈրդի
և զամենասուրբ Հոգին․
Երկոտասանեքդ՝ պարգևեցաւ շը-
նորհս այս 'ի մբ Հայրպետն յա-
ռաջինս․ որ եղեն վարդապետք
եկեղեցւոյ և ուսուցին պաշտել
զած ածայինսք, և ատել զաշ-
խարհս աշխարհայնովք․ Որպ մբն
Ներսէս, և Գրիգոր ածաբանն

մեծն Աթանաս. և սբ՟ն Կիւրեղ.
և սբ՟ն Յօհան ոսկեբերանն. և
այլ հետևողք սոցա երկոտասան
վարդապետք.

Երեքտասաներ՟դ՝ շնորհս այս և
աստիճան վարդապետութեան բաշա-
փայլեաց ՚ի սբ՟յն Գրիգորէ Մերոյ
լուսաւորչէ. Քանզի առաջին
Թադէոս առեալ ՚ի տ՟նէ զշնորհս
զայս, որով լուսաւորեաց զՀայս,
և ետ գաւազան Թէոփիլէի. որ
՚ի կեսարիէ կապադովկացւոց.
Ետ նա Պ. Լևոնդիէ Պատ՟րգին
կեսարիոյ. Ետ նա ետ սրբոյն
Գրիգորի Մերոյ լուսաւորչին.
Ետ նա որդւոյ իւրոյ Արիստա
կէսի. Ետ նա եղբօր իւրոյ Վր
թանայ. Ետ նա որդւոյ իւրոյ
Յուսկայ. Նորին աշակերտ Փառ-
ներսեհ. Նորին աշակերտ Մեծն
Ներսէս. և նա ետ որդւոյ իւ-
րում Սահակայ.

Չորեքտասաներ՟դ՝ եկին եհաս շը-
նորհս այս և աստիճանս մինչև
՚ի

՚ի մեծն Մեսրօպ վարդապետն Հայոց ։ Որ էկլէսիաստիգական ճոխութե՟ և պերճութե՟ իշխանութե՟ և պատուօք փառաւորեցաւ ՚ի Հայոց և ՚ի յունաց։ Սորին աշակերտ Մովսէս քերթողն։ Սորին աշակերտ Դաւիթ անյաղթ փիլիսոփայն։ Սորին աշակերտ՝ Եղնակ ։ Սորին աշա՟ Մամբրէ։ Սորին աշակերտ Ղազար։ Սորին աշակերտ Պօղոս ։ Սորին աշա՟ Աբրահամ։ Սորին աշակերտ Յօհան գոմեցին։ Սորին աշակերտ Ներսէս մծուբեցին։ Սորին աշակերտ Յօհան օձնեցին։ Սորին աշակերտ Վահրամ։ Սորին աշա՟ Ներսէս կլայեցին ։ Սորին աշա՟ Գրիգոր տղայ կոչեցեալն։ Սորին աշակերտ՝ մեծ և երջանիկ րաբունպտն մխիթար․ որ մակ անուամբ Գօշ կոչեցաւ ։ Սա յայտնապէս ետ դաւաճան յօհաննէս վանականին ։ Սորին աշակերտ մեծն վարդան ։ Սորին աշա՟ Ներսէս։



Սո

Սորբին աշա'' եսայի նիջեցին ։
Սորբին աշա'' յօհան որոտնեցին ․
որ մակ անուամբ կախիկ ասի ։
Սորբին աշա'' գրիգոր տաւթեւա_
ցին ։ Սորբին աշակերտ՝ յօհան_
նէս արձիշեցին ։ Սորբին աշակ''
դանիէլ ձգնաւորին ։ Սորբին աշա՛
յօհաննէս համշեցին հրեղէն լե
ռուն ։ Սորբին աշա'' գրիգոր մե_
ռել յարոյցն ․ որ մա՛կ անուամբ
չորթան ասի ։ Սորբին աշակերտ
թորոս ։ Սորբին աշակերտ գրիգոր
տարօնեցին ։ Սորբին աշակերտ յօ_
հաննէս ․ որ մակ անուամբ շիրակ
ասի ․ Սորբին աշակերտ ղուկաս
կեղեցին ։ Սորբին աշակերտ՝ սրա
պիոն ուրհայեցին ․ որ եղև կա_
թողիկոս ՚ի սուրբ էջմիածին ։
Սորբին աշա' գրիգոր կեսարացին
Սորբին աշակերտ մովսէս սիւնե
ցին ․ որ եղև կթղիկոս ՚ի սուրբ
էջմիածին ։ Սորբին աշակ'' պետ_
րոս կարկառեցին ․ որ եղև կաթո
ղիկոս ՚ի սիս ։ Սորբին աշակերտ

մարտիրոս ընքշեցին։ ՝Նորին աշ՛՛
արխստագէս խարբերթցին։
՝Նորին աշա՛՛ զաքարիա վարագե
ցին։ ՝Նորին աշակերտ եղիազար
հռոմկլայեցին․ որ եղև կաթո
ղիկոս ՚ի սբ էջմիածին։ ՝Նորին
աշակերտ՝ սասընցի ածատուր․
որ մակ անուամբ Նարին ասի․ որ
եղև կաթողիկոս սիսայ։ ՝Նորին
աշակերտ՝ դանիէլ համթեցին։
՝Նորին աշա՛՛, Տէր Յօհան արք
Եպիսկոպոս յամթեցին։

Ես սոցին վերոգրեալ երջան
կացս յետին աշակերտ նուաստ
ծառայ տէր գէորգ վարդապետ
սիւնեցի․ և պատրիարգ կոստան
դնուպօլսոյ։ Որ առեալ զայս ի
խանութիւն ՚ի վերոգրեալ յոյժ
հեղահոգի արք եպիսկ և ծայրա
գոյն նուիրակէ սբյ գահին էջ
միածնի՝ յօհան ածաբան վարդա
պետէ համթեցւոյ, ՚ի մեծ մայրա
քաղաքին եւդոկիոյ, ՚ի սուրբ
Սարգիս նորաշէն եկեղեցին

 ՚ի

'ի մէջ բազմահանդէս ժողովըր-
դեան։ 'Ի Թուին ՌՃԾԸ, յամ-
սեանն յուլիսի ԻԷ։

Յորժամ սիրով ոք հոգւոյն և
ածային անձառ օրհնութեն և
անսահման նախախնամական գը-
թութեն յայտ լիցի երջանկազարդ-
եկեղեցականացդ դասուց։ Վն
զի յայտնաբանէ առաքեալն յա-
կոբոս թէ՝ ամ տուրք բարիք և
պարգևք կատարեալք, 'ի վերուստ
են իջեալք առ 'ի հօրէն լուսոյ։
Որով լուսաւորէ՝ զխաւարեալ
միտս մարդկան։ Ով 'ի մէջս հե-
ղինակի եկեղեցւոյն կարգապե-
տութիս, դիտումն ըստ նմանու-
թեցն տայ իմանալ ոբն դիոնեսի-
ոսէ բանն։ Քանզի յետ ածպե-
տականի զօրութեն շուրջ զնովաւ
դասք առաջին քահանայպետութե։
որք անընդմիջաբար ընդունին
զառ 'ի նմանէ հեղումն առատա-
գոյն պարգևաց, զուղղութի խո-
րագոյն տրդարութե, զծաւալումն

 ան

անձառ իմաստութե̄, և զբորբո
քումն անչափ սիրոյ նր̄ առ արա
րածական բնութիւն • Որոց երկ
րորդաբար առեալ ունականն մի
ջին կարգապետութեցն հոյլք ձա
ռագայթապէս փայլմամբ և աղ
նուականն ողմամբ • և տան զնոյն
շնորհաց զեղումն սորին դա
սուցն իմանալեաց՝ զարմացմամբ
իմն • առեալք հայեցումն գերբնա
կան և ըմկղբնազարդ պատճառն
ա̄մի • Աստի և զծագումն լուսոյ
իբր անօղատաբար ընդունողացն
չափու բաշխեն որդւոց մրդկն:
ոպ̄ վերջին և հուսկ յետին ան
սակ իմացական գթութեամբն և
զգայական ձեռնապարհու հասու
գոլ ձեռնաչեղելեացս մասամբ և ոչ
լրմամբ: Նաև արդ յայտնի է,
զի ըստ բաղդատութե երկնայնոցն
և մերս եկեղեցական կարգ ան
սանի • և նոյն նշոյլք երևին յերի
րանոր քահանայպետութես սահմա
նի դալոտեամբ որդւոյն միածնի



և

և միաւորիչ այ և մարդոյ՝ որով
և տենչումն եղև մեզ առ անհաս
տարակացեալ բնութենս . և զնոյն
առատ շնորհ վայելեցաք և վայե
լեմք աննուաղաբար։ Որոյ յաւ
ետագոյն 'ի քսէ տարածումն ըս
կըզբնաւորեալ մինչև ցայսօր ,
և ցյաւիտենիս ներգործի յամ
ազգ քրիստոնէից։ Վեհագունէ
անտի սկսեալ մինչև հուսկս և
յետնեալս վերոգրեալ։ Որ թե
լադրուէ հոգւոյն սբյ գոլով իմ
պատրիարգ կոստանդնուպօլսոյ,
'ի մէջ բազմամարդ հռչակաւոր
եկեղեցւոյս սբ ածածնի, ետու
զվարդպտական իշխանութիս զայս
հոգեծին որդեկին իմոյ և փոխա
նորդի Տէր Ադամ կուսակրօն
աբեղային։ Այսինքն, զՉորեք
տասան զիշխանութիւն։ որք 'ի սբց
երջանկաց՝ վարկանի ծայրագոյն
վարդապետական իշխանութիւն։
Որ 'ի տնէ Յսէ ընկալեալ եդի
իբրև զճրագ իվերայ աշտանակի



առ

առ ՚ի լուսաւորել զմիտ հաւա
տացելոց ճշմարիտ քարոզութբ·
սերմանել զբանն տն անդանդաղ
զօրութբ և անակնառութեամբ·
սաստել զոչեկեալսն ՚ի յուղղուն
յանդիմանել զյանդուգն· խրա
տել զողղայաքարոյսն· սիրով ըն
դունիլ զզղջացեալսն: զՃշմար
տութեան քարոզն ընդունօղք սո
րին, օրհնեալք լինին յազգէ յազգ
և յորդւոց յորդիս:

Շնորհք տն մերոյ ՅԻ ՔԻ
եղիցի ՚ի վր ճշմարտութե
հետևողացն
Ամէն:

Սահմանագրութիւն դաստիարակութեան նո-րընծայեալ մանկանց. որք հրաւիրելոց են յաստիճան քահանայութեան. Խրատք հայ-րական և աշխատանիք ։ Կարգեալ 'ի պէտս աստուածեղէն սիանեալ եկեղեցւոյ. Եւ 'ի գրեթէ ամէն հրաւիրէ.

# ԱՐԴ՝ ԸՍՏ ԿԱՐ

գի ժամանակին՝ պարտ է վարժել ըզ մանկունսն 'ի սնունդ-սրբութեան և իմաստութեան յերկիւղն այ ։ Որք իբրև զարդի ծնեալ մանկունս խոստումն՝ և անխար-դախ կաթինն փափագիցեն . զի՛ նովաւ աճիցեն 'ի փրկութիւն. Որք ճաշակեցին իցեն զքաղցրու-թիւնն այ ըստ մարգարէին ։ Որք մատիցեն 'ի վէմն կենդանի



և

և շինիցին տաճար հոգևոր յանա
րատ քահանայութի· մատուցանել
զհոգևոր պատարագն հաճոյ ՚ի
ձեռն տն̄ մերոյ յի̄ քի̄·
Յաղագս որոյ ասէ պօղոս, թէ
զորս յառաջագոյն ճանաչեաց,
զնոսին և կոչեաց· և զորս կոչեաց
զնոսին և հրաւիրեաց· և զորս հը
րաւիրեաց, զնոսին և արդարա
ցոյց· և զորս արդարացոյց, զնո
սին և փառաւորս արար·

Արդ՝ յետ կարգի Մկրտութե̄ն
վերստին ծննդեան լուսաւո
րութե̄ մբ̄ աւազանին՝ և որդէ
գրութեան հօրն երկնաւորի,
Ընդունին ծնօղքն զմանուկն
՚ի տունս իւրեանց, և դաստիարա
կեն զնա երկիւղի̄ն այ̄· որպէս
սպասաւոր և դաստիարակ որդէ
գրի հօրն երկնաւորի· Նաև յորժամ
արձակի լեզու մանկանն,
Նախ զօրհնութի̄ն այ̄ դիցեն ՚ի
բերան նր̄· որպ̄ ասէ մարգարէն
դաւիթ· Տր̄՝ եթէ զշրթունս իմ

բանսս, բերան իմ երգեսցէ զօր
հնութիւն քո։ Ա՛ւ դարձեալ թէ՝
'ի բերանոց մանկանց տղայոց հաս
տատեսցի օրհնութի։ Ո՛ր 'ի դա
լստեան տն յեհէմ, բացան բե
րանք ըստընդեայ մանկանցն քա
ղաքօրէից · որք ասէին բարձր
ձայնիւ եղանակաւ, ովսաննայ ·
օրհնեալ որ գաս յանուն տն թա
գաւոր իսէլի · օրհնութի որդւոյ
դաւթի։ Ո՛ր և տրն մեր յանդի
մանէր զհրէայսն որք ոչ գիտէին
զխորհուրդ իւրեն · և ասէ ցնոսա՝
չիցէ՞ ընթերցեալ ձեր, թէ 'ի բե
րանոց մանկանց տըղայոց հաստա
տեսցի օրհնութի։ Ո՛ իթէ դը
քա գիտունքդ և մեծամեծքդ լը
ռեսցեն, քարինքդ աղաղակեսցեն
Այսինքն սանդեայ տղայքն որք
զատինս մօր դիեն տակաւին, փո
խարէն գոհուե՝ օրհնութի ինձ
ստեղծողիս մատուցանեն։ Ա պր
պարտէ որ լեզու մանկանն նախ
յօրհնութիւնն այ արձակեսցի, և

 ապա

տա՛լ յայլ բանս և յիմաստս ։
Որպէս յամ առաւօտու՝ յոր
ժամ զարթնումք 'ի քնոյ, նախ
պարտ է մեզ զայս ասել, Տր̅ է
թէ զշրթունս բանաս, բերանիմ
երգեսցէ զօրհնութիւնս քո։
Որ ինքն է՝ զի լեզուք մեր՚ստեղ
ծողին հրամանաւն փակի և բա
նայ ։ Ու ի յերեկոյին ժամուն
մինչ յանկողին մտանեմք, խնդ
րեմք յայս ասելով, Դի՛ր Տր̅ պա
հապան բերանոյ իմոյ ։ և դուռն
ամուր շրթանց իմոց ։ Իսկ յառա
ւօտուն յորժամ զարթնումք 'ի
քնոյ, խնդրեմք հրաման յայս ասե
լով ։ Տր̅ եթէ զշրթունս բանաս՛՛
Որպէս և վասն այլ զգայարա
նացս աղաչեմք ասելով, Լո՛յս
տուր Տր̅ աչաց իմոց, զի մի՛ եր՛՛ ։
Եւ դարձեալ թէ՝ լսելի՛ արա ինձ
զցնծութի և զուրախութի ։ և ցն՛՛
Եւ այլ այսպիսիք ։ Վասն որոյ
պա՛րտ է որ լեզու մանկանն նախ
արձակեսցի յօրհնութիւն այ̅ ։

Երկրորդ՝ յորժամ զարգասցի հասակաւ՝ և իմանայ զա̃մ բան, ցուցանեն նմա զա̃մ շրջագայութիւն երկնից. և զընթացս լուսաւորացն. և զգեղազարդութիւն նց̃. և զփոփոխումն եղանակաց. և նոքօք ծանուցանել նմա զարարիչն նց̃. և զողորմութիւն գեղեցկութե արարչին: Ով̃ ասէ մարգարէն. Երկինք պատմեն զփառս ա̃յ. և"

Յլ̃ և ցուցանեն նմա զբողբոջումն բուսոց և տընկոց, և զբուրումն անուշահոտութե շուշանաց զանազան երփնափայլութեամբ. Եւ՝ սոքօք տան իմանալ զգեղեցկութի արարչին. որ̃ ասէ ինքն, թէ գեղեցկութի վայրի ընդ իս է. և սոքօք ծանուցել զարարիչն էից: Վ̃ որոյ ասէ պօղոս, թէ աներևոյթքն ա̃յ՝ երևելի արարածովքս իմացեալ տեսանին: Եւ այսպէս առ սակաւ սակաւ յա̃ծածանօթութիւն ածել զմանուկն՝ ստեղծողին իւրոյ:

Երրորդ՝ ուսուցանեն նմա զե-
րիս անձնաւորութ՟ի միոյ ա՟ծու-
թեն Հօր և Որդւոյ և Հոգւոյն
սրբոյ․ համագոյ ա՟ծութիւն․
մի բնութի՟․ մի կամք․ մի ներգոր
ծութի՟․ մի Թագաւոր ա՟մ երևե
լեաց և աներևութից ։

Չորրորդ՝ ուսուցանեն նմա ըղ
կարգաւորութի՟ ինն դասուց
հրեշտակացն ա՟մ որք են Աթոռք
Սերովբէք․ Քերովբէք․ Տէրու
թիւք․ Զօրութիւք․ Իշխանութիւք․
Պետք․ Հրեշտակապետք․ Հրեշ
տակք․ Նոյն ծանուցանեն նմա
զանկումն դիւաց ՚ի հրեշտակա-
կան դասուցն վ՟ս հպարտութե
և անձնադանդութե՟ իւրեանց։

Հինգերորդ՝ յայտնեն նմա զստեղ
ծումն նախնոյն որ ՚ի դրախտին․
և զանկումն ՚ի խաբէութենէ սա
տանայի յաղագս պտղոյն ճաշակ
ման։ Որով մահկանացուք եղել
անկաք յանմահականն և ՚ի փառա
զարդ դրախտէն յայս ցաւալից



և

և մաշկանացու երկիրս։

Վեցերորդ՝ ուսուցանեն նմա զմարդեղութի՟ որդւոյն ա՟յ, վ՟ն մերոյ փրկութե՟. սկսեալ յաւետեացն գաբրիելի առ կոյսն մարիամ ա՟ծածինն. և զծնունդն 'ի յայրին. և զիջումն բազմութե՟ զօրացն երկնաւորաց։ Զգալ մոգուցն, և զքառասնօրեայ գալուստն 'ի տաճարն. և զմկրտութի ա՟ծային յայտնութե՟ն. զբացումն երկնից, և զձայնն հայրական, և զիջումն աղաւնակերպ ս՟բ հոգւոյն իվ՟ն նր՟. և զհրաշագործութի՟ն ք՟ի և զգալն կամաւորաբար 'ի չարչարանս խաչին. և զսքանչելիսն որ եղեն 'ի խաչելութեն։ Զի երկիր շարժեցաւ. վէմք պատառեցան. և լուսաւորք երկնից խաւարեցան. գերեզմանք բացան. մեռեալք բազումք յարեան և մտին յերուսաղէմ. և վարագոյր տաճարին հերձաւ. Ասէ զթաղումն երեքօրեայ՝ որով դրժոխք



աւե

աւերեցան. հողմքն ազատեցան։
Նո՛ւ զամ̃ապէս յարութիւնն ի
հնքեալ գերեզմանէն։ Օ իջումն
հրեշտակաց. զերևումն խուղարկե֊
րից և աշակերտացն. զհամբար֊
ձումն յերկինս. զնստիլն ընդ աջ֊
մէ հօր. և զիջումն հոգւոյն սբ̃յ
'ի դասս առաքելոց. Օ այս ա̃մ
պարտ է տպաւորել 'ի միտս ման֊
կանն՝ ըստ կարգի տօնիցն
տէրունականաց։

Եօթնե̃րդ՝ պարտ է յայտնել նը֊
մա զխուսանդամ գալուստն քի̃
յերկնից. և զյարու̃ի ա̃մ մարդ֊
կան. և զահեղ դատաստանն.
զփառս արդարոցն, և զտանջանսն
մեղաւորաց։ Օ ի յայսմ ա̃մէ ծա֊
նիցէ մանուկն զսկիզբն արարա֊
ծոց, և զկատարած ճ̃իս։

Ութերորդ՝ ուսուցանեն զնա
երթալ յեկեղեցին. զի տեսա֊
նիցէ զարարողութիւն պատարա֊
գաց, և լուիցէ զձայն քահանային
և զընթերցումն գրոց, և զկալն


յա

յաղօթս. և զողբս և զարտասուս
ժողովրդեանն. Օ՛ի ուսանիցի
ըղձարդ քրիստոնէութեանս և՛ի նոյն
վարժիցի միշտ. Վա՛ն որոյ ասէ
մարգարէն, ուրախ եղէ ես ոյք
ասէին ցիս՝ ՚ի տուն տ̃ն երթի-
ցուք մեք։

Իններորդ՝ զմ̃մ չար բան՝ և ըղ-
գործ առնելն և գարշելն և նախա-
տելն՝ յայտնեն նմա թէ գարշե-
լի է ա̃յ. և սաստիւ լուեցուցանեն
զնա յիշոցաց և՛ի ստախօսութ̃է.
՚ի գողութ̃է և յայլ այնպիսեաց.
զի ՚ի սաստելոյն իմասցի զանար-
գութիւն մեղացն. և փութասցի
գործել զարդարութ̃ի. Վ̃ն որոյ
ասէ մարգարէն, մինչև ծանու-
ցեալ իցէ մանկանն զբարի կամ
զչար, անարգեսցէ զչարն՝ և ընտ-
րեսցէ զբարին. և համարձակի ա-
սել թէ՝ զմեղս ատեցի և անարգե-
ցի, և զօրէնս քո սիրեցի.

Տասներորդ՝ յիշեցուցանեն նմա
զօր մահուն և զժամ ոգեվարին

 և

և զպատերազմն դիւաց որ 'ի ճա
նապարհի հոգոյն հնդիկին մար
դոյն · և զտարակուսանսն մեղա
ւորացն որ 'ի կայանս հոգւոյն ·
և զմորմոքալից փոշէմանութ̅ի նոցա
մինչև յօր դատաստանին։ Ո՜ այս
ա̅մ միշտ արծարծեն ծնօղքն 'ի
միտս մանկանն · զի ներկեսցի
միաքն նր̅ յերկիւղն ա̅յ։ Վ̃որոյ
ասէ սողոմոն· մանուկ էի մըտա_
ւորժ, և հոգւոյ բարւոյ դիպեցայ
Եւ եսայի ասէ, մանուկ իմ մա
նուկ իմ 'ի միտ ածցէ։ Եւ թէ ոք
ասիցէ, զխորհուրդ մարթէ մանկանն
զայս ա̅մ ուսուցանել։ Յաղագս
որոյ ասէ երեմիաս առ ա̅ծ՝ թէ
մանուկ եմ ես և խօսիլ իսկ ոչ
գիտեմ։ Եւ ասէր առ նա ա̅ծ.
մի՛ ասեր թէ մանուկ եմ ես · զի
ես տաց զա̅մ բանս իմ 'ի բերան
քո· և առ ա̅մ յոր առաքեցից ըզ
քեզ՝ երթիցես , Այսպէս ամե
նայն մանկանց պա՛րտ է ուսուցա
նել զայս ա̅մ։

 Իսկ

Իսկ յետ եօթն աւուրն՝ տանին
զնա ծնօղքն նոր ընծայիւք
՚ի դուռն եկեղեցւոյն. և նուի-
րեն զնա այ՝ յանձնելով շնորհաց
սբ հոգւոյն։ Եւ տան զնա յընտ-
րեալ և յածահաճոյ քահանայ՝
յուսումն ածային գիտութեցն.
Եւ նա առեալ զմանուկն ոպ հո-
գևոր ծնօղ և նուիրօղ այ, ասէ,
այսպիսեաց է արքայութին այ
Եւ յորդորէ զսիրտ մանկանն ՚ի
սէր ածահաճոյ վարուց ըստ չա-
փոյ ընդունակութե և կարողութե
մանկանն։ Եւ յորժամ տեսանէ
թէ վարժեալ է յուսումն մանկու-
թե, ապա սկսանի ՚ի գերագոյն
գիտութիւն.

Նաև ուսուցանէ զմիտս նր ձըկ-
տիլ առ իմանալիսն. եթէ որպ
ծաւալին զեղմունք ճառագայ-
թից լուսափայլութեան ՚ի դասս
հրեշտակաց, և անտի յեկեղեցիս
յինն դաս աստիճանաց քահա-

 նայ

նայուեն․ Ս ի որպէս կրկին է մարդս՝ հոգի և մարմին, այսպէս և կրկին լուսով լուսաւորի․ այսինքն զգալի մարմնով՝ զգալի լուսով, և իմանալի հոգւովն՝ ընդ իմանալին յածային ճառագայթիցն․ և այն է կերակուր հոգւոյն․ որպէս ասէ մարգարէն, զուղխս վաւիկութեն քո՝ տացես ըմպել նց․ Սա՞ անտի կարծի հաճատն․ ով ասի, հաճատնէ լուսաճորութի մտաց․ հեղեալ յառաջին լուսոյն ՚ի բանական միտս մեր որով ճանաչեմք զած․ ըստայնմ եթէ՝ լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս․

Երկրորդ՝ ուսուցանէ նմա վերանալ մտօք ՚ի վեր քան զիմանալիսն․ ՚ի կայանս անճառելւոյն․ յանհասանելին եղականացս․ ՚ի ներքին կողմն վարագուրին․ ուր անեղական ածութինէ հայր և որդի և սբ հոգին․ Որոյ ասէ պօղոս․ զվերինն խորհեցարուք



ուր

ուր քս՟ նստի ընդ աջմէ այ՟։ Որ
պարտէ մեզ մնալ միշտ՝ ի նոյն տար
փումն բաղձման և փափագիլ հա
ճատոյ աջօք․ ըստայնմ, ոպ՟ փափա
գէ միեղջերու յաղբերս ջուրց,
այնպէս փափագէ անձն իմ առ
քեզ ած՟․ Ծարաւի է անձն իմ
առ քեզ ած՟ հզօր և կենդանի․
Երբ եկից երևեցայց երեսցդ այ՟
Եւ զի անմոռանելի է եղականացս
կայանն ածային, զի արդ մտօք
անդ մտանեմք․ այսինքն է՝ զի ՚ի
ձգիլն մեր մտօք առ ած՟, ինքն խո
նարհի առ մեզ ըստ անառակին․
ասէ, ընդառաջ եղև նմա հայրն։
Եւ արն՟ ասէ, ես և հայրն իմ
առնա եկեսցուք և օթևանս առ
նմա արասցուք։ Վրոյ՟ ասէ մար
գարէն, Ճանապարհ արարէք այն
մի որ նստի յերկնից երկինս ի՟
արևելս։ Հա՛ ՚ի վերանալն մեր
մտօք առ նա, ինքն խոնարհի առ
մեզ ոպ՟ ցուցաք։ Արդ երեք տե
սութի գոյ մարդոյս․ այսինքն՝

զգալի աչօք զերևելի արարած-
ոցս տեսանել. և իմանալի մտօք՝ զիմա
նալի կայանս հրեշտակաց. իսկ
հաւատոյ աչօք՝ զանեղական ա՟ծ
ութիւն։ Նա՛ այսպէս պարտ է սո
վորեցուցանել զմիտս մեր՝ յերկ
նեկուսի անճառելւոյն. Ս՟որոյ
ասէ, զվերինն խորհեցարուք։
Երրորդ՝ ուսուցանէ նմա բանիւ
զչորեքտասան աստիճանսն հա
ւատոյ որ է այսպէս։ Խոստովա
նիմ և հաւատամ ամենակատար
սրտիւ զՀայրն ա՟ծ՝ անեղ անծին
և անսկիզբն։ Որ յառաջընթեայն
գրեալ է։
Իսկ չորրորդ՝ ուսուցանէ ման
կանն զվարս ս՟բ ճգնաւորաց և
կուսանաց. և զանտանելի չարչա
րանս սրբոց մարտիրոսաց. յորմէ
սոսկանայ մարմին ա՟մ մարդկան.
և սարսափի ընդ համբերութիւն ն՟ց
Նա՛ արդ այս է կարգ. զի կամ 'ի
վեր զիմանալիսն քննել, և կամ
'ի վայր զչարչարանս ս՟ցն խոկալ.


և

և յայս երկոտեանս միայն լինիլ
երթևեկութի մտաց և խոկումն
սրտի։ Ապ ասէ առաքեալն պօղոս,
յիշեցէ՛ք զառաջնորդս ձեր որք
խօսեցան ընդ ձեզ զբանն այ ·
հայեցեալ ՚ի յելս գնացից նոցա,
նմանօղք եղերուք հաւատոց նց·
վորոյ յամ օր ընթեռնու եկեղե
ցին զչարչարանս նց։

Հինգերորդ՝ ուսուցանէ նմա
զամ որպիսութի խոստովանութ
է մահու չափ մեղացն, և ներքի
մասանց նոցին։ Վորոյ ասէ ած
մարգարէին եսայեաւ․ ասա՛ դու
նախ զանօրէնութիս քո զի արդա
րասցիս։ Զի որ պինդ ունի ըզ
խոստովանութին , անփորձ մնայ
նա յամ մեղաց։

Վեցերորդ՝ ուսուցանէ նմա ըզ
պահս․ զաղօթս․ զծնրադրու
թի․ զժրութի։ Զի այսու հալա
ծի ամ չար ՚ի մարդկանէ․ որպէս
ասէ տրն , թէ այս չար՝ ոչ իւիք
ելանէ ՚ի մարդոյ, եթէ ոչ պահօք
և

և աղօթիւք։ Նո՛յն դարձեալ ասէ
աղօթս արարէք զի մի՛ մտանիցէք
՚ի փորձութիւն։

Եօթներորդ՝ ուսուցանէ զպար-
կեշտութիւն կերակրոց և ըմպե-
լեաց և հանդերձից։ Զի մի՛ լիցի
որկրամոլ և արբեցող և պճնող։
Սրբոյ ասէ, բազմութիւն գինւոյ
և յղփութիւն ցորենոյ՝ եղև պատ-
ճառ կորստեան քեռ քոյ սոդոմ։
Նո՛յն մովսէս ասէ. գիրացաւ,
ստուարացաւ, լայնացաւ, եթող
զԱստուած զարարիչ իւր. և յետս
եկաց յԱստուծոյ փրկչէ իւրմէ։ Սրբոյ
ասեն սուրբ հարքն. եթէ կերակուր
կրօնաւորի՝ հաց և ջուր. և զայն
ևս սակաւ։ Իսկ վասն գինւոյ և
մսոյ զի՞ ևս ասացից՝ զոր չէ ար-
ժան բնաւին։

Ութերորդ՝ ուսուցանէ նմա զլ-
ռութիւն լեզուի և զառանձնա-
կացութիւն. զի մի՛ լիցի շատախօս և
շատաշրջիկ։ Սրբոյ ասէ մարգա-
րէն երեմիաս. եթէ նստի լռիկ

միայն 'ի տան իւրում. զի անձամբ
յանձն էառ զլուծ տն̃: Ասէ ա-
ռաքեալն յակոբոս ասէ, թէ կրօ-
նաւոր որ ոչ սանձահարեսցէ զլե-
զու իւր, այնպիսոյն վայրապար է
կրօնաւորութի նր̃: Ասէ վն̃ շատա-
շրջողացն ասեն սբ̃քն, թէ տունկ
փոփոխական՝ արմատ ոչ առնու.
այլ չորացեալ՝ լինի նիւթ հրոյ:
Իններորդ՝ ուսուցանէ ժուժկալ
լինել և համբերող յամ̃ առա-
քինութիս. 'ի քաղց, 'ի ծարաւ,
'ի մերկութի, 'ի գետնախշտութի,
'ի նեղութիւն, 'ի վիշտս, 'ի հրակ-
մունս, և յամ̃ պատերազմունս
դիւաց: Զի որ ոչ ունի ժուժ-
կալութի, յամ̃ բարեգործութե̃
վրիպէ զնա սատանայ և'ի չարն
արկանէ: Վն̃ որոյ ասէ պօղոս.
յորժամ կանգուն լինիս, զգոյշ
լեր գուցէ անկանիցիս: Ասէ սի-
րաք ասէ. յորժամ մատչիս ծա-
ռայել այ̃, պատրաստեա զանձն քո
ամ̃ փորձութե̃: Ասէ թէ ժուժկա-


լու

լութէ պատրաստ կայ, ոչ խռովի.
ըստ բանի մարգարէին.

Տանէրդ՝ ուսուցանէ զչորս առաքինութիւնս. որ ըստ մասանց հոգւոյն է. Այսինքն՝ զխոհեմութի, զարիութի, զողջախոհութի, և զարդարութի. Սա զվեց կողմունս նոցին 'ի բաց ընկենուլ յանձնէ. որ վեցեկի շարժմամբ կորուսանեն զոգիս մարդկան: Այսինքն է՝ խորամանկութիւն, ագիտութի, յանդգնութի, երկչոտութի, շռայլութի, բղջախոհութի, և ժլատութիւն անողորմութե. Ոի այս վեցեքինս են պատճառ ամենայն չարեաց. և որ զայսոսիկ հանէ յանձնէ՝, այլ բնաւ չար առնա ոչ կատարի:

Արդ զայս ամենայն պարտական է առաջնորդն ուսուցանել մանկանն՝ մինչև 'ի ժամանակ ձեռնադրութեանն.

Իսկ յորժամ հասանէ ՚ի յայր կատարեալ ՚ի չափ հասակի կատարմանն քի, և լինի երեսնամեայ, և մերձի ժամանակ ձեռնադրութեն նր ըստ ընտրութեն այ, Տեսանէ խոստովանահայրն նորա պէսպէս խորհրդով զպատրաստութիւն անձին նորա։

Նախ եթէ զոր ինչ ուսեալ է ՚ի մանկութէ, հաստատեալ է ՚ի նոյն յամ յօժարութէ սրտին թէ ոչ. Զի թէ ո՛չ է նոյն դիտաւորութեն զոր ուսաւ յառաջնորդէն, մի հրաժարեսցի ՚ի կոչումն. ըստ այնմ թէ, որ ոչ կամեսցի զօրհնութի հեռի եղիցի ՚ի նմանէ։

Երկրորդ՝ տեսանէ թէ գործով ՚ի նոյնն կայ, թէ բանիւ միայն է ուսեալ և ոչ գործով կատարել. Զի ասէ առաքեալն. ո՛չ եթէ լսելիք օրինացն արդարացեալ է, այլ առնելիք օրինացն։ Եւ տէրն ասէ. թէ որ ասէ և ոչ առնէ,



փոքր

փոքր կոչեսցի յարքայութեն երկ
նից ։ Իսկ որ արասցէ և ուսու_
ցէ, նա մեծ կոչեսցի։ Զի որ ու
նայն է 'ի գործոց բարեաց, թա_
փուրէ 'ի շնորհացն ա՟յ և անվարձ
յաւ՟ուր պսակին։

Երրորդ տեսանէ թէ՝ թէպէտ
և կատարեալ իցէ գործովք ըղ
նոյն, 'ի հարկէ առաջնորդին ա_
ռաքեալ իցէ զբարին, թէ 'ի յօժա
րումն սրտին։ Զի թէ 'ի հարկէ
իցէ արարեալ, յորժամ բարձցի
հարկն, թողու զգործն և փոխի
յայլ գործ. և անարգէ զկարգն։
Իսկ որ 'ի հարկէ առնէ զբարին
և ոչ 'ի սրտէ, ոչ առցէ զվարձս
յա՟յ։

Չորրորդ հարցանէ թէ կարօղ է
բնութիւնն տանել զայս սրբուն
վարս թէ ոչ։ Զի թէ ոչ է կա_
րող, թէպէտ և յօժարի և կամի,
յորժամ բնութիւնն գթոտ և սը
խալոտ իցէ, մի՛ մերձեսցի 'ի յայս
կարգ։ Վասն որոյ հարցանէ,

Թէ ըստ բնութե կամացն ունի
զօրբաւորութիւն, ապա մերձեսցի
յայս կարգ։ Իսկ եթէ 'ի հարկէ
կամացն ունի զօրբաւորութին,
մ' մերձեսցի յայս կարգ։ զի գու
ցէ յաղթահարեսցէ զնա հար'ի
բնութեն և անկցի և խառնեսցի
'ի դասս անկելոցն։ Այլ ասէ ոմն
թէ կարող է տասն հազարաւ կալ
ընդդէմ այնմ որ գայ ի վր̃ նորա
քսան հազարաւ։ ապա թէ ոչ հը
րեշտակութիւս առաքեսցէ առնա
ման 'ի խաղաղութն։ Ո ի վասն
որբաւորութ ոմն ասէ. թէ ամքն
ոչ են բաւական այդմ բանի.
այլ որոց ողբեալն է։

Խնդերդ հարցանէ թէ՝ թէ
պէտ և որբաւէր իցէ կամք և
բնութեմբ, կամի՞ յօժար սրտի
յանձն առնուլ զլուծ քահանայու
թեանն. թէ 'ի հարկէ կոչողայն
գայ յայս կարգ։ Արդ եթէ ոչ
կամեսցի մտանել ընդ ծանր լը
ծովս այս, մ' բռնադատեսցի.

ւմ ասէ պօղոս, իւրաքանչիւրոք՝ զիւր միտս հաճեսցի։

Վեցերորդ՝ հարցանէ թէ ՚ի մահացու կամ ՚ի ներելի մեղաց ունի՞ գործ ինչ սովորութեան՝ զոր ոչ կարէ հրաժարել. գուցէ յերկար ժամանակս կրթեալ իցէ ՚ի նոյն սխալմունս և ոչ կարէ թողուլ՝ ըստ այնմ թէ, կրթութիւն ՚ի բազում ժամանակաց՝ բնութի մակաստացական լինի։ Այնպիսին մի՛ իշխեսցէ մերձենալ ՚ի կարգ քահանայութե։

Եօթներորդ՝ հարցանէ թէ յամ̄ արատոյ կացեալ իցէ ազատ ՚ի ծննդենէ մինչև ցայսօր. մի՛ գուցէ սխալեալ իցէ և փոշեմանեալ. և ՚ի խոստովանութիւն ապաւինեալ թէ այնու արժանասցի քահանայութե, Պատասխանէ՛ այնպիսին. զի թէպէտ խոստովանութիւնն զմեղսն թողու, բայց քահանայ ոչ կարէ լինել. Որպ̃ յայտէ յանառակէն որ ասաց, հայր մեղայ



յեր

յերկինս և առաջի քո։ Իսկ թէ
պէտ հայրն գթացաւ 'ի նա և ե֊
թող զա͞մ մեղս ն͞ր , բայց ոչ ետ
հրաման պատարագելոյ․ այլ ասաց
այլոցն՝ դուք զենէք վասն դորա
զեզն պարարակ․ որ է պատարագն
ք͞ի ։ Ա͞որոյ թէ յառաջագոյն
սխալեալ իցէ, ոչ է արժան քահա
նայութե․ մի՛ ձեռնադրեսցի՝ զի ան
արժան է և ոչ առնու զիշխանու
թիւն քահանայութե։ Նոյնպէս և
թէ յետ ձեռնադրութե սխալես
ցի, այլ ոչ ունի իշխանութի կա
տարել զեօթն խորհուրդ եկեղե
ցւոյ․ այլ թէ ապաշխարեսցէ ,
ընդ ժողովրդեանն աղօթեսցէ․
Իսկ թէ լրբութ͞բ արասցէ ըղ
գործ քահանայութե անարժանգո
լով այնպիսին՝ զբարկութիւնն ա͞յ
բերէ 'ի վերայ ժողովրդեանն․ և
ինքն ը͞ ա͞ծասպանան դատեսցի․
ո͞պ ասէ ս͞բն Ներսէս․ Ո ի թէ
նաբաթ և աբիւթ՝ այնպիսի հրով
այրեցան , ո՞րչափ առաւել

 այժմ

այժմ ՚ի ճշմարիտ քահանայութեան.
որ կրելոց են ՚ի հանդերձեալն
զանշիջանելի հուրն յաւիտենից
անարժան քահանայքն:

Ութերորդ՝ ուսուցանէ նմա խոստովանահայրն՝ զա՟մ սխալմունսն ՚ի նոյն օրն խոստովանիլ և ոչ թողուլ ՚ի վաղիւն: Վ՟յ ասէ տէրն, թէ վաղիւն վ՟ս իւր հոգասցէ. շատ է աւուրն չար իւր: Ե՛ւ առանց խոստովանելոյ՝ ոչ յեկեղեցի մտանել, և ոչ յատեանն աղօթել: Զի քահանայն միջնորդ է ժողովրդեանն առ ա՟ծ. և յորժամ ինքն կարօտի այլ միջնորդի, ոչ կարէ այլոց միջնորդ լինիլ: Վ՟յ պարտ է զի նախ ինքն միջնորդաւն արժանասցի անընդմիջաբար աղօթել առ ա՟ծ, և ապա միջնորդել ժողովրդեանն ընդ ա՟յ: Զի որքան ինքն մեղս ունի, ոչ են ընդունելի աղօթքն ն՟ր. որպէս ասէ մարգարէն դաւիթ. զմեղս թէ տեսանէի ՚ի սրտի իմում


մի

մի թէ լուէր ինձ տր։ Վասն որոյ
պարտ է քահանային խոստովանութե
մերձիլ յամ խորհուրդս ոք եկե
ղեցւոյ։ Զի ի համարձակ լիցի ա
սել. ես յաղօթս կայի առ քեզ տր
'ի ժամանակ ընդունելի։

Իններորդ՝ խրատէ զնա զի լինի
հեզ՝ խոնարհ՝ հնազանդ՝ հան
դարտ՝ համբերօղ՝ երկայնամիտ՝
երկիւղած՝ ամօթխած. զի ընդու
նակ լիցի շնորհացն այ։ Որպէս ասէ
ած, ես յո՞ հանգեայց. եթէ ոչ
'ի հեզս և՛ի խոնարհս. և յայնո
սիկ որ դողան 'ի բանից իմոց։
Իսկ որ հպարտն է և բարկացօղ.
վրէժօղ և հակառակօղ. լիրբ և
յանդուգն և անզգամ, նա սա
տանայ է և ոչ քահանայ։ Որպէս
ասէ, որ ամբարտաւանից հակա
ռակ կայ. տայ շնորհս խո
նարհաց։

Տասնրդ՝ խրատէ զնա մի՛ վայրա
պար զուր անիծանել զի մի՛ առ
ինքն դարձցի անէծքն իւր։

 ըստ

Ըստ այնմ թէ՝ չիցէ անդ որդի ողջունի, ողջոյնն ձեր 'ի ձեզ դարձցի. այսպէս է և անէծքն։ Նմ պարտ է օրհնել զանիծիչն. սիրել զթշնամին. բարի առնել ատելեացն. աղօթել 'ի վր հալածչացն. զի այս է կատարումն բարեաց. Ըստ որոյ ասէ տրն. եղերուք կատարեալք, որպ և հայրն ձեր երկնաւոր կատարեալ է։ Օ այս ամ պարտ է որ խոստովանահայրն ուսուցանէ նմա որ քահանայանալն կամի։ Նաւ քն ընդ հօր և որբ հոգւոյն փառք յաւիտեանս ամէն։

## Վարդան Վարդապետի ասացեալ յաղագս քահանայութեան։

Դարձեալ ծանիր ով եղբարք. զի քահանայական աստիճանն՝ քան զամ խոնարհագոյն կարգ է, և քան զհրեշտակս և քան զամ որդիս

մարդկան վերնագոյն և բարձր է.
Օ՜ի հայր աշխարհի՝ և միջնորդ
և հաշտեցուցիչ այ լինի։ Որ
զաղօթս և զբարեգործութիւնս
մարդկան տանի առ ած. և մեղաց
թողութի խնդրէ յայ վն ժողո
վրդեանն. Սա քահանայ կոչի.
որ քաւիչ և սրբիչ է մեղաց.
Նա՛ կալով առաջի այ և միշտ յած
հայելով, կարենայ ասել թէ՝ յա-
ռաջագոյն տեսանէի զտր առաջի
իմ յամ ժամ։ Նա՛ թէ՝ աչք իմ
յամ ժամ առ տր են. Որպէս զի
միշտ պատրաստ լիցի առնուլ յայ
զբարերար պարգևսն և բերել՝ի
մարդիկս և յամ արարածս. յեր-
կինս և յերկիր, յօդ և՝ի ջուր.
Նա՛ զայս պարտ է գիտել. զի հա
կառակորդն սատանայ, ջանայ
զբազումս յանարժանիցն յօժարե
ցուցանել լինել քահանայ որք
չեն կարող և արժանի գնալոյ ը
երկնային ճանապարհն։ Նա չեն
ոք մտօք՝ հոգւով և մարմնով և

 խոր

խորհրդով. բանիւ և գործով՝ նը
մանիլ այ ճշմարիտ բարւոյն.
Կամ լինիլ հաւասար հրեշտակաց
զոր պահանջէ՛ աստիճանն քահա
նայութե. Մի թէ տգէտ է կամ
թերահաւատ, կամ ծոյլ է և քը
նոտ, կամ ագահէ և արծաթա
սէր, կամ որկրամոլ է և գինեսէր
կամ գէճ է և կնասէր, կամ ամ
բարտաւան է և հպարտ. կամ բա
կացող է և չարասէր. կամ չարա
յօժար է և ոխակալ. կամ մախա
ցօղ է և չարայուշ. կամ շատա
խօս է և դատարկաբան. կամ կա
տակող է և ծաղրածու. կամ վի
ճաբան է և քըսու. կամ աներ
կիւղ է և անյոյս. Ուստի և
այսպիսեացս ամենեցուն՝ յորդո
րումն քահանայութեն՝ ի տանջ է.
զի լինիցի նր ախտից և կամաց
կատարող և ոչ այ որ զոտ ն
պայծառ բարին է. Իսկ կամի
չարն՝ իւր գործակից և ընկեր
առնել զկորուսեալսն. զի լինիցին

նոքա և այլոց կորստեանն պատ-
ճառ. և կոյրք կուրաց առաջնորդք
և գայթակղեցուցիչք և վայր ար-
ժանաւորք: Ո՜վ լի զա՛ է քար կա-
պել 'ի պարանոց այնպիսեացն և
ընկենուլ 'ի խորս անդնդոց, քան
զյօժարիլն 'ի քահանայութիւն:
Իսկ գիտունքն և հաւատով մեծքն
որք մօք՝ հոգւով և մարմնով. ան-
բիծքն խորհրդով բանիւ և գոր-
ծով. անարատքն ժիրքն և արիքն
և ամ չարեաց ատեցօղքն զոր յի-
շեցաք: Դարձեալ՝ ածասէրքն
բարեսէրքն աղքատասէրքն ան-
ձանձիրքն 'ի յամ բարեգործութիս
յօժարքն և անուշահոտքն՝ հա-
մեստքն առ ամ ազգս և առ ամ
մարդիկք, այնպիսեացն յորդո-
րումն յայ է և 'ի հրեշտակաց:
Դարձ, մի՛ մատաղատունկ ասէ
առաքեալն. զի մի՛ անկանիցի յորո-
գայթ և 'ի դատաստանն սատանայի:
Ո՛ի որ առաքեալն մեր Թադէոս
առեալ և ուսեալ 'ի քնէ, ասէ 'ի


կա

կանոնն իւր, որ զանգէտն և զան
կատարն ձեռնադրէ քան զերե_
սուն ամս, ձեռնադրօղն և ձեռ_
նադրեալն լուծցի ՚ի կարգէն.
Այլ ՚ի սբ. գրիգորի կանոնացն
այսպ̃ ասի թէ, ՚ի ԺԵ տարին կար
գեն. և ապա դպիր օրհնեն: Այլ
՚ի քսան և հինգն՝ թէ պարկեշտ է
և բարի, սարկաւագ ձեռնադրեն
Այլ յերեսուն ամին թէ կատա_
րեալ է ամ̃ բարուք̃ ըստ գրեցե
լոյդ, ապա ՚ի քահանայութ̃ի կոչեն:
Իսկ զաբեղայութն որ յօժարի իւր
կամքն, ՚ի քսան ամին զջուխայն
հագնի. և ՚ի մոյ և ՚ի գլխոյ կորի:
Այլ յերեսուն ամին սքեմաւոր
օրհնեն որ է միակեց. և այն բա_
ւական է նմա. զի իմէր քան ըզ
բնութիւն և քան զհրեշտակս է կո
սութին: Այլ թէ տեսօղքն և գի
տօղքն վկայեն և աղաչեն զքահա
նայութ̃ի առնուլ, և նա յօժարի,
՚ի քառասուն ամին սարկաւագ
ձեռնադրեն, և ՚ի քառասուն և


հրն

հրնգին տան զքահանայութին ա-
ղաչանօք և պաղատանօք:
Մերջա̃մ և զայս գիտասջիք եղ
բայք. զի քահանայական բարձր
աստիճանն՝ յերկու հիման վերայ
կայանայ. որ է ս̃բ գրոց գիտու-
թիւնն և անձին սրբութիւնն:
Յայս երկուցս թէ մինն պակաս
լինի, ո՛չ կայանայ քահանայութին
իւր̃ այնպիսոյն ո̃պ չինուած ա-
ռանց հիման: Զի թէ գիտունէ
ս̃բ գրոց՝ և ոչ ունի զգործն,
կամ թէ ունի զգործն և ոչ ունի
զգիտութին, անարժանն է քահա-
նայութեն: Նաև թէ վասն փառաց
կամ վ̃ն արծաթոյ լինի քահանայ
ո՛չ է քահանայ. ո՛չ օրհնօղն է օրհ-
նօղ, և ո՛չ օրհնածն է օրհնած: և
բազում են վկայութք սորա 'ի ս̃բ
գրոց. Նա՛ և ահա՛ այսպիսեացն է
աստ̃ղ՝ թէ յորդորումն ն̃ց 'ի սա-
տանայէ է և ո՛չ 'ի հոգւոյն ս̃բյ:
Որ̃պ յայտնի ասէ ս̃բն բարսեղ 'ի
կանոնն իւր թէ, քահանայութի՝



է

է որ յայ է, և է որ 'ի սատանայէ։ Այլ ած բարին և բուն բարին և միշտ բարին՝ առաջնորդեսցէ մեզ 'ի բարին. և 'ի հաճոյն իւր և 'ի կատարեալն։ Այլ նմա հօր և որդւոյ և հոգւոյն սբյ փառք յա ւիտեանս ամէն։

'Ի գրոց հրամանաց խրատ գրե ցաւ 'ի սբ վերապիս. ձեռամբ ծա ռայ ծոյլին այ ամ քրիստոնէից վարդան վարդպտի. Որ և առա քեցի յամ երկիրս հայոց 'ի տնէ այ պատկառօղ եպիսկոպոսաց. որ 'ի ձեռնադրութե օրն կարդան յականջս ամցուն։ Այլև դպրոցական որ ղայոցն կարդան. որ գիտենան թէ ոգւոյ սոսկալի և զարհուրելի ա տեան կայ առաջի նր. և յորպիսի հրշտկական ձպհ մտեալ են և 'ի բարձրագոյն պաշտօն այ։ Ոչ և աշ խարհականաց մին դատաստան կայ մն իւր. իսկ քհնյից մն իւր և փասն այլոց դատաստան և ահեղ քննութի կայ առաջի 'ի քէ այ մերոյ։ Որում փառք յաւիտեանս յաւիտենից ամէն։

## 'Ի կանոնաց Սուրբ Նիկիացւոյն Ժողովոյն:

Ասէ մեր առաքեալն Թադէոս 'ի սկիզբն կանոնացն իւրոց։ Լինիցի եպսն անարատ. պարկեշտ. գիտուն. ուսուցանող։ Մի՛ արծաթասէր. մի՛ կերող և արբեցող. մի՛ զօշաքաղ. մի՛ հարկանող. մի՛ կաշառառու։ Այլ հանդարտ. զգաստեալ յա՟մ իրաց չարաց. ո՟պ ասաց եղբայրն մեր և գլխաւորն պօղոս։ Լինիցի օրինակ բարեաց գործոց. Տքնող. պահպանող. ատեցող զհանգիստ քնոյ. լինել օրինակ հօտին իւրոյ ա՟մ կարգաւորութեամբ։ Ընել ձեռնադրութի արժանաւորաց այնոցիկ, որ գիտուն և հաւատ են գրոց մ՟եց՝ և կարգաց եկեղեցւոյ՝ և օրինացն ա՟յ։ Ոչ դէտն խոտել 'իբաց և մի՛ ձեռնադրել ամենեւին։ զի տգիտութին խոտելի է ա՟յ քան զա՟մ չարութիւն։ Վ՟ս այսորիկ յայսմանէ առաւել պարտ է ըզգուշանալ քան յա՟մ



իրաց

իրաց չարաց ։

Որդ՝ եղև վերջ գրքոյս աստիճա-
նաց եկեղեցւոյ և վարդապետա-
կան իշխանութեան ։ Այլ՛ քն յուսոյն
մերոյ փառք յաւիտեանս ամէն ։

## Յիշատակարան Տպողին ։

Փառք և գոհութիւն և երկրպա-
գութիւն ամենասուրբ Երրորդութեան
և միոյ աստուածութեան Հօր և Որդւոյ և
Հոգւոյն սրբոյ ։ Որ իւր անհուն
ողորմութեամբն և մշտառատ գթու-
թեամբն ետ կարողութիւն մեզ տկա-
րացս՝ ՚ի յաւարտ ածել զառաջիկայ
գրքոյկս ձեռնադրութեան աստի-
ճանաց եկեղեցւոյ՝ և գաւազան
տալոյ վարդապետացն ՚ի փառս նոյն
ամենազօր Տէրութեան նորին , և ՚ի
պայծառութիւն ուղղափառ եկեղե-
ցւոյն իւրոյ սրբոյ ՚ի Հայաստան
աշխարհիս ։

՚Ի Հայրապետութեան Սրբոյն Էջ-
միածնի գերապայծառ գահին ,

Տեառն Մ՝ինասայ երիցս երա-
նեալ սրբազան Կաթուղիկոսի
ամենայն Հայոց։

Եւ ՚ի Պատրիարգութեան սրբոյն Երուսաղէմի
[illegible]ահոտ քաղաքի Տեառն Յա-
կոբայ սրբազան և աստուածաբան
վարդապետի։

՚Ի կոստանդնուպօլիս քաղաքի։
Հրամանաւ նորին սրբազն Պատ-
րիարգի Տեառն Գէորգայ աստուա-
ծաբան վարդապետի։

Որ սա՝ ըստ կանոնի մեզ առա-
քելոցն և հայրապետաց՝ նզովիւք
փակեաց դարձեալ՝ որ զոգէտսն
և զանարժանսն չձեռնադրեն ա-
մենևին քահանայ. և զարժանա-
ւորսն ձեռնադրեն առանց առնը-
լոյ և ոչ փող մի. զոր հաստատուն
պահեսցէ տէր աստուած մեր ամէն։

Ն՝որդ՝ եղև տպումն գրքոյս՝ կա-
մելովն վերոգրեալ սրբազն Պատրիար-
գին կոստան՛պօլ՛. Որ կամէր և ս



Թէ

[20"]

թէ իւր արդեամբք լինիցի որ և
'ի մէջն այնպէս եղաւ, բայց յետոյ
իրաւէկ լեալ մեծ փայու բարեպաշ
տօն մահտեսի գրիգորն, ըստ բա
րեսէր ըղձին իւրոյ, խնդրեաց 'ի
սրբազնէն որ ինքն տացէ զխարճն
առ 'ի լինել յիշատակ հոգւոյ իւրոյ.
Ընդ որ հաճեալ սրբազանն, ետ
հաւանութի ըստ սիրելոյն զնա
լինել այնպէս։

Արդ յիշեսջիք ուրեմն միով հայր
մերիւ զվերոգրեալ սրբազն Պատ
րիարգն կոստանդնուպօլսոյ. և
զծնօղսն նորին զեսային և զնազ
լուն։ Նաև ընդ նմին զմահտեսի
գրիգորն վերոգրել բարեպաշտօն.
և զծնօղսն նորին զմահտեսի մի
րիճանն և զմահտեսի գշխոյն. և
զկողակիցն զմահտեսի զարմանն.
և զորդեակն խոհեմ զտիրցու յա
կոբն. և զաներձագն զմահտեսի
ալէքսանն։ Յիշեսջիք և վերոգրե
լոցդ և զաշխատաւոր տըպօղս գը
քոյս այսորիկ. Նաև որք յիշէքդ՝ յի
շեալ լիջիք 'ի քն̃ այ̃ մերմէ ամէն.